



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



ԱՄԻՆ  
ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ  
Բ





Ա Ն Գ Ի Ր

1/10/04

Գ Պ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ե Ի

Հ Ի Ն Ս Ո Վ Ո Ր Ո Յ Թ Ն Ե Ր

Բ. Հ Ա Տ Ո Ր

Վ Ա Յ Ա Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Տ Է Ր Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն

معارف نظارت جلیله سنک ٤٥١ نومرولی و ١٨ تشرین ثانی سنه ١٣٢٠  
تاریخی رخصتیه طبع اولمشدر



Կ. ԳՈՒԻՍ

Տ Պ Ս Գ Ր Վ. Բ Ի Ն Ս Ս Ե Ս Ն

Սուրբան Համամ հասկի, Թիւ 14

1904

10 APR 2014

58492

31.99

S-46

13 APR 2011

38695-67

391.99 Կեղ-Վիլնյուսի  
 S-46 Կեղ/ի պրապրիակ  
 և անոթ

ՄԻ	25/10	75	
Օր	2/11	80	
10	2502	26/10	80
10	2569	26/10	80
2356		9/10	

ԱՐԶԱՆԱԳԻՐ

ՏԻԿԻՆ ՎԵՐԺԻՆԻ ՊԱՏՐԻԿ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ

(ՇՆՈՒՆԻ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ)

ԱՐՏԱՍՈՒԱԹՈՒՐԸ

Ի ՎՇՏԱՔԵԿ ՄՕՐԷ ԻԻՐՄԷ

ՏԻԿԻՆ ՀՈՒՓՍԻՄԷ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ի ՍՐՏԻՆ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՏՈՐԷ

յԱմուսնոյն իւրոյ ողբացեղոյ

Ի ՍԻՐԱՍՈՒՆ ԶԱԻԱԿԱՅՆ

ԵՒ

Ի ՏՐՏՄԱԹԱԵԻԾ ԵՂԲԱՐՅՆ ԵՒ ՔԵՔՑ ՀԱՐԱԶԱՏԱՅ

ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՄՈՌԱՅ ՍԻՐՈՅ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ



38695-67

# Ե Ղ Ե Ր Ք

Ի ԳՍՈՆՍՈՒԿՍԻՆՅՈՒՆՑՈՒՆՑՈՒՄ ՄՈՒՀՈՒՄ

## ՏԻԿԻՆ ՎԵՐԺԻՆԻ ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿ

Կը ծագէր ան, վարդամատն այն արեւ. ո՛վ, ո՛վ սաւառնաթեւ սուրացած ի վեր յերկին եւ արեւուն տեսեր է մատներ, վարդ - մատնէր, վարդեր ցանող եւ սիւող մատնէր:

\* \*

Կը ծագէր ան, ծայրակարմիրն այն արեւ. ո՛վ, վարդենին, արեւուն այդ կարմիր ծայրերէն կը ծլի, կարմիր կը ծլի, ծայրածիր կը ծաղկի, Ո՛հ, ամէն կեանք ո՛չ ապաքէն արեւէն լոյս կ'առնէ, եւ լոյսն է կեանք աշխարհի:

\* \*

Կը ծագէր ան, գեղանա՛ղն արեւ. ո՛վ, եթէ վարդենին կը ծլի, այլ ո՛վ կը նագէ ի վերեւ անոր եւ ի տես անոր ծիլ ծիլ բողբոջներուն գեղեցկութեանն ու անուշահոտութեանը, կը ձայնէ. « Խանդակաթ եմ ի սէր: Նայեա՛ց ինձ քոյր իմ հա՛րսն, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ, զի գլուխ իմ լցաւ ցօղով եւ վարսք իմ ի շաղից գիշերոյ»:

\* \*

Կը ծագէր ան, նշուլագե՛ղ արեւ, եւ ի լոյս կ'ողողէր վարդենին, որոյ լուսաշող թերթիկներուն շուքին տակ կը լսուէր սա անուշիկ ձէնիկը, երգերու երգերէն հատուկտիր ձայնիկ. « Մուծէք զիս ի տուն գինուոյ, կարգեցէք ի վերոյ իմ զսէր, հաստատեցէք զիս իւղով, կուտեցէք յիս խնձոր, զի խանդակաթ եմ եւ սիրով»:

Ձախ նորա ընդ գլխով իմով եւ աջ նորա պատեացէ զինեւ»:

\* \*

Եւ կը ծագէր ան, ճաճանչավա՛ռն արեւ, եւ երգերու երգէն կը լսուէր ի խնդ եւ ի թխնդ սրտի. « Արի, ե՛կ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ, զի ահա ձմեռն անց, անձրեւք անցին. ձայն տատրակի լսելի եղեւ. արի՛, ե՛կ մերձաւոր իմ, եկ դու աղաւնեակ իմ. երեւցո՛ւ ինձ զերեսս քո եւ լսելի արա ինձ զբարբառ քո»:

\* \*

Կը ծագէր ան, արե՛ւն պայծառ, կը ծագէր եւ ահա կը լսուարէր, զի ամպերը կը պատէին, դէզադէզ կը պարուրէին եւ կը սեւէին երկինքը, եւ վարդենին կը թօշնէր եւ ձէնիկն այս անգամ աղէկատուր էր. հեհե՛ծն էր աղէխարշ, երգերու երգերէն չէր այս հե՛ծք, այլ սրտի խորերէն էր, սրտի ամէնէն խորունկ խորշէն էր. « Անձն իմ ի վերայ քո հրեշտակ իմ, սրտիս սիրտկանն ու տիրական հոգեակս. ո՛ տայր ինձ զմահ քո. անձն իմ ի վերայ քո ո՛ լոյս աչացս, եւ փոխանակ քո կեանքդ իմոյ կենաց»: Եւ ելաց տունն վարդի — ԿԻՒԼՊԷՆԿ, զի ոչ եւս էր նա, որ մեղրն ու կաթն էր իւր սիրածիններուն ու սիրասուններուն:

\* \*

Ոչ եւս էր արեւ եւ կը մթագնէր երկին. եւ աւպերու ցօղեր կը կաթկըթէին, կ'ուռուէր աստուածատունի բուրաստանը, արցունքներով կ'ուռուէր, զի կը թարչամէր վարդին ծիլը, մատաղատունին ու մատղաշ մանուկն այն ծաղիկ — դարաստանին ՄԱՆՈՒԿԵՍՆ: « Եւ ելաց Իսրայէլ լալիւն մե՛ծ»:

\* \*

Բայց է՛ր կոծել, է՛ր այրիլ ու մրկիլ, մարմիրը եւ մորմոքիլ, կարէվէր եւ հոգեվարք վշտահարիլ, եղբրամայրերու ջայլն է, ողբն է որ կը լսուի. հիներու հին հասուկտիր ողբերգներէն մին, մայրն է որ կը մրմնջէ հե՛ծկտալով:

«Կրակ ընկեր այգիներու պարերը,  
երբաք, ըսեք, բող չի բերեն մարերը,  
Որուն գառն է մեռեր, որուն ընկերը :

«Եկուր գառնուկ, եկու, ո՛ւր ես մնացեր.  
Ել ի բարձր լեռը, դուրս ես մնացեր.  
Չի կայ գալու համբայ, հո՛ս ես մնացեր»:

**ԵՂԵՐԱՄԱՐՔ**

— Չե մեռեր քո որդին, չե մեռեր,  
Իջեր պախնան, ի վար գնացեր.  
Վարդ է հազեր, դրեր գլխուն,  
Քունն է արեւ անուռ հոսուն»:

Եւ անա մայրն է որ պատասխաններու ամէնէն  
հիանալին, ամէնէն յուսահատականը, թէ եւ ամէնէն ա-  
ւելի ճշմարիտը, ամենակարողը կ'արտասանէ լա-  
ւազին .

«Ես ա՛լ չեմ երբար վարդեմունն սակր,  
Կոտեր է մասանուս գոհարէ ակր.  
Ի՞նչ Տիժար կուլիմի ս՛հ, մահուան իսակր»:

Եւ անա արեւ կը ծագէր, այնքան պայծառ, այն-  
քան նշուլագեղ եւ լուսացնցուղ, ոյր նմանակը հա-  
զուադէպ է միշտ: Կիւլպէնկ-Մանուկեան սիրածիններ  
ու սիրատուններ իրարու կը փարին, իրարու սիրտ կը  
լնուն մեղրով ու լուղով — կաթոգլին սիրով, իրարու  
թագ ու պսակ կը համբուրեն, խինդ եւ ցինձ առ հա-  
սարակ շուրջանակի տիրած ու տիրապետած, վասն զի  
սա ձէնիկը, սա անտրտմախառն ուրախութեան, սիտ-  
փութեան զերգմայլ միթիթարականը կը լսուէր, կը յեղ-  
յեղուէր, եւ սրտերու խորերու եւ խորչերու մէջ կ'ար-  
ձագանգէր .

«ԵՍ ՆՆՁԵՄ, ԱՅԼ ՍԻՐՏ ԻՄ ԱՐ ՈՒՆ ԿՍՅ»:

Վերժինին անուշիկ ձէնիկն էր այն:

Տունն Կիւլպէնկ-Մանուկեան օրհնեցէք զՏէր:

**ԱՌ ԸՆԹԵՐՅՈՂՍ**



«Անգիր» ը ընթերցող մը հարցուց մեկու մը, քե  
ի՞նչ կը մտածէ :

— Կը մտածեմ քե ինչո՞ւ մարդ եմ :

«Երբ երկհասուր «Անգիր» ը ընթերցած ըլլայիր,  
չէիր մտածեր քե ինչո՞ւ մարդ ես » :

Այս է այս գրքին յառաջաբանն ու վերջա-  
բանը :



## Խ Օ Ս Ք Մ Ը

«Այլ ինձ բուհ, որպէս այժմ եւ առ հինսն մե-  
րազնեաց լեալ անսիրելութիւն իմաստութեան եւ եր-  
գարանաց բանաւորաց» :

Ա. ԳԻՐԳ. Գ. :

Խորենացին գրեթէ 1500 տարի առաջ ինչ որ կը  
գանգատէր, նոյնը այսօր իսկ արժան է կրկնել, վասն  
զի ինչպէս հին ատեն, Խորենացիէն յառաջ, եւ յետոյ  
շարունակաբար մինչեւ ցայսօր, եղած են եւ գտնուած են  
այո՛, ամբաւ զրոյցներու կամ վէպերու, այլ եւ այլ հա-  
տակտորներու անգիր աւանդներ, այլ զանոնք իմաստա-  
սիրելու փոյթը չէ՛ տեսնուած եւ ոչ քաջալերութիւն  
առ հասնաւաքս եւ իմաստասիրազս, եթէ գտնուած են  
ատեն ատեն :

Ահա այս իսկ է պատճառ որ այս Երկրորդ «Ան-  
գիր Դպրութիւն» դժուարաւ իմն այժմ լոյս կը տեսնէ  
կիսատ գրեթէ, եւ Երրորդ «Անգիր» ն եւս անտիպ  
դեռ, առ ի չգոյէ իմաստասէր բարերարութեան :

Անգիր ժողովուրդ եղած է այո՛, այլ Անգիր Դըպ-  
րութիւն չունեցող ժողովուրդ չէ գտնուած երբէք : Եւ  
այն ժողովրդեան, որ գոնէ անգիրն ի գիր արձա-  
նադրելու շնորհքը չէ ունեցած, վա՛յ եւ հազար եղուկ :





ԱՆՔԻՐ ԴՊՐՈՒԹԻՒՆ



Կ Ա Ղ Ա Ն Դ

ԿԱՂԱՆԴ յունական բառ է, այսինքն Յոյն Քաղեո բառէն ծագած է, որ հայերէն կը թարգմանուի կղզի, ուրեմն Կաղանդն է կոչուան, վասն զի հեթանոսութեան ժամանակ քուրմերն ի պաշտօն աստուածներու կը կոչէին ժողովուրդն ամէն ամսոյ առաջին օրն, ուրեմն ասամուան էր մեհնական տօն, այսինքն ամսամտի այդ օրն էր օր հանդիսական: Մեհեաններն ու բազմներ շքեղապէս կը զարդարուէին եւ ժողովուրդն առ հասարակ հաւաքուելով, զիրար կը շնորհաւորէին եւ իրարու բարեմաղթու եւ նուիրաբաշխ կ'ըլլային: Հրեաներն անգամ որք աստուածապաշտ էին, ամսամտի օրն անդէն իսկ կը լսէին նուիրական փողերու ձայնը, զորս կը հնչեցնէին քահանաներն կամ Ղեւտացիները: Թուրք իսրայելացիներն ի լուր ձայնի այս նուիրական փողերու կը փութային գումարուիլ, որպէս Մովսէս պատուիրած էր, եւ փառաբանական երգերով կը հոգակէին

Աստուծոյ փառքն ու բարեբար զօրութիւնը : Յարդ իսկ Հրեաներն իրենց Սինակոկաներուն մէջ Դաւթի սա նշանաւոր Սաղմոսը կ'երգեն ամսամտի օրն՝ ըստ լուսնական շրջանի . «Տնծացէք առ Աստուած . օգնական է մեր . աղաղակեցէք առ Աստուած ի ձայն յնծութեան : Փողս հարէք ի գլուխս ամսոց , յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց : Հրաման է այս Իսրայելի եւ իրաւունք են Աստուծոյ Յակովբայ :

Այլ որքան որ ամէն ամսամտի օրուան մէջ այս հանգէտները կը կատարուէին , այլ մեծագոյն հանդէսներն ու ճոխագոյն խորխոճանութիւնները վերապահուած էին տարեմտի օրուան , զոր մանաւանդ Հայերն աշխարհախումբ կը տօնէին Անանոր անուանելով զայն :

Ո՞ր փամանակէն սկսած է Կաղանդը . — Հայերն միաձայն կը պնդեն թէ Նոյ նահապետէն է աւանդուած , եւ թէ Վարդավառի տօնն էր « Ամանօր Հայոց » , որ յետոյ ի փառս Անահիտի փոխուեցաւ մննկնական մեծտօնի : Հազարաւոր տարիներէ ի վեր քանի՛ քանի հազարաւոր բերաններէ սա հագներգն արձակուեցաւ , հագներգ՝ զոր եղանակեցին հին գուսաններն ի ձայն բամբուռն եւ քնարի . «Ո՞ տայր ինձ զժուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի , զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց . . . » :

Այլ Ամանորի այս տօն քրիստոնէական դարերու մէջ տակաւ առ տակաւ պիտի դադրէր , եւ Նաւասարդ ոչ եւս պիտի յիշուէր , զի նոր մը , յունական Կաղանդն ու չուովնական Յունուարն այլ եւս պիտի գործածուէին : Քրիստոնէական հրաշափառ տօններն պիտի փոփոխէին մեր հին տումարն ու տարեմտի շրջանը : Սակայն որքան որ այս փոփոխութիւնն անհրաժեշտ եղաւ , այլ Ա-

մանորի հանդիսական սովորութիւններն ու չնորհաւորական աւանդութիւններ մինչեւ ցարդ մնացին ու կը մընան մեր ժողովրդեան մէջ , ի ձեռն մեր մամիկներուն եւ պապիկներուն , գուսաններուն եւ աշուղներուն :

Կաղանդի երեկոյին պատրաստ է սեղանն , ուր ոչ թէ մրայն չոր պտուղներ , ամբանէ պատրաստուած , խնձոր , տանձ ու չոր խաղող , նոյնպէս նուշ , ընկուղ , կաղին ու չամիչ եւ այլն կան , այլեւ տեսակ տեսակ անուշապուրներ եւ բաստեղներ , իսկ օճախի քովտի կախուած կան երկար բարակ շարոցներ , որք համեմուած են մեղրով կամ ռուպով եւ ընկուղի ծեծածով ալի բախտուն շինուած : Այլ որքան որ այս համեմներ , այս չոր պտուղներ կան , սակայն կարան է Կաղանդի փառքն ու փայլը : Կաթայի խմորն , եթէ օրն է ուտիք , զի Աստուածայայնութեանն ու Զատիկին եւս կաթայ շինելու սովորութիւն կայ , կաթով կը շաղուի , իսկ եթէ պահքի օր է , որպէս Կաղանդինը , մեղրով կը շաղուի եւ կ'ըսուի խորխո կամ խորխոխ : Կաթայի երեսին վրայ կը նկարուին տեսակ տեսակ կենդանիներու եւ թռչուններու ձեւեր եւ շատ անգամ տաճարներու նկարներ : Կաթայի ձեւն է կլորակ , երբեմն խաչաձեւ , ձուաձեւ , կռանկիւնի կամ քառակուսի : Ունի փոսիկներ , որոց մէջ երեխէք , մանկիկ տղեկներ ցորենի հատիկներ դնելով կը պարեն , եւ յետոյ տանիքներու վրայ դէս ու դէն ձգելով կ'սպասեն որ թռչնիկներ դան , կտցեն եւ ռուսեն . այս կաղանդչէք է մեր մանրիկներու կողմէն Աստուծոյ մանրիկ թռչուն արարածներուն . ո՞ մանկական միամտութիւն , սո՛ւրբ մանկութիւն , ողջո՞յն քեզ (1) :

(1) Երգիչիկանի մէջ կարան է բառակուսի նկանակ մը խորտուելով

Կաղանդի սեղանին վրայ կը վառուին ժամէն գնուած ու բերուած մոմիկներ, ըստ թուոյ ընտանիքի մէն մի անդամին: Յետոյ այդ մոմերուն տկուկները կը տա-  
րուին եւ կը փակցուին աղբիւրներու վրայ, որպէս զի այդ աղբիւրներ այսպէս կաղանդուելով ամբողջ տա-  
րուոյն մէջ հոսուն եւ անուշիկ ըլլան: Մամիկին մոմն է միշտ նշխուն, զոր մարելու համար տան փոքրիկները ձաւարի ու ցորենի հատեր կը նետեն հեռուէն, զորս պատժելու համար, մամն է որ գաւազանով կը յարձա-  
կի, բայց անոնք կը փախչին ու կը պահուրտին եւ վերստին յանկարծ կ'երեւին: Այլ կը ճարահատի մամը, գոգնոցը կը բանայ, կ'աղաչէ ու կը պաղատի որ մոմիկը չմարեն ու գան առնուն իրենց կաղանդչէքը: Պապուկն այն ատեն ժամէն գալով կը տեսնէ այս տեսարանը, եւ անխուով կ'ողջունէ սուենն ու անեցիքը՝ ըսելով. «Շնորհաւոր նոր տարի եւ բարի Կաղանդ»: Բոլոր անեցիկները կարգ առ կարգ գալով կը համբուրեն պապուկին աջը, եւ սա նոցա աչերէն կամ ճակատներէն պաչիկ կ'առ-  
նու, իսկ պղտիկներն իրենց վախէն, զի մամիկն իրենց պապուն քով կեցած է գաւազանով, հեռուն կը մնան: Այլ պապուկն իսկոյն մամէն առնելով գաւազանը եւ ջարդ ու բուրդ ընելէ յետոյ երբ կը նետէ զայն, պղդ-

նախուած. Կառն, բժամատի հաստուկեամբ, զրչի մը երկայնու. թեամբ Լողիկ — վազրախայ. Գունիկ՝ կիտաբուրակ զունտ մը խմո-  
րի. Կոթայի այս տեսակներ երկու մաս ունին: միջուկը՝ խորիզ, կտրա-  
գոգ՝ շաղուած, եձէ ուտիք է, մեղրով՝ եձէ ուտիք չէ: Ճաշ, կամայի մէկ ուրիշ տեսակն է. որոյ մէջ խորիզ չկայ: Տղեկներն կոթայի իւրոտ տե-  
սակներն խման երեկոյին կ'ուտեն ժամարարի «Առէք կէրէք» ըսելէ յե-  
տոյ, ինչպէս Զատիկ խժուկին՝ կ'ուտեն հաւկիթ:

տիկներն ահա ցնծազին աղաղակներով կը վազեն կը բուրդին մամին շուրջ եւ գոգնոցը կը պարպեն, պապին ու մամին աջը համբուրելով եւ փոխադարձ պաչիկ տալով անոնց:

\* \* \*

Իսկ Կաղանդչէքի արարողութիւնը անէ դուրս՝ այս է. փոքրիկներ խումբ առ խումբ փողոցներու մէջ նախ կը պարեն, եթէ աղջիկներ են, շորուր պարը, եթէ մանչ են, ծափիկը<sup>(1)</sup>, ապա կ'երգեն Կաղանդի տաղը, որ ամէն տեղ միօրինակ չէ:

Ալիլա, ալիլա

«Ասօր կախ<sup>(2)</sup> է, վաղն է Կալանդ,  
Կախանն եօ՞ր է, վաղն է Կալանդ, ալիլա:  
Շարոց, բասեղ, չիր<sup>(3)</sup> ու հեվիեֆ<sup>(4)</sup>,  
Գոգնոց բացի, գոգով սըւեֆ, ալիլա:  
Տուն ու երդիֆ լիֆ են շարֆով,  
Բարով Կալանդ, բարկաբեւով, ալիլա:  
Ճոլոս մամուն հըմուռ, հաղուռ,  
Ձոջիկ պապուն բաղարջ, բլիթ, ալիլա:  
Ժիթ-պիթերուս շարան շարան  
Շարոց, բասեղ, անուս կաթա, ալիլա:  
Գոգնոց բացի, գոգով սըւեֆ,  
Ափով բաժնեմ, ծափով ուսեմ, ալիլա:

(1) Անգիր դպրութիւն եւ Առակը Ա. հատոր, երես ԼԱ—ԼԴ:

(2) Կախն է Կաղանդի նախորդ օրը, զի ամբանէ ի վեր կախան եղած պահձու միրգերն որմերէն վար կ'առնուին այսօր:

(3) Չիր՝ պտուղներու չորը, փերթ փերթ շարուած:

(4) Հեվիեֆ՝ լմանը, չջարդուած չորը:

Լոյս է իջեր վեր գերեզմանին,  
Ողորմի՛ս ձեր լոյս մեռելին<sup>(1)</sup>, ալիլա:  
Գոգնոց բացե՛ք, գոգով զըւե՛ք,  
Ափով ուսե՛նք, ծափով վայե՛նք, ալիլա...»:

Երգելէ յետոյ սոքա կ'ստանան ամէն տունէ տեսակ տեսակ կաղանդէք, զորս հաւաքելով յետոյ իրենց մէջ կը բաժնեն, վիճակ ձգելով, որպէս զի կուր չձագի: Կաղանդի գիշեր եւ ոչ մէկ տուն մահուում կը մնայ, զի սա դարաւոր բարի աւանդութիւնն ամէն տեղ կայ, թէ աջն գիշեր բարի հրեշտակն ա մենուն կը հասնի, եւ կը գրէ ով ինչ չափով կաղանդէք կուտայ աղքատին: Կ'երեւի թէ այս հաւատքն է հինէն մնացած մեր մէջ, վասն զի Հայերն ունէին ի հնումն ատուած մը Տիր ա- նուն, որոյ պաշտօնն էր գրել մարդերու բարի ու չար գործերն ու կ'ըսուէր գրող: Այսպէս Կաղանդի օրն իրա- բու ընծայաբեր եւ բարեմաղթու ըլլալը շատ հին, պատուական մէկ աւանդութիւն է:

\* \* \*

Կաղանդը ի Պոնտոս կ'ըսուի Կաղանդար: Նախօրին պատրաստութիւններ եօթն պնակ մրգեղէններու: Տա- նուտէրը ձիթենիի ոտ մը կը կտրէ եւ տուն կը բերէ Կաղանդարի ծառ ընելու համար: Սեղանէն յետոյ նա երեք ամի կաղին կը նետէ դէպ ի ձեղուն ըսելով. «Շէն կենայ Կաղանդար, բարձր Կաղանդար»: Նորէն

(1) Յիշել ննչեցե այնքան սկիւմ օրերու մէջ, գերընտիր հին սովորոյթ է Հայերուս մէջ իսկ չուշմա ցանկով եւ կամ սիսեո ցրբելով գերեզման կաղնդին է զուցէ հեծանոսակոնէ մնացորդ աւանդութիւն:

կաղիններ կը նետէ որ անեցիններն ուտեն, զի յաջորդ օրն որ է Կաղանդ, ներելի չէ կաղին կտորել — չարա- գուշակ: Սեղանին մէջտեղ խոշոր հաց մը կը դրուի, վրան նարինջով մը, այդ հացին, երբեմն բաղարջ, կը խոթուի ձիթենիի հաստ ոտը, որուն ճիւղերէն մէկ մէկ հատ կը կորզեն անեցիններն եւ ամէն ոք իրը կը զարգարէ կաղիններով եւ ընկոյզներով, սա հաւատքով որ նոյն տարին իր արեւն ըլլայ զարգարուն ու փայ- լուն: Տանտէրը խնձորներ կը նշանակէ ըստ թուոյ անե- ցիններուն, եւ անոնցմէ մէկին մէջ ծակ մը կը բանայ եւ դրամ կը դնէ եւ միւսներուն մէջ կը խառնէ: Յաջորդ օրն որ է Կաղանդ, այդ խնձորն որու որ ելլէ, նա դրամն իր քսակին յատակը կը պահէ յաջողութեան հաւատքով ցլերջ առաջիկայ տարւոյ:

Առաւօտուն տանտէրն ժամ կ'երթայ, տէրտէրին կաղանդի ծառն օրհնել տալու համար, զոր կը բերէ տուն, գերանին վրայ կը դնէ անեցիններուն մազերէն մէկ մէկ թել փաթթելով անոր: Տուն մտնելու եւ ել- նելու ատեն նոյն օրը ամ քոքը նախ կը գործածուի, չարագուշակ տարի անոր՝ որ սխալի, մինչեւ իսկ մէկ անգամ ըլլայ այն, եւ ձախը գործածէ:

Տանուտէրն շաշի (լայնատերեւ թուփ) ճիւղերով կը զարնէ տան պատերուն, մտո ընտրուն, բոյոր ընտանի անասուններուն, եւ յետոյ երկու բոկեղ կ'անցնէ խա- տուտիկ եզին կոտոշներուն, որոց երկու վառուած մո- մեր փակցունելով դէպ ի դուռ կը մղէ եզը: Եթէ սե- մէն ամ կ'ձգակով եզն անցնի, բարի նշան, իսկ ե- թէ ոչ՝ չար նշան, ուստի ջանք կ'ըլլայ որ եզն ամ ոտնով մաննէ:

\* \* \*

Իսկ կան գաւառներ, ուր Կաղանդի սեղանն է ճոխ, եւ աղընդերներն — ջերեզ — են եօթն տեսակ. այս է «օխթը բախիի օրը»:

Այդ օրը թէեւ այլ եւ այլ նշխուն հացեր կը պատրաստուին, բայց բուն Կաղանդինն է մէկ հատ, կը որ ու թանձր, որոյ խմորին մէջ կը դնեն հինգ փարանոցէն մինչեւ տասնոց ոսկի մը: Հացերէն իբր կաղանդէք բաժին կը արուին ընտանի անասուններուն ալ, կատուին, կոյիին եւ այլն: Կը շինեն նաեւ քսակ (1) եւ հուս (2), առաջինը մանչերու, իսկ երկրորդն աղջիկներուն համար է: Կովի ծիծ, ոչխարի պճեղ ալ կը շինեն խմորով, եւ կեր կուտան անասուններուն, որպէս զի անոնք եւս մասնակցին Ամանորի ուրախութեան:

Այլ սակայն Կաղանդի բոլոր հացն որոյ մէջ մէկ դրամ կայ ի պահ, ցերեկի ճաշէն յետոյ տանուտէրը ճերմակ պատառով ծածկած կը բերէ եւ կը բաժնէ ամենուն, որոնցմէ ամէն ոք ստակը կը փնտռէ սրտատրոփ. եւ անա որտորնդոտա ձայն մը կը գոռայ. «Ես գտայ. ե՛ս»: Այն ատեն փոքրերն իրենց հացը նետելով կ'սկսին թզկալ. տանտէրն նետուած հացերը կ'առնու եւ գաղտ անոնց մէջ ստակ տեղաւորելով իւրաքանչիւրին կ'ըսէ. — «Քուկինիդ մէջ ալ կայ, դուն ամբողջ չկերար որ գտնէիր»:

(1) Քսակը թանձր, հուկածեւ խմորի զանգուած մը է, որոյ ամէն մէկ ծայրն ամէն մէկ մանչ կը խոծէ որոշիչ նշան մը, նուշ մը եւ կամ չամիչ մը. երեւէն ետք, որունը որ ամենէն աւելի ուռեանայ, ան բաղդաւոր է, իր քսակը պիտի ուռի՝ այսինքն հարուստ պիտի ըլլայ:

(2) Հուսը կը պատրաստեն խմորի երեք երկար կտորներ մաղի ձեւով նստի հիւսելով, ամէն տղջիկ իրենին վրայ որոշիչ նշան մը կը գնէ, որունը որ ուռի, ան բաղդաւոր է եւ փափարին պիտի հասնի:

Աղջիկներ հաւկիթ մը լուալով գիշերը կը դնեն թոնիրին բերանը ամանով մը, ամուխի եւ հինալի մէջտեղ. երբ առաւօտուն ելնեն ու իրենց հաւկիթը ամուխէն սեւցած գտնեն, կը տխրին, թէ իրենց բաղդն ալ սեւ պիտի ըլլայ. իսկ եթէ հինալէն կար իրցած ըլլայ, այն ատեն կը ցնձան թէ բաղդը ժպտած է իրենց:

Նոյնպէս պառկելու ատեն աղջիկներ երեք անգամ թոնիրին պատերը կ'աւրեն, յետոյ աւելը իրենց բարձին տակ կը դնեն ու կը պառկին. առաւօտուն բաղդը ողջունած է զիրենք այսինքն բաղդաւոր պիտի ըլլան, եթէ աւելէն ճղիկ մը չէ կոտորուած:

\* \* \*

Կան շատեր ալ որք այս գիշեր չեն քնանար, Նարեկ կամ Վեցնազարեակ կ'ընթեռնուն եւ ժամը անգամ մը աղբիւրէն կուժ մը ջուր կ'առնուն եւ մէկուսի կը դնեն եւ կ'ընթեռնուն ջրին վրայ: Այսպէս եօթը կուժ ջուր կարգով շարելէն յետոյ, ութերորդ անգամին, որովհետեւ աղբիւրէն ոսկի պիտի վաղէ, ամբողջ ժամ մը աղբիւրին վերեւ երկիւղածութեամբ կ'աղօթեն. եւ անա աղբիւրը ժամ մը ոսկի՝ կը հոսի. այս ջրնոտութիւն՝ նշան է առատազեղ տարւոյ մը: Իսկ աղբիւրն եթէ չհոսի, վայ, նշան է աշխարհի անջրգիւթեան:

Ի ֆիլի կիներ ափով աղբիւրին մէջ գարի ընլով կ'ըսեն. «Առ գարի, տուր բարի»: Երկաթի կտոր կը ձգեն ըսելով: «Առ երկաթ, տուր սովլաթ»: Իսկ էրիկ մարդեր աղբիւրի ջրովը խոտ կը թրջեն եւ անասունները կը կաղնդեն որ առողջ մնան: Ով որ ջերմոտ է, այս գիշեր կը լողնայ աղբիւրին մէջ եւ յետոյ գրեթէ մերկ կը նստի հին թթենիի մը վրայ: Վարէն ձայն մը առ

Չերմոսն. «Հոն ի՞նչ կ'ընես» . — Թուխ կ'ուտեմ ես : — «Հիմա ու թո՛ւթ. հիմա ու դո՛ղ (Չերմ)» : Ծառի տակ եղողն իսկոյն տապարով կը զարնէ ծառի բունին : Վերինն իբր սարսափահար՝ կը հարցնէ թէ ինչո՞ւ կը զարնէ . վարինը կ'ըսէ, «Հրմ կը զարնեմ, հրմ ձ'ուքէս որ գայ, հոգիդ կ'առնեմ» : Այլ իսկոյն իսպառ իբր թէ Չերմը կը փախչի :

Դարձեալ ի Քղ'ի կէս գիշերին պառաւ մամը ելնելով աղբիւրը տեսակ տեսակ միրգերով եւ բլիթներով կը կաղնդէ, որպէ՛ս զի տարուան մէջ մշտահոս ըլլայ : Պղտիկներէն որոնք կանուխ ելնեն, անոնք կը շահին աղբիւրին կաղանդէքը, ուստի կ'աշխատին իրարմէ կանուխ ելնել եւ աղբիւրի կաղանդէքին տիրանայ :

Եւ անա գուռը կը զարնուի . խուճը մը տղեկներ սուր եւ սիրուն ձայնով կ'երգեն .

— «Նէնիներ, կաղնդոս (կաղանդէք) տուէք, տաբին՝ օրիկ մըն է . ամէն տարի բարով հասնիք այս օրերու» :

Տան տիկինը ամանով մը մէկ երկու տեսակ միրգ կը պարպէ անոնց կողովին մէջ, որք եւ յետոյ կ'երթան ուրիշ գուռ մը, միշտ իրենց յանկերգը կրկնելով .

— «Նէնիներ, կաղնդոս տուէք, տարին օրիկ մըն է . ամէն տարի բարով հասնիք աս օրերու» :

\* \*

Իսկ ի Վան Դեկտեմբերի 31ին բոլոր տուններուն մէջ հացեր կ'եփուին սխմիթի նման, եւ կ'ըսուի քիկեղ, եւ կ'երակուրներու հետ աղքատներու կը արուին :

Երբ Դեկտեմբեր 31ին ժամուն կոչնակը կը զարնէ,

տղեկներ անէ տուն կը պարտին միրգ ժողվելու համար, միաբերան երգելով .

«Հալելա, հալելա՛,  
Մեր տունը նըլորք լեճա,  
Չեր տունը մսկսար լեճա» :

Յունուար մէկի առտուն կանուխ կ'ելնեն կիներ ու աղջիկներ եւ մանչեր կ'ըսծ ու բէկեղ առնելով աղբիւր կ'երթան ու կը թըջեն զայնս, եւ որոնցմէ կտորներ կը պահեն մինչեւ ցվերջ տարուոյ, իբր բժժանք ամբարի մէջ ի պահ դնելով, որպէս զի հացակարօտ չմնան :

Տղեկներ եւ աղջիկներ յետոյ կ'երթան համբուրելու իրենց կնքահօր աջն, որուն կը տանին իրենց մօր պատրաստած խղերղը<sup>(1)</sup> եւ յետոյ կ'երգեն .

«Շարոց բերեք. բասեղ բերեք.  
Նոր հարսերուն փայլ սրեք» :

\* \*

ՅԱլաշկերտ ջոջ տանտիկինն օր մը առաջ Տարի առնունով ցորենէ եւ ալիւրէ շաղուած խմորախառն ընկուղով, չամիչով եւ կանեփահատիկով հաց կը շինէ, մէջը դնելով կամ դրամ եւ կամ մատնի : Ամանորի առաւօտուն զայն կը բաժնէ բոլոր տնեցիներուն, որու բաժնէն ելնէ դրամը կամ մատնին, նշան է որ ան պիտի ըլլայ տանը մէջ բաղդաւորը նոյն տարուոյ մէջ<sup>(2)</sup> :

(1) Տեսակ մը հեղվա :

(2) Տարիի նկատակի բաժանման այս սովորւածքը՝ սեղ տեղ Մեծ-պահի Միշիբի օրն էս կը կատարուի : Հացի մէջ զրամ դնել զրեթէ ամէն տեղ կայ :

Գրեթէ նոյն է այս սովորոյթ ի Նիբրիերոս (Մուֆար-դին), ի Չմշկեծէք եւ այլուր: Կաղնդի հայն է բազարջ եւ կ'եփուի թոնիրի մէջ մազմազ կրակով: Քար-սալի վրայ բլիթներ ալ կը շինուին, նկարէն, վրան շուշմայով ե երբեմն մալէզ քսելով կամ հում սիսեռ շարելով: Միայն թէ որովհետեւ հաւատք կայ թէ այս գիշեր աղբիւր-ներն իբր թէ պահ մը կը ցամքին եւ կ'սկսին ոսկի հոսել: , ուստի կանուխէն դոյլ ու կուժ կը տանին, եւ կարգ ու կարգ կը շարեն, որոց մէջ բազարջը մանրե-լով՝ աղօթելով կ'սպասեն որ գոնէ՝ փոսրները ոսկե-ջրով թրջուին, եւ իրենք ալ զայնս տարւոյն մէջ ի պահ ունենալով մերթ հոտոտեն եւ մերթ կրծեն եւ ըլ-լան ոսկեատէր — հարուստ:

Շատ տեղ ալ կանուխ աղբիւրներու գուռերուն մէջ կը նետեն գարէ-հացի եւ ամուխի փշուրներ՝ ըսելով, «Ա՛ռ գարի՛, տուր բարի: Ա՛ռ քէօմիւր, տուր էօմիւր»:

\*  
\*  
\*

Ուրիշ մէկ արտաւոց սովորոյթ.

Տան գուռը փակուած է. կը բացուի ներսէն՝ եթէ տանտէրն պտպ կամ հայր՝ միրգի կողովով եկած է, իսկ եթէ դրսէն խարէ եւ գուռը բանալ տայ, անեղիններն իսկոյն կը յարձակին եւ ձեզունէն կախուած չուանով կ'սպառնան կախել զինքը, որ ուր ուրեմն կը խոտա-նայ. այս է կախուի ըսուած կաղանդական սովորու-թիւնը, որ մինչեւ ցարդ կը կատարուի հարուստ ու աղքատ տուներուն մէջ:

(<sup>1</sup>) Տոպրակ կախելու սովորոյթն ուրիշ տեղ ալ կայ:

Ի Նիբրիերոս եւ շատ գաւառներ գօշկախ կ'ը-սուի Կաղնդի երեկոյ-գիշերուան: Տղեկներ իրենց քո-լոզը կա՛ր արախչինը իբր պարկ՝ չուաններու ծայրերուն կապկպած՝ տանիքներ կ'ելնեն եւ բուխերիկներէ վար կը կախեն ճլվլալով. «Հա կաղանդ». եւ կաղանդէք կը պահանջեն: Շատ անգամ չարածձխներ պարկին մէջ կրակի կայծեր կը գնեն եւ կ'սպառնան հրդեհել տուն ու տեղ, մինչ զի տանտէրն ա՛լ կ'ստիպուի գօտ՝ կախին աղերսել եւ գո՛ն ընել ամէնքը:

\*  
\*  
\*

Էրզրու կեանի մէջ տոպրակ կախելու սովորոյթը կայ. որուն կցուած են գոյնգոյն գուլպաներ եւ կա-խուած են տանիքի լուսանցքէն դէպ ի վար: Տղեկներ կը պոռչտեն. «Նէնի, տոպրակիս մէջ պան լից, գուլ-պայիս մէջ ալ». — «Արեւուդ մեռնիմ, պան չունիմ». եթէ պատասխանուի. «Պտուկիդ մէջ լիցայ մո՛ւկ». կը վերածայնուի: Նշանուած երկտասարդներ իրենց թան-կագին գօտիները կը կախեն օրիորդի տան լուսամու-տէն եւ կը կաղնդուին նոյն անէն, իրենց գօտիներուն մէջ ծրարուած միրգերով, առանց սակայն տեսնուելու նշանածէն, զի ամօթ է: Եթիտասարդն առ դուարձու-թեան երբեմն քուրձ մը կը կախէ վերէն, որոյ մէջ կը մտնէ աներցուն եւ վեր կը քաշուի, այլ չուանն է որ փրթի, եւ աներցուն ի մէջ քահքահներու վերէն ու վարէն կը ծաղրուի:

Կէս գիշերին աղբիւրը կաղնդելու կ'երթան հոտ ալ, «Արձաթ մեռնիմ» ըսելով. ձեռք ու երես կը լուան, հոն կը ընուն կորկօտ, լուբիա եւայլն, յետոյ աման մը ջրով կը վերադառնան աղբիւրին պերիֆերը տուն բե-

բած ըլլալու համար: Նոյն ջրով կը թրջեն կաղնիքի հա-  
 ցը եւայլն: Եւ կ'ուտեն պաղապուրն ու գանպօսան որ  
 անուշով խմորեղէն է առանց իւղի, եւ ուրիշ կերակուր  
 եւ միրգ: Հերուան հարսն այսօր կանուխ կը համբուրէ  
 կեսրայրին աջը եւ կեսուրին բարեխօսութեամբ հրաման  
 կ'առնու երթալ իւր ծնողքը կաղնիքելու, աջ-հա կոյրի:  
 Այ մէկ նոր-հարս արտօնութիւն ունի Զատիէն առաջ  
 իւր ծնողական տունն երթալու. այսօր եւ Զատիկին  
 կ'երթայ:

\* \* \*

Ահա երգ մ'ալ ի Մուշ:

«Կախըն սոզ սոզ (1).  
 Յեկիմ կանիմ սանիք պոլոզ (2).  
 Քամին բուցո՛ւ զիմ փոլոզ (3),  
 Յեկեք բացեք ըզձր սարին,  
 Քիչ մ' սըւեք ձըր մեռեկին):

(1) Կախանը երեքուն:  
 (2) Ելլեմ կայնիմ տանիքի վեղարածե սրածայրը,  
 (3) Թողեայ սրածայր գգակ:



ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ (1)

ՆԱԻԱԿԱՏԻՔ ԿԱՍ ԽԹՈՒՍ

Տաճարը յաճախ նմանցուած է Նաւի կամ Նոյեան  
 տապանի, որուն շինուածը լրանալու երեկոյէն կ'սկսէր  
 տօնը, որ կ'ըսուէր Նաւախաճիք, Նաւ բառին կցելով  
 կիս բառն, որ արմատն է կիսարուիչ, վերջանալ եւ  
 շնննալ բառերուն (2): Ուրեմն Նաւակատիքն էր յետ շի-  
 նութեան մը վերջաւորութեան՝ սկզբնաւորութիւնն աօ-  
 նական ուրախութեան եւ ընծայարարութեան եւս՝ որ  
 մինչեւ ցարդ կը շարունակուի տակաւին:

Սուրբ-Գրքի մէջ յաճախ յիշուած է Նաւակատիքը.  
 «Եւ արար Նաւակատիս տանն Տեառն՝ արքայ, եւ ա-  
 մենայն որդիք Իսրայելի» (Գ. Թագ. Ը. 63): «Եւ մա-  
 տուցին իշխանքն... զընծայս իւրեանց Նաւակատիս  
 սեղանոյն» (Թիւր. Է. 10):

Նաւակատիքը Յայներէն կը կոչուի էնզեմիա, Գէնտն  
 բառէն ածանցուած, որ է նոր, եւ այնքան նշանակու-  
 թիւնը ընդարձակուած՝ որ մինչեւ իսկ ընծայներու հա-

(1) Տօնի Ատուածայայտնութիւն՝ «Տօն Իննդեան եւ Մկրտութեան  
 Տեառն» յորջորջելը՝ յետիններէ ներմուծուած է, իսկ զիրար ողջունելն ը-  
 սելով՝ «Շնորհաւոր Ծնունդ եւ Ատուածայայտնութիւն», ախարստիան է:

(2) Թէ Նաւակատիքը Նախակայսիոյէ եղած ըլլայ, իբր նախնական  
 օր ցնծութեան տօնի, կամ Նախախայրիսէ եւ կամ Նախակասիլէ՝ իբր  
 նախանուէր օր տօնի, կարծիք է (Եղանակ Բիւզանդեան 1849, երես  
 148—152):

է 9-5698 Ը



մար ալ կը գործածուէր, որպէս Օգոստինոս կը գրէ.  
 «Յամենայն նուագս յորժամ մատուցանեմք Նոր ինչ,  
 կարե չք ասել էնդէնիա, այսինքն Նաւակատիս առնել»:  
 Եւ մեր մէջ շատեր Նաւ բառը Նորի կամ Նախի յեղա-  
 չըջելով՝ Նաւակատիքը Նորանասիկի կամ Նախասիայ-  
 րիքի աղաւաղումը կարծած են:

\* \* \*

ԽԹՈՒՄը խրիչէն է, որ է մխտիղ, մղուիղ ծումէ եւ  
 պահքէ յուտիք, բայց իբր կէս ուտիք աւրելով ծոմն  
 ու պահքը լւղեղէնով ու կաթնեղէնով, ձուով եւ ձու-  
 կով (1): Որպէս ածնական հանդէսներու նախորդ երե-  
 կոյին կը կատարուի Նախատօնալ, որ է յաջորդ օր-  
 ուան հանդէսի կէս-նամակը, կարապետը, Խ՛թումն ալ  
 նախատօնալին է ուտիքի, կէս ուտիք. թող որ եկեղե-  
 ցական օրինադրութիւն ալ է այս:

\* \* \*

Այս ածնին անհրաժեշտ է ի Վան գէթ կտոր մը նոյի  
 նոր հալաւ հագնիլ. եթէ ոչ՝ «Զատիկը կը ծրար»: Այս  
 ածնին Պղտիկ-Զատիկ ալ կ'ըսուի, ինչպէս թուրքերէն  
 կը կոչուի Բիւլլիք-Բաւախա:

Բոլոր տուներ, այս ածնի պահքի մէջ շրի-շրի են  
 այսինքն ամէն բան ապլարբակ (խառն ի խուռն): Օր  
 մը լուացթափ կ'ընեն, ուրիշ օր մը կար-կութ եւայլն:

Շատ տեղ բուրդ սանտրոքել (գլել), ճախրակ մա-

(1) Թէ թժումն է խորուելէն անսուղուծենէ եւ տուայտունքներէ  
 ի կերակուր, զոր եւ խոժել ու Թիմել ցյաղ, զրոյց է:

նել, բամպակ գլել չըլար: Այս օր Նաւակատիք է.  
 մյս մորթել, ջարդել, եփել չկայ: Երբէք ներելի չէ  
 այս օրուան մորթածը ուտել. նախաքրիստոնէական  
 դար՛րու ամենա՛նին սովորութեան մնացորդ կ'երեւի  
 այս աւանդութիւն:

Ժամերգութեան օլթակը — փայտէ չեֆիճ — հազար  
 չինգ հարիւր անգամ կը արբրըսկի կոչնակի վրայ:

Այն տուն ուր արու զաւակ չկայ, պետ չկայ, կնիկ-  
 ներէն մին դուռը կիսխուփ կը բանայ եւ անյորդնե-  
 րէն Պանձրանյ կը խնդրէ, այսինքն պահքի լուծումի  
 հրաման: Տան մէջ խուռն' կը ծխուի, որոյ անուշ հոտը  
 խառնուելով առեխի, բալայիլի բուրումներու հետ,  
 ախորժելի քաղցրութիւն մը կը տիւուի:

Մինչեւ որ երեկոյն կրկնքի եօթն լոյսերը չհամ-  
 բուին, պահքը կամ ծոմը չլուծուիր: Պապածին (Աստ-  
 ուածածին) աչքերը կը հանէ անոնց, որպէս կ'ըսեն մա-  
 միկներ, որոնք անամբեր դանուին. այս չէ՞ մըթէ  
 ժուժկալութեան գործնական դաս:

Վանքերու մէջ պանիր, ձուկ կամ տարեխ, թանա-  
 պուր, մածուն, կարաղ չեն ուտուիր, այլ աղցան ձե-  
 թով, որ կտաւատի իւղ է, ջլպուր, ձմուռ եւ ուռպով  
 տապկած դդում: Յոյնք այս երեկոյն դէյթին հաց  
 միայն կ'ուտեն:

Փողոցի դրան ձկն'ը կը ձկնկայ:

Տան աիկինը կը հասկնայ որ նոյն տարն տող-տաք-  
 ցոց (Չերմոտ) մըն է, որ ցաւերը փարատելու համար  
 ուխտ ըրած է Խ՛թման օրը եօթ դուռնէ ժողովք ընել,  
 առանց բառ մը արտասանելու: Դուռը կը բացուի ի  
 գոհութիւն դժբաղդին:

Այն տուներ որ նոր մեռելներ ունեցած են, Խ՛թման

երեկոյ կ'ընդունին գլուխահարցում եկողներ կամ անոնց կողմէն զրկուած կերակուրներ ու միրգեր:

Սեղանի առաջին բաժալը միշտ զարկաներուն համար է:

\*  
\* \* \*

Խթման երեկոյ քանի մը հասակակից աներես-երես սովեր: Իբրևո՞ւ հետ ընկերացած Ալէլուիա կ'ընեն: Չորրորդ դարմիկի կամ ճլորի մը մէջ հողէ ճախով ճուռն ճրագ մը կը տեղաւորեն, ու երկայնավիզ դգու-մին երկայն լարան մը (սիճիտ) կը կապեն եւ զայն դրացիներու տան երդիքէն վար կը կախնն:

Ան որ խելօք է, լարանի ծայրը անոր կուտան. իսկ պնդերեսները դուռը կ'երթան, տանտէրէն բան մը պահանջելու համար:

«Մարէ՛, ալէլուեան եկաւ. վե՞ր (դո՞վ) պիտի գովէ»:

— Բարով թող գայ, զաւակ. քեզ պիտի գովէ:

Ու կ'սկսին քաղցրանուագ համերգեր, զոր ո՛վ դիտէ ո՞ր դարու ո՞ր բանաստեղծը յօրինած, երգած ու կտակով աւանդած է:

Անդրջրհեղեղեան ջահը կը ճօճայ երդիքէն վար, թոնիրին մօտ: Չայնիսը վերէն կը ճըլվլան վառ ճրագ ի ձեռին:

«Ալիլուեա ալիլուեա,

Այսօր ծնունդ է Մարիամայ, ալիլուեա.

Մարիամ գնաց դուռըն ի յերին (այր) ալիլ.

Քամակն ի զարկ խաչաբարին ալիլ.

Ծնաւ եբէ Յիսուս որդին ալիլ.

Մարիամ Մարիամ, քո նուր բարին ալիլ:

Էրանիկ քե սուրբ խանձարուր ալիլ.

Քրիստոս մեջ քե փարութեցին ալիլ.

Էրանի քե բարձր օրորոց: ալիլ.

Յիսուս ի քեզ օրորեցին ալիլ.

Էրանի քե սուրբ Մարիամ, ալիլ.

Որ Քրիստոսին օրոր ըսիր ալիլ:

Էրանի քե Օվանես, ալիլ.

Որ Քրիստոսին քալար (կնքահայր) եղար ալիլ.

Էրանի քե Հոռոմսիմայ ալիլ.

Որ Քրիստոսի տաւեր (դայեակ) եղար ալիլ.

Էրանի քե գեթ Յորդանան ալիլ.

Քրիստոս մեջ քե մկրտեցին ալիլուեա»:

Յետոյ կ'սկսին այն պատմութենէն թէ ի՞նչպէս Երուսաղէմը շինուեր է, սիւն ու դերանը պակսեր է, առած են սղոց ու կացին, գացած են ծառ մը կտրելու. այդ ծառը ճչած է՝ երբ կացինը իրեն դպած է. երբ սղոց քաշած են, արիւն բղխած է ծառէն:

Ապա այդ իրենց գոված տունը նմանցնելով Երուսաղէմի տաճարին, կ'ըսեն,

«Ըսա զքնիկ Ասուծու շինած ալիլուեա.

Ալաւ վերէն ծիլ ծիլ ոսկի,

Կողը վերէն սրբուռ մարգրիտ ալիլ.

Հարսները մեջ քեց եղունիկ (աղանի) ալիլ.

Աւելը ձեռք փունջ մանիշակ ալիլուեա»:

Բայց պէտք է գովեստ մը կարդալ տան մէջ գրուած արու զաւկին:

«Ձեր տղի անունն ի՞նչ է»:

— Գառնիկ:

«Գառնիկ նստե՛ր ծառին սակի՛ն ակի՛ռւեա .

Բրըչեմ քալե՛ր ծառի նիւղին ակի՛լ .

Սեղան առջեւ հազար բարի ակի՛լ .

Աջու ձեռին նուան գինի ակի՛լ .

Շորո՛ր կուգայ նուրբարով ակի՛լ .

Խորոս ձեռով պուպրուարով ակի՛ռւեա» :

*Իսկ եթէ արու զաւակ չգտնուի, աղջիկը չեն գովեր, ասն մեծք կը գովեն որ աւելի խնդարի կ'ըլլայ .*

«Արսենի նուրբն էր նրացաւ ակի՛ռւեա .

Քաղցրացաւ, ամպրուացաւ ակի՛լ .

Մեր կերաւ, անմահացաւ ակի՛լ .

Խեղ կերաւ, կօսն էրեցաւ ակի՛լ :

Արսէն նստե՛ր ծառի սակի՛ն ակի՛լ .

Պոչամ քալե՛ր ծառի նիւղին ակի՛լ .

Կրխէնս ձեռք նուան գինի ակի՛լ .

Սեղան առջեւ հազար բարի ակի՛ռւեա» :

*Տարբեր իմն է ի վան :*

«Նահապետին նուրբ նրացաւ ակի՛ռւեա .

Մեր կերաւ, ուրախացաւ ակի՛լ ,

Հեր կերաւ, անմահացաւ ակի՛լ .

Քոյր կերաւ, կօսն իրեցաւ ակի՛լ ,

Մօրհուր կերաւ, վեր վեր քուտ ակի՛լ :

Ձեռքն է բռնե՛ր նուան գինին ակի՛լ .

Մամեր քալե՛ր ծառի նիւղին ակի՛լ .

Բարին քող գայ վեր սնեցայ ակի՛լ .

Չարն քող երթայ վեր սարեցայ ակի՛լ :

Ով կուտայ, տուն շէն մնայ ակի՛լ .

Ով չիտայ, իւր քեֆ գիտայ ակի՛ռւեա» :

*Բայց աղեկներն ո՞չ ապաքէն բան քրոջստալու (ստանալ) են . գիւղերու մէջ ալիւր, ձէթ, հաւկիթ եւ լուղ, իսկ քաղքի մէջ միայն դրամ, գինիի գին ընելու համար :*

«Մամի՛կ, մամի՛կ, ես քե ծառայ ակի՛ռւեա .

Սոլեր հագի քե նովոնց ակի՛լ .

Չու՛մ մառնի դուռ մեյար գնա ակի՛լ .

Քեասէն իլեն պօպօլօզ արա ակի՛լ .

Քեզմէ չուզեմ ձի մը, ջորի մը ակի՛լ .

Քեզմէ կ'ուզեմ մեկ գինու գին ակի՛ռւեա» :

*Գիւղացիներու մէջ եթէ ակէլուեան աղքատի տունը չտարուի, աստեղը կը վիրաւորուի տրանջալով . «Ձինքը կը զրկեն, ճրագ մը ձէթ չէ՞ կարող տալ ժամառն թուխ-Մանուկին» (1) :*

*Մինչեւ որ ակէլուեան դայ ու երթայ, եւ ահա կէս գիշեր . եւ ամէն ոք հաւու կունք մը առնելու է (սակաւ ինչ քնանալ), կանուխէն ժամ-պատարագին արժանի ըլլալու համար :*

\* \* \*

*Իսկ ի Ռուսահայս տեղ տեղ իջնումի այս երեկոյին կ'ըսուի թարսիւրանս երեկոյ, յաջորդ օրուան Զրօրհնէքի ատեն Սաչի ի ջուր թաթախումին ի յուշ : Հոն տիրացուներ ժամաշապիկ հագած եւ իշու մը վրայ խուրջ ձգած՝ տնէ տուն կը հանդիպին նուէրի համար, եւ տանիքներու վրայի ծակերէն պարկ կամ գուլպայ եւ կամ քթոց կը կախեն եւ կ'երգեն .*

(1) Թուխ-Մանուկն է մատաղատի սուրբիկ, իսկ Ազնուոր՝ տարեց սուրբ, հսկայ, որոց խաչքարերն ու լոյս հողերն են երկրպագելի և խնկելի :

«Ալիլուեա, ալիլուեա.  
Ակը մարեմ, մարեմ, մարեմ.  
Չեր տղայի սօլը կարեմ.  
Փշաս տուեմ, փորքս լարեմ,  
Չամիչ տուեմ, ասմըներս շարեմ.  
Ընգեօզ տուեմ, գլուխ կօնեմ  
Աստուած ձեր խարսնը փեսան պախի»:

Ուրիշ երգ.

«Ալիլուեա, ալիլուեա.  
Եւ ցնծացե՛ք, ուրախացե՛ք,  
Մեր Մարիամի պաս բացե՛ք:  
Մարիամ գնաց լեռն ի ծնունդ,  
Ծննդեցաւ, ազատուեցաւ.  
Հրեա եկաւ մի ձիաւոր,  
Լախը ձեռին բօզ ձիաւոր,  
Սշու ձեռին աւեսարան,  
Չախու ձեռին սաղմոսարան,  
Չինի, չինի՛, ձեր տղեկանց անունն ի՞նչ ա»:

Թրքահայերու եւ Ռուսահայերու մէջ տաղերն այն-  
քան իրարու մերձաւորութիւն ունին, որ դժուարին է  
մի առ մի բաղդատել: Ահա նմոյշ մը ռուսահայական.

«Ցնծացե՛ք, ուրախացե՛ք, ալիլուեա,  
Մեր Մարիամի պասը բացե՛ք ալի.  
Մարեամ գնաց դուռ սանարին ալի.  
Մեջն տուեց խաչափայտին ալի.  
Հնչեց բերեց Յիսուս որդին ալի:  
Հրանիք (երանի) քե Հոռոմսիմա ալի.  
Որ Քրիստոսին ասմեք ըլլար ալի.

Հրանիք քե բուրք խանձարուն ալի.  
Քրիստոս միջին փաթաթին ալի:  
Հրանիք քե, գէտ Յորդանան ալի.  
Քրիստոս միջին մկրտեն ալի.  
Հրանիք քե սուրբ Օհաննես, ալի.  
Քրիստոսին քաւոր էլար ալի:  
Հրանիք քե բարձր օրօրոց, ալի.  
Քրիստոս միջին օրօրին ալի:  
Առին յուրազ, առին սղոց ալի.  
Գնացին ծառն ի խնկան ալի.  
Սղոց քաւեն, արիւն բխաց ալիլուեա»:

«Չեր տղի անունն ի՞նչ ա»:

— Ռուբէն:

«Ճուրբեր նքացաւ ալիլուեա.  
Քանց բարդի ծառ երկեցացաւ ալի.  
Ճիւղեր գցեց քաղէք քաղաք ալի.  
Ամեն նղփին շուղան նրազ ալի.  
Մեր փայլը քրեք, ինչ կամենաք»:

Կ'աւանդուի թէ այս երեկոյին, ինչպէս Կաղանդին,  
Չրերն ոսկի կը հոսին, երբ հրեշտակներ վերէն վար,  
վարէն վեր սաւառնելով իրար կը համբուրեն երկնքի  
մէջ:

\*  
\*  
\*

Առաւօտուն Պատարագէն յետոյ երբ Մկրտութեան  
արարողութիւնը կը կատարուի, ժամարարը խաչի քաւո-  
րութիւնը աճուրդի կը հանէ, եւ էն բարձր գինը վճա-  
րել յայտարարողին, էն պղտիկ մանչ տղեկը բեմը կը  
հանուի որ շապիլազգեստ կը բռնէ խաչը, կենալով առ-

ընթեր ջրալի կոնքին: Յետ արարողութեան կոնքի ջրէն  
ամենուն առնուլ ու տուն տանիլ օրէնք է, եւ խառնել  
այն ջուրը տան կուժերուն մէջ, սա հաւատքով թէ միւ-  
ռոնած այդ ջրով տան ջուրերը կ'անուշանան եւ թէ  
անսպառ կը մնան այսինքն տարին անջրդի չըլլար: Այդ  
ջրէն ընտանի սուրբ անասուններուն ալ կը խմցունեն,  
որպէս զի ամբողջ տարին ծարաւէ չնեղուին: Այս մեծ  
տօնի օրը տանիւրէցներէն ջուր ու ցորեն կ'օրհնուին:  
Վանքերու մէջ այսօրեայ ճաշն է հերիսա:

Ժամերգութենէ յետոյ տղեկներ երգիքէ երգիք  
ժուռ կուզան մոխերով եւ կ'երգեն մէն մի տունէ ըն-  
ծաներ առնելու համար:

«Յնծացիք ուրախացիք ալիուեա.

Այսօր ծնունդն է Յիսուսին ալի.

Մարիամ գնաց դուռն ի յայրին ալի.

Չոգաւ բերեց իւր խաչ Որդին ալի:

Եջմիածին որ շինեցին ալի.

Միւն ու գերան բար (հաւասար) բռնեցին ալի.

Ուսայ բնիք շիվարցուցին ալի:

Մեղոն, Գասպար ու Բաղդասար ալի.

Եկան կայանն ու շիվարան ալի.

Ելան գացին ծառ խնկեցին ալի.

Առջի կացին որ զարկեցին ալի.

Ծառն որոսաց, հղին երայ ալի:

Միջի կացին որ զարկեցին ալի.

Ծառ բղխաց, ջրեր կաթաց ալի.

Եթի կացին որ զարկեցին ալի.

Շուռ ու մուռ վեր գլխուն սուր ալի.

Գացիք բերեք ֆառսուն եզ, ֆառսուն գումե ալի:

Լծեցիք հետ Սերամին (1) ալի.

Սերամ իւր ծունկ զարկեց գետին ալի:

Գացիք բերեք պառվու մոզիկ ալի.

Լծեցիք հետ Սերամին ալի:

Առջի վարոցն որ զարկեցին ալի.

Հնուամբն ֆաղաֆն ընցուցին ալի,

Միջին վարոցն որ զարկեցին ալի.

Անյասակ ծովերն ընցուցին ալի.

Եթի վարոցն ու զարկեցին ալի.

Գուռ դրախտին կայնեցուցին ալիուեա»:

Այս երգէն յետոյ տղեկներն աւելի շատկեկ ընծայ  
ընդունելու համար գովք կ'ընեն. «Պապ կամ մամ, ձեր  
տղի անունն ի՞նչ է». — Յա՛լոր:

«Յակոբ հեծէ կապուս ֆուրակ ալիուեա.

Փարչամ բորկեր պուրակ պուրակ ալի.

Մեջն ա' զարկեր պողպատ ուրագ ալի.

Ասուած սայ Յակոբին բակով ոչխար ալի:

Բակով ոչխարի բուրդն ապրեծում ալի.

Ասուած սայ Յակոբին բակով գումե ալի.

Բակով գումեի կոսոն ոսկի ալի:

Տանիկին, սիկին սիկին ալի.

Սոլեր հագիր բըզբըզալեան ալի.

Ել գնա' դուռ մառանին ալի.

Երեք ինձոր բե'ր սեղանին ալի.

Մեկ տ'եր մեր վարպետին, մեկ թե ալի.

Մեկ լի մեզի, ելնեմ երբանգ ալիուեա»:

\* \* \*

(1) Սերամ է անուն նախկին առաջնորդը անասունին (Անգիր դպ-  
Ա. հատոր, էրես 94—96)։

Այլ ինչպէս Հրեաներն ունին Սուրբ-Գրքի մէջ եղած պատմութիւններէն զաս՝ ուրիշ պատմութիւններ եւ կամ վէպիկներ պարունակող Թալմուտ անունով մեծահատոր գիրք մը, Հայերս ալ ունեցած ենք Ժողովածու գիրքը, որ Աստուածայնչի պատմութիւններուն հետեւողութեամբ կը պարունակէ այլ եւ այլ վէպիկներ: Թող Տաթեւացին, այս հսկայ հանճարը՝ որ կը պնդէ թէ Նոյի տապանին ճարտարապետն էր Ներսէս անուն Հայ մը եւայլն:

Ահա՛ Ժողովածուէն դուրս նոր մը, վասն զի Ժողովածուն կ'սկսի Ադամի դրախտէն արտաքսուելու գիշերէն:

«Եւ փառք Տեառն էր ի դրախտի անդ, եւ ասէ Տէր ցԱդամ. «Ձի՛ է, զի իցէ քո արտունջ զինէն: Ո՛չ ապաքէն ետու քեզ զօրութիւն եւ իմաստութիւն, զի տիրեսցես դու երկնի եւ երկրի եւ ծովու եւ ամենայնի»:

Եւ կ'ըսէ մարդը. «Տէր, ինչո՞ւ բոլոր արարածներդ զոյգ ստեղծած ես, մինչեւ իսկ՝ անա արեւ եւ լուսին զոյգ են եւ ես միայն թե՛ կ'եմ»:

Եւ ասէ Տէր. «Եւ զի արարի զքեզ ըստ նմանութեան եւ ըստ պատկերի ինում, որպէս եւ ես մի կ'եմ, զքեզ եւ մի արարի, զի միահեծան լիցիս»:

Այլ սակայն մարդն էր տրտում, միշտ տխուր, մանաւանդ երբ կը նայէր թռչուններուն եւ կենդանիներուն, սողուններուն եւ ձուկերուն, բոյսերուն եւ ծառերուն, որք զոյգ էին եւ համանման իրարու, ա՛լ աւելի կը տխրէր:

Եւ Տէրը մարդուն նայեցաւ որ տրտում տխուր զոյգերու կը նայէր. կ'ըսէ Տէր ինքնին. «Ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինել. արասցուք դմա օգնական ըստ դմա»:

Եւ կ'ըսէ մարդուն. «Տաց քեզ ընկեր, այլ յօրէ յայնմանէ, յորում տաց քեզ կենակից ընկեր, տկարացիս, զի ի զօրութենէ քումմէ եւ լիմաստութենէ առից եւ տաց բաժին ընկերի քում»:

Եւ մարդուն աչերն էին սեւեռած, կը նայէր ու կը նայէր զոյգերուն, եւ ուր ուրեմն աղաղակեց. «Տէր, տուր ինձ ընկեր»:

Եւ կ'ըսէ Տէր Աստուած. «Տես, ի ներքոյ թղենւոյդ ո՞ իցէ դա»:

Նայեցաւ Ադամ եւ աղաղակեց. «Այս ուկը յոսկերաց իմոյ եւ մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ». եւ մարդն իսկոյն հեւ ի հեւ վազեց եւ փարեցաւ:

«Եւ էին երկուք՝ան մերկ՝ Ադամ եւ կինն իւր, եւ ոչ ամաչէին» (1):

Եւ խանդաղատեցաւ Տէր եւ օրհնեց զանոնք բսելով. «Ահա ձեզ ետու զամենայն. անեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր եւ տիրեցէք դմա»:

Եւ անա արեւ եւ լուսին լիալիր կը շողջողան, աստղեր վառ ի վառ կը փալփոյն, թռչուններ կը դայլայլին, բոյս եւ տունկ, ծաղիկներ անուշ անուշ կը բուրեն եւ եւ երկնքի հրեշտակներ սաւառնաթեւ կը սուրան, պարելով եւ երգելով:

Եւ ընդ երեկս վերայաւ Տէր:

\* \* \*

Եւ եղև իբրև օրս այս, եկին հրեշտակք Աստուծոյ՝ կալ առաջի Տեառն եւ էր սատան ի միջի նոցա (2):

(1) Ծննդ. Բ. 25.

(2) Յովր. Բ. 1-2.

և ասէ Տէր ցնա . «Ման՞ք ի դրախտն եւ տեսն՞ք զմարդ  
եւ զկին , զնոր հրաշագեղ ձեռակերտս իմ , զորս արա-  
րի ըստ պատկերի իմում եւ ըստ ն'անութեան» :

Եւ սատարան կը խոնարհի Աստուծոյ առջեւ ու կ'ը-  
սէ . «Տէր , մարդ եւ կին , այո՛ , բովանդակ տիեզեր-  
քն աւելի գերակշիռ են գեղեցիլութեամբ եւ շնոր-  
հօք , այնպէս որ անոնց մէկ նայուածքն անդամ , ա-  
չերուն նայուածքն արեւ եւ լուսին եւ միւս լուսաւոր-  
ն'որ կը խաւարէն . իսկ անոնց զօրութեանն ու ի նա-  
տութեանն առջեւ տիեզերքն ինչ է : Այլ Տէր , — կը  
ծնրադրէ : — այլ Տէր , մարդկային այդ հրաշալիքաբ  
թերի մը ունի , ԻԳՁը որ մարդկային այդ շէնքի մէջ ,  
սրտին մէջ դրած ես , այնքան բուռն է եւ սաստիկ , որ  
կը հակալուէ այն զօրութեանն ու իմաստութեան , զորս  
անոնց տուած ես : Այդ ԻգՁը պիտի դրդէ մարդուն ,  
որ քարերը հայ ըլլան եւ ծովերը դաշտ ըլլան» (1) :

— «Եղիցի» :

Սատանան կ'երթոյ պիտի եւ կը յաւելու . «Ոչ այս-  
չախ միայն Տէր , այլ . . .» (2) :

— «Գիտեմ» :

Եւ տիեզերքի հիմերը կ'սկսին սասանիլ , եւ հրեշ-  
տակներու գեղգեղածայն աշխուհները կը լուեն եւ անա

Յարուոյ աղամանդեայ յարեաւ Անմահն եւ յոսն եկաց ,  
Հինաւուրցն յախտեցից աստիք ակտօբն պսակեալ .

(1) Մատթ. Գ. 1—11. Լուկ. Գ. 1—13.

(2) Յայտնի է թէ Պօղոս տաքեալի սա գրուածը կ'ակնարկուի . «Եւ  
յայանեցի մարդն անօրէնութեան . . . հոգարտացեալ ի վերայ ամենայնի , որ  
տնուանեալ իցէ Աստուած կամ պաշտօն , մինչեւ չսօրի նմա ի տաճարին  
Աստուծոյ , եւ ցուցանել զանձն թէ իցէ Աստուած » (Բ. Թեա. Բ. 5—11) :

Գունդ վերին , խորան , գութք բարձր գահուն սասա-  
նեցաւ ,

Եւ երկիւս պատուանդան դ'ոսիւք նորա դարդեցաւ ,  
Ի սրմսեալ երեսացրն արփիցրն բոյլ փախեան ի դոյ :

Տարածեալ ըզբերս իւր ընդ քառակոյլ անհուն եզերս ,  
Բունն եհար , կ'ալաւ զբնութիւնն անպարագիծ ,  
Երդուաւ յանձրն իւր , երդուաւ յանմահութիւն իւրոյ  
կենացրն յաւերժից .

«Զօրութիւնք երկնից , առ , վկայ լերուք , դուք վկայք» (1) .

«Երբ մարդ Աստուած ըլլաւ ուղի , ես մարդ կ'ըլլամ» :

Եւ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵԻ :

Եւ անա հրեշտակային բոյլեր հոյլ ի հոյլ պարելով ,  
գեղգեղ լաճայն կ'երգեն . «Փառք ի բարձունս Աստու-  
ծոյ» :

\* \* \*

Ու եղաւ օր , եւ կինն էրկանը կ'ըսէ . «Երբ ես  
ստեղծուեցայ , ինչո՞ւ չըսիր Տէր Աստուծոյ , որ սա ա-  
րեւը թագ ընէր գլխիս եւ լուսինը պարանոցիս ման-  
եակ» :

— «Երբ զքեզ առաջին անգամ տեսայ , սիրականս ,  
հողեակս , սրտիս տիրականդ , այնքան խեղայեղ եղայ ,  
որ ես ուզեցի , միայն ես արեւ ըլլալ իբր թագ վերեւ  
գլխիդ , եւ լուսին՝ իբր մանեակ պարանոցիդ , այլ այժմ  
որովհետեւ կ'ուզես , եղիցի» :

Եւ կը փայլատակէր երկինք , եւ երբ արեւ եւ լու-  
սին . . . Աստուծոյ ձայնը կը լսուէր դրախտին մէջ , որ

(1) Քաղուած Հայ դիւցազներգութենէ մը :

կ'ըսէր Ադամին. «Փոխանակ զի լուար ձայնի կ'նոջ քո, զամենայն զոր ետու քեզ, ի շինեղ ետու եւ ոչ ի քակել, անիծեալ լիջիր դու. զհետ կ'նոջ քո երթիցես զամենայն աւուրս կենաց քոց»:

Եւ Տէր յետոյ Եւային կ'ըսէ. «Եւ զի այր քո էր արեւ իբր թագ ի գլուխ քո, եւ լուսին՝ իբր մանեակ ի պարանոցի քում, եւ ոչ գիտայիր դու զքո զայս փառս, անիծեալ լիջիր եւ դու. զամենայն աւուրս կենաց քոց. հայեցիս յետս, ընդ յետ կոյս հայեցես, տեսանել թէ իցէ՞ այր քո զկնի քո»:

Եւ վերացաւ փառք Տեառն յերկինս:

\* \* \*

Ադամ ու Եւա կ'ողբային:

Ու լսեց Տէր անոնց հեծանքը եւ գլխացաւ. կը ձայնէ Ադամին. «Կինդ զոր ետու քեզ, ծնցի ՈՐԴԻ, ՆԱ գլցէ զարեւ՝ թագ ի գլուխ քո եւ զլուսին՝ մանեակ ի պարանոցի կ'նոջ քո (1):

Եւ հրեշտակներ ա՛նս կ'եղանակեն սաւառնաթեւ պարելով. «Սուրբ, սուրբ, սուրբ. Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառք քով. օրհնութիւն ի բարձունս»:

(1) Սաղմ. ՀԱ. 6—11.



### ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ



Աստուածայայտութեան տօնի անմիջապէս յաջորդող տօնն է «Մ'սուղ սրբոյն Յովհաննու Կարապետին»։ Չկայ վանք, ժամ կամ մատուռի՛լ՝ որ սուրբ Կարապետ անունով սեղան կամ խորան չունենայ, որոյ եւ անունով ուխտաւորութիւնն ամէն ուրեք կայ ու կայ, մանաւանդ ի Մուշ եւ ի Կեսարիա, ուր մին քան զմիւսն իրարմէ աւելի շքեղապայծառ եւ մեծահոգակ կանգուն կան երկու մայրավանքեր։

Չկայ սուրբ մը որ ատելով ատած ըլլայ կինը, որքան այս Սուրբը։ Արդէն կենդանութեան ատեն ամուսնի ապրեցաւ, հակառակ հրէական այն ընդհանուր պարտաւորութեան թէ ամէն Հրեայ գոնէ կին մը ունենալու է։ Դեռ ցայսօր ոչ մէկ կին եւ կոյս կը ժպտնի հպիլ եւ համբուրել այն հողը, այն լոյս գերեզմանը, ուր կը հանգչի ան։ Դարաւոր պատուութենէ մը, տխուր եւ սրտաճմլիկ, թէ սուրբ Կարապետ զո՛հ եղած է կ'նոջ մը կատաղի մոլեգնութեան (1), կը հնարուի եւ դեռ ցայսօր կ'աւանդուի սա երգն ու առասպելը.

«Լկսի աղջկան ըսած խաղը (2)  
Չը ստղնար սրսխս խաղը (3).  
Դիւանասուեր դրան դեմի  
Միտ կը կսրէր անոր բուեր»:

(1) Մատթ. ԺԴ. 1—13, Մարկ. 2. 14—30.

(2) Մանի. (3) Չարիքները.

Հերովդեիադայի աղջիկն էր սա, Սողոմէ, որ դժոխքի դրան դէմ անհուն կ'սպասէր, որ գայ Քրիստոս եւ գթութիւն հայցէ: Եւ կը հեկեկար:

«Գթութիւն, Տէր, գթութիւն. տարիներ կը հողովին, դարեր իրարու հետ ընդ հետ կը յաջորդեն եւ ի դուր կը լսեմ. «Պիտի գայ»):

Աչերս հազիւ թէ կը փակուին ու նիրհ մը, ա'հ, եւ ահա Տիրէն, այս անագորոյն Աստուծոյն կը մշտուիմ. «Աբթուն. ահա գայ»):

Ի դուր կը կողկողիմ, ահնապիշ կամ, եւ ստուերներ, մարդու, այո՛ ստուերներ Տիրէն կ'առաջնորդուին ի հանգիստ. ի դուր կը պաղատիմ Տիրին, որ գոնէ մրափ մը չնորհ ըլլայ, ա'հ, ահա խուպոտ ձայն. «Աբթուն. ահա գայ»):

Այն անիծեալ օրէն ի վեր, այն օրհնեալ գլուխը, արիւնդուայ գլուխն աղու աչերովն ինձ նայեցաւ, սարսափ եւ սարսուռ, այն օրէն ի վեր ա'հ. ի դուր գթութիւն, գթութիւն հայցեցի, կողկողեցայ. եւ ձայնը թէ «Ահա գայ» կը լսուի միայն, բայց...

Ո՛հ, չկայ գթութիւն, մինչեւ որ գայ Ան, ՓրկիՉը:

Եւ օր մը, սխրալի եւ հիանալի օր, Բեթլեհեմի լեռներէն կը ծագէր Արեւը, կը ճառագայթէր հոն ուր այս հերարձակ աղջիկ, լալագին կծկած էր դիւանատունի դրան դէմ, քնատ երեսով եւ դժգոյն դէմքով: Այո՛, գթութեան արեւն էր Ան, ՓրկիՉը, որ կը գրկէր, գուրգուրազին համբուրելով հէք աղջիկը՝ լուսածղի եւ լուսադննդուղ բազուկներովն ի վեր առած՝ սուրբ Կարապետի լոյս գերեզմանի սնարին քովիկը կը հողէր. «Հանգիստ, մրմնջելով, շատ տառապեցար, աղջիկս, ննջէ՛ եւ դու ի քուն յաւիտենից»<sup>(1)</sup>:

Այն օրէն ի վեր կաթողին ալ սիրեց ու գգուեց կինը սուրբ Կարապետ. եւ ինքն ալ ոգեւին սիրուեցաւ մարդկային ազուորիկ սեռէն. աղօթաւոր հաւատուհիներու սրտին սիրական ու տիրական սուրբն եղաւ այլ եւս սուրբ Կարապետ: Խոնկ ու մոմիկ ձօնելով անոր լոյս գերեզմանին անոնք՝ միշտ ցնցեցին անոր փուխ սիրար, եւ կեանք առին, բաղձանք առին, փա՛ռք առին:

\* \* \*

Եօթնանուն է այս Սուրբ. ըստ անունն է ՅՈՎՀԱՆՆԷՒՄ. ՄԿՐՏԻՉ՝ Քրիստոսը մկրտելուն համար. ԿԱՐԱՊԵՏ՝ արդարութեան Արեւուն արուսեակն ըլլալուն համար. ՄԱՆՈՒԿ՝<sup>(2)</sup> դեռ տակաւին որովայնի մէջ Քրիստոսի առաջին երկրպագու ըլլալուն համար. ՄԱՐԳԱՐԷ (Մարգար)՝ կանուխէն գուշակելով Տեառն գալուստն ու մեր փրկութիւնը. ԱՌԱՔԵԱԼ (Առաքեց)՝ ժողովրդդեան քարոզելովը Քրիստոսը: ՄԱՐՏԻՐՈՍ (Մարտիկ) առ մէր պանագանութեան աստուածային օրինաց կենսազրաւ ըլլալուն համար:

\* \* \*

(1) Ինչպէս մեր մէջ այս վէպը, եւ յԵրուսա կ'ուսանողէր Սէ Հերովդեիոս Յովհաննէս Մկրտիչը զլիստակ տալուն համար զտապարտուած է որ յաւիտեան բալէ, որուն կը դիմաւորէ դարերու շրջանի մէջ օր մը այն կողակար Հրեայն, որ երբ Քրիստոս խաչն ի շարակ կը տարուէր ի Գողգոթա, եւ խոնջէրէն շուշ մը առնելու համար սնոր խանութի սեմին վրայ կը դնէր խաչին ծայրը, ուժգին կրց մը գտնելով խաչին, հրած էր Յիսուսը ըսելով. «Քայէ՛», որմէ պատասխան տուած էր. «Եւ դու յաւիտեան բալես ինձ պէտք: Ինչպէս յայտ է ամենուս, այս է ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ զբրին յօրինուածուծեան հիմը:

(2) Եթէ ոչ Մանուկ՝ ԱՒԵՏԻՍ:

### ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Սուրբերու տօնախմբութիւններն որոց մէջ շքեղագոյնն է սուրբ Կարապետինը, եօթնանուն ըլլալուն համար, եւ կը կատարուին հայ ժամերու եւ տուներու մէջ, ոչ թէ միայն հիասքանչ են, այլեւ բարոյականի այնպիսի գերընտիր դասեր, որոց նմանը դուն ուրեք կը տեսնուի օտարազգիներու մէջ:

Տօնախմբուած օրուան սուրբի անունն ունեցող որքան աղեկներ կան, առաւօտուն «Մանկունք» ըսուած շարականի ատեն շապիկ հագած, վառ մոմ ի ձեռին կը կենան իրենց հօր կամ մօր եւ կամ տարէց մէկ ազգականի առջեւ մինչեւ ցլերջ «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի. յետոյ կարգաւ կը համբուրեն երէցներու եւ տիրացուներու, իրենց հօրն ու մօր եւ ազգականներու աջը: Իսկ եթէ տօնուողը տարէց է, փոխան իւր՝ շապիկ կը հագնի եւ մոմ ի ձեռին կը կենայ իր տան կամ ազգականներու փոքրիկներէն մէկը: Միայն թէ սուրբ Ստեփանոսի տօնախմբութեան օրը պղտիկներն իրենց գլուխը սաղաւարտիկ ալ կը դնեն, որք յատկապէս այս օրուան համար շինուած պատրաստ են. ի Սվազ յաճախ էր այս:

Պատարագի ատեն սարկաւազը ձաշու գրքէն առաջ Աւագ-սուրբ Աստուածի ատեն բեմէն իջնելով կը խնկարկէ անոնց, որք օրուան սուրբին անունն ունին եւ կը հրաւիրէ ի համբոյր սուրբ Աւետարանի:

Եթէ պատարագի օր ըլլայ եւ սուրբի անուն ունեցող չըլլայ, սարկաւազը կը խնկարկէ երէցփոխին կամ իշխան աղայի եւ կամ անոր միայն՝ որ նոյն օրը մատաղ կ'ընէ եւ կամ հոգեհանգստի պաշտօն կատարել կուտայ:

Նոյն օրը ամէն ոք տօնուորին տունը կ'երթայ շնորհաւորի, մեծ ու փոքր ով որ ըլլայ, վառ մոմ ի ձեռին հոն կը մտնէ եւ կը շնորհաւորէ, եւ յոտնկայս կ'սպասէ, մինչեւ որ ուրիշ մը գայ եւ իրեն յաջորդէ, այսպէս կը շարունակուի մինչեւ ցճաշ, եւ այն ատեն սեղանի շուրջը կը տնկուին այդ մոմերը, վառուած. եւ կ'սկսի կերուխումը: Այս գեղեցիկ սովորոյթն աւա'ղ, գրեթէ այժմ շատ տեղ ի գաղարի է, եւ բարոյական այս կապն, որ սրտերն իրարու կը կապէ եւ առիթ ընտանեկան բիւր բարիքներու, խղուելու վտանգին մէջ է:

Կերուխումի ատեն շնորհաւորի մաղթանքներն այլազան են եւ անհնար է աստ մի առ մի թուել, միայն թէ խաղեր կան, որք Կաղանդէն մինչ ցԲարեկենդան կը կատարուին. Սահակը, Եէղուրճի (սառած ձիւն) վրայէն քշելով, Զիւնագնտիկը եւ Քէլէկը: Քէլէկը կը շինուի իրարու ազուցուած լայն ու երկայն փայտէ ձողերով, որոց ներքեւէն ու ետեւէն եւ քովերէն օդով ուռած տիկեր կը զետեղուին: Քէլէկն է դուրան եւ քառակուսի. ուղեւորներն եթէ շատ ըլլան, երկու Քէլէկ իրարու կը միաւորին: Վարպետ եւ փորձ թիավարներ կը շահին մրցանակը ծափահարութեամբ հանդիսականներու, երբ Քէլէկին մին միւսէն կը կանխէ գետին միւս ափը կամ նշանակէտը: Ի Միջագետս, ուր ջուրն է յորդ եւ արագավազ, Քէլէկին տիկեր չեն կապուիր, այլ կանսփի հաստ չուաններով իրարու կցուած ու կապուած գերաններ կը կազմեն Քէլէկը, որ կ'ըսուի Տափ, եւ կը քշուի գետն ի վար:

Քէլէկներու երբեմնակի իրարու ընդհարումի ատեն զիրար ջրով ողողել, թիով իրարու հետ կռուիլ, ջուրին մէջ նետուիլ կամ ստիպել զիրար՝ նետուիլ եւ վե-



Ի հոն դրնեմ գլխիկս փարին,  
 Հոգիս ի սամ Թուխ-մանուկին.  
 Ի հոն ֆնեմ սուրբ Կարապետ,  
 Ումուսասուր սուրբ Կարապետ» (1):

\* \* \*

Հապա աւանդավէպերն, որք պապերու եւ մամե-  
 բու բերաններուն մէջ կը վխտան սուրբ Կարապետի ա-  
 նունով, որոց մին շատ սրտառու է եւ դաս միանգա-  
 մայն կենցաղօգուտ բարոյականի:

Օր մը, գեղանի բայց գեղջուկ կոյս մը համարձա-  
 կեցաւ մտնել սուրբ Կարապետի գերեզմանը, ուր մտնել  
 մինչեւ ցայտօր արգելուած է կիներու եւ աղջիկներու:

Բայց աղջիկը ինչ կ'ուզէր սուրբ Կարապետէն. —  
 Իրեն պէս աղուորի՛կ էրիկ մը: Եւ տաճարին գմբէթնե-  
 րը կը թնդային երբ սա ձայնը կը լսուէր գերեզմանէն.  
 «Արուէգ-ըլլաս»:

Եւ ահա աղջիկը կերպարանափոխ եղաւ, պէս ու-  
 նեցաւ եւ որ սոս'լալին է, պոչ ալ ունեցաւ:

Աղջիկն այս պատիժէն սարսափահար եւ միանգա-  
 մայն ամօթահար՝ ուխտեց սուրբ Կարապետի վանքէն  
 չհեռանալ:

Այլ սակայն այս աղջիկն որ որձեւէգ եղած էր  
 եւ ուխտած էր սպասաւորել սուրբ Կարապետի Օճա-  
 խին, զայն վառ պահելով եւ պոչովը մաքրելով. թըշ-  
 նամի մը ունեցաւ, այն է Տիրը, Հուրին՝ այս էր աղջ-  
 կան անունը, որքան որ կրակը կը վառէր, Տիրը գաղ-  
 տուկէն հոն՝ օճախը մտնելով՝ կրակը կը մարէր: Ա՛լ

(1) Կայ եւ ուրիշ երգ յԱնդիր Գ. Գ. Ա. հատոր, երես Թ.—Ժ.

ճարահատեցաւ Հուրին, լրտեսեց եւ օր մը հաստկեկ  
 բերով անոր սոներուն ուժգին զարկաւ եւ վիրաւորեց,  
 այն օրէն ի վեր մինչեւ ցայտօր Տիրը կ'ըսուէր Կաղ-գրող  
 կամ կրող, որուն ըսաւ Հուրին. «Այսուհետեւ սուրբ  
 Կարապետին օճախին ըլլաս փոշեհան եւ կաղանա՛ս»:

Բայց վրէժխնդրութի՛ւնը. — ամենասարսափելի  
 պիտի ըլլար. Տիրը յաջողեցաւ օր մը Հուրին կառչել  
 եւ պոչը խածնել, փրցնել ու փախչիլ: Եւ ահա Հուրիէն  
 դաւակ մը ծնաւ, այն է Լոշտակը: Որձ-էգէ կարելի՞ է  
 դաւակ ըլլալ. այդ չէ գիտնալու բանը, այլ գիտնալու  
 բանն այս է որ տիեզերքի մէջ, կամ ըստ արդի բար-  
 բառի բնութեան մէջ անակնկալներ կան:

Եւ ահա ձայներ կը լսուէին.

«Ո՛ր ջուրք անոյ՛ց, որ գեղեմին ծանեայք ըզուանըս,  
 եւ գրգեցեմն զձաղկունըս,  
 Ձեր զի՞ վիժակք փաղձրուքեան  
 Անդէն յաղի աչաց ալբիւր դառնացան»:

Այս երգն որ կը լսուէր, չարագուշակ էր անոր որ  
 դաւակ ունեցած էր, եւ որ այլ եւս ժողովուրդէն կը կո-  
 չուէր ԱՆՊՈԶ-ՃԳՆԱՒՈՐ:

Հին Հայերն արդարեւ վէպը սիրած են: Որքան որ  
 կրօնական վէպն էր յարգի, բայց ա՛լ աւելի յարգի էր  
 միւսը՝ մաաւը: Ժողովածուն կրօնական վիպագրութիւն  
 մը էր, այլ սակայն Պղնձէ-քաղաքը յաղթանակը տա-  
 բած էր: Այս երկու գրքերը մեր շատ մը հին գրքերէն  
 առաջ տպուեցան, ինչպէս Ախթարքը, որպէս զի ճշդուի  
 սա առածը թէ «Խաւար էր նախ քան զլոյսն»:

Անպոչ-ճգնաւոր հարց կ'անէր եւ կը վայէր զա-  
 նոնք, եթէ ճիշդ չպատասխանէին: Այն ատեն այս էր  
 հայական փիլիսոփայութիւնը. չէ՞ք հաւատար, լսեցէք.

«Ձանբոյսն անծնին բարձին, եւ ընդ անդադարին երդս անցուցին»:

— Անբոյսն՝ ալն է, անծինն՝ ջորին է, անդադարն՝ ջուրն է, երդիք՝ կամուրջն է:

«Այն ո՞վ էր, որ ետ խրատ մարդոյ. ոչ ոգի էր եւ ոչ մարդ եւ ոչ հրեշտակ»:

— Բաղասամու ետն էր:

«Ինչո՞ւ ժամուն մեջ պատարագի Հաւատաւիքն ասեմք ձեռնամած կ'ըլլան»:

— Վասն զի գառներն Քրիստոսի մտուրին մեջ իրենց առջեւի ոտներն իրարու վրայ բերելով՝ իրենց ետեւի ոտներուն վրայ կանգնած բարեւի կեցան:

Այս տեսակ հարցեր ու պատասխաններ կը վխտան Պզնձէ-քաղաքին մէջ <sup>(1)</sup>, որուն հեղինակը կը կարծուի Անպոչ-ճգնաւոր:

Իսկ սուրբ Կարապետ գլխաւով Անպոչ ճգնաւորին. չնորհեց անոր մօրուք մը, փառաւոր մօրուք, կղակէն մինչեւ ոտները տարածուած մօրուք, որպէս զի այդ մօրուքով մաքրէ իր օճախը: Կ'երեւի թէ այն ատեն ստեղծուած կամ հնարուած չէր աւելը:

Բայց որովհետեւ սուրբ Կարապետ ուրիշ չնորհեք չտար մէկու մը որ իր գերեզմանին կ'երկրպագէ եւ մեղրամոմ մը կը վառէ. — ճրագու մոմ չ'ընդունիր — այլ սազ մը կուտայ եւ կ'ընէ աշուղ: Անպոչ-ճգնաւոր եւս որ սիրականն էր սուրբ Կարապետի, սազ էր առած եւ աշուղ եղած, որու երգերն մինչեւ այսօր կ'եղանակուին մայրավանքերու մէջ եւ Թուխ-մանուկներու մօտ եւ կամ Լուս-աղբիւրներու քով: Ահա նմոյշ մը.

(1) Վերջին տիպ 1861, երես 106—127.

«Այդ վայրի լեռներէն ի վայր Ջուրն ի շինիդ անցանի. այ. Թուխ-մանուկ մի դուրս էլեր, Ձեռնն ու զերես է լուացեր.

Դարձեր ի ջուրն՝ հարցունք աներ այլ,

«Ջուր դու, ի յո՞ր լեռներն կուգաս, իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ այլ»:

— Ես այն լեռնէ կուգամ,

Որ հին ու նոր ձիւնն ի վերայ այլ:

«Ջուր դու, ի յո՞ր առու կ'երթաս, իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ այլ»:

— Ես այն առուն կ'երթամ,

Ուր փունջըն շատ է մանուշկին այլ:

«Ջուր դու, ի յո՞ր այգի կ'երթաս, իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ այլ»:

— Ես այն այգի կ'երթամ.

Որ տերն ի մեջն է այգեպան այլ:

«Ջուր դու, ո՞ւր տունկ կը ջրես, իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ այլ»:

— Ես այն տունկըն ջրեմ,

Որ տալըն խոտ բերե գառին,

Ծառըն խնձորի, հազա-վարդին այլ:

«Ջուր դու, ի յո՞ր պաղչա կ'երթաս, իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ այլ»:

— Ես այն պաղչա կ'երթամ,

Ուր պուլպուլին քաղցր եղանակ այլ:

«Ջուր դու, ի յո՞ր աղբիւր կ'երթաս իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ այլ»:

— Ես այն աղբիւր կ'երթամ,

Որ գայ քո ետնն ու ջուր խմե.

Դեմ գամ, բզդունչըն պագենմ,  
Ապա սիրովն յագենամ» :

Աւա՛ղ Գրիստոս կ'ըսէր. «Ոչ է մարթ չգալ գայ-  
թակղութեան». արգի իմաստասիրութիւնը պնդելով կը  
պնդէ թէ չկայ մարդ մը որ փորձութիւն չունենայ :  
Անպոչին փորձանքն էր Լոշտակը, որ անառակ էր, որ  
երգը չէր սիրեր եւ կը ծաղրէր Անպոչը : Օր մը, սեւ օր  
մը, երբ Անպոչ կ'եղանակէր Բեթլեհէմի տղեկներուն  
ի յիշատակ սա տաղերգը .

«Արբունք գուարբունք,  
Բանին բանաւոր ծիծունք,  
Գարնան աւետիս,  
Իւրախին գոյնզգոյն ծաղկունք :  
Եւ փայտաբերդիկ  
Զարմին՝ զանազան մրգունք,  
Յեղեմ շնչական  
Ընտրեալ՝ լուսափայլ ասղունք :  
Թուչունք թելաւոր,  
Ժողով ձեր ի ծառ 'ւ ի տունկ,  
Ի ժամ գիշերի,  
Լոյս լուսակարկաչ ասղունք  
Խնկաբեր լերանց,  
Ծառ ծաղկաւաղիկ մանկունք» :

Լոշտակ Անպոչին երեսն ի վեր պոռաց . «Այդ Աստ-  
ուածը կը պաշտէք, որուն ծնունդը Բեթլեհէմի երա-  
խաները կենսազրաւ ըրած է :

Սարսուաց Անպոչ, եւ լի բարկութեամբ գոչեց .

«Ոնիրդ է մեծ, գետինն անցիր .

Զի է՛ր քեզ պէս պիղծ ո՞ք ժպիրհ

Ընե՛ դեռ կոխ,  
Սուրբ Կարապետի հող» :

Եւ ա՛նա գեախնը կը բացուէր եւ Լոշտակ հողամոյն  
կ'ըլլար եւ կը ձայնէր Անպոչին . «Մէկը պիտի չըլլա՞յ,  
որ զիս հողէն դուրս հանէ . գթութիւն» :

— «Ով որ ըզեզ հանե՛ սեղեզ,  
Ան բող մե՛նե՛ փուկին սեղը .  
Վկա՛յ բող ըլլայ սա արեւը» :

Բայց Անպոչ խղճահարեցաւ, վասն զի գեանէն միշտ  
կը լսէր սա ձայնը . «Գթութիւն, գթութիւն» : Ճարա-  
հատեցաւ եւ խելայեղ՝ կոճղեր նետեց դիպեց, եւ բո-  
ցաւաւ օճախին մէջ նետեց զինքը գոչելով . «Մեղայ  
Տէ՛ր, մեղա՛յ» :

Եւ արդարութեան Արեւուն արուսեակը — սուրբ  
Կարապետ երկնքէն վար, լուսածրար ամպերը պատե-  
լով իջաւ, եւ իննախնայ ջրերէն ափով ջուր նետեց օ-  
ճախը, ուր կ'ածխանար Անպոչ, բռնեց Անպոչի մօրու-  
քէն, յօգն ի վեր երիցս ձօճելէ յետոյ՝ նետեց ամխա-  
ցած մարմինը լեռն ի վեր, ըսելով . «Այսպէս քարար-  
ձան թող ըլլայ ան՝ որ Աստուծոյ լոյսն ի հող կը թաղէ» :

Այն օրէն ի վեր մինչեւ այսօր սուրբ Կարապետի օ-  
ճախը մարած է, եւ հարցուի թէ ինչո՞ւ է մարած . մատ-  
նանիչ քարարձանին՝ կը պատասխանուի .

«Դատաւորն ահաւոր, դատաստանն արդար» (1) :

\* \* \*

Այս Սուրբն որ իր կեանքին մէջ ժուժկալ ապրե-  
ցաւ, գինի եւ օղի ԲՆԱԻ չխմող ուխտաւոր մը էր եւ

(1) Այո վեպ տարրեր իմն եւս կը պատմուի յԱնպոչ Գպ. Ա. հատոր,  
երես ԽԲ—ԽԵ.

միայն կերածն էր մարախ եւ վայրենի մեղք, եւ հա-  
գուսան էր քուրձ եւ կաշիէ գօտի մը, այլ սակայն  
այնքան առաւել պաշտուեցաւ խմաններէ եւ շուայտ-  
ներէ: Կաղանդի եւ Սատուածայայտութեան տօներու  
կերութեաններէ ա՛լ աւելի առատ եւ ճոխ էին այսօ-  
րուանները: Չկար մէկ գիւղ որ մատաղ չունենար եւ  
գուցէ ոչ մէկ տուն՝ որ աքլոր մը կամ գոնէ հաւիկ մը  
չմորթեր: Մանաւանդ մուրիկներն ու աշուղներն, ար-  
բացուներու եւ տէրտէրներու հետ ա՛լ աւելի ժողովրդ-  
դին եռանդը կը հրահրէին եւ կը մղէին ի շուայտու-  
թիւն: Կուշտ ու կուռ, ճաթելու չափ խմիչքի փաստ  
կը բերէին թէ Կաղանդի օրն եթէ եօթն ըրախի օր է,  
սուրբ Կարապետինը եօթանասնեքին եօթն է՝ եօթն ա-  
նուն ըլլալուն համար: Եւ ո՛ւր սաղերդ չկար խմիչ-  
քի ի գրգիռ:

Արեւելք առաջին,  
Եւ արեւմուտք որ ի վերջին,  
Նստեալ նայինք դեպ ի փարջին  
Որ գանազան է իւր մեջին.  
Բարեխօսեա առ մեծ ֆըջին,  
Խիստ անուշ է մեջի գինին:

Բարեխնամ է գինին,  
Եւ յոյժ փառօք սեղան լինի.  
Գեր գեր հաւի միս մեր բերնի  
Համով համեղ թող կուլ լինի:

Գոյնզգոյն շատ մեծ է,  
Նղով սապկած ձուկըն քաղէ.  
Օրբան եփած փիւթիւն խազ է,  
Մանուր մարդը բուրժի կ'ուզէ:

Դարձեալ նայինք թէ ի՞նչ կայ,  
Հելվա, պեօրեք ու փախլավա.

Օրբան եփած գեր հինգի կայ,  
Մեջը լեցուն պահարլամա:

Երանեան հելվա է,  
Չարմանալին փիլալ գերեք.  
Եւ պատուական փաշա հելլէ,  
Ծեծած կծու սխտրով է:

Չարդարեալ է սեղան  
Եւ յոյժ բարեօք սեղան բուրման.  
Յեղ գեղ հաւեր մեջը օրման  
Փիւմիւր ֆրասքիսով միաբան:

Էլից զաւարն գինիի,  
Հասլնիսիր մասիգայի  
Գինին կարմիր է բարեի,  
Օղին պաղուկ սիւզ կըլլելի:

Ըստխօզին սայաքային,  
Հոգիս կուսամ մեկ պատանին,  
Պարպունեայով լաւ մերմանին,  
Իւլիւֆերին ըստարային:

Թագաւոր լաւիսեան,  
Իւկեմպէին եփուն չօրպան,  
Արեւմուտքին սառք զրրվան  
Գինով մարդուն է նաձախան:

Ժողովեալք արբեցեք,  
Թավուզ կեօփիւն լաւ ձեծեցեք,  
Էլմասիէն լոյք կըլլեցեք,  
Ընալանին ինձ թողուցեք:

Իրաւարար խառ լոխման,  
Խարխրնիով չոր պողպան  
Սղուր եփուն այն փախլավան,  
Որ խայմախով է միաբան:

Լարեալ եռֆխան հաւկրթով  
Մուսուրուի լաւ պանիրով,  
Մայսանոսով քերօթով  
Խըվըրներխին ալ խըյմայով:

Խաղաղութիւն ամենեցուն,  
Իւսկիւմբիւլիւն փոքր լեցուն,  
Օրբան եփած այս բովացուն.  
Քաւաթ մը տուր գինի լեցուն...:

Կամաւոր պատարագ,  
Ով խմիչֆին նահասակ,  
Զըրվա, գեվգեկ եւ պանպառակ  
Թամամ կ'ըլլայ խափ-խայտառակ:

Այլ այս Սուրբն որ կինը չսիրեց, իր աշուղներուն  
տուն տուաւ որ կինը գովասանեն, սէրը երգեն.

Կեռսանը սիրեմ, կեռսանը,  
Կ'ըլմանի ժամուն մէյսանը:

Թուշիկը սիրեմ, բուշիկը,  
Կ'ըլմանի ժամուն խուշիկը:

Բեռանը սիրեմ, բեռանը,  
Կ'ըլմանի ժամուն խորանը:

Քըքիկը սիրեմ, քըքիկը,  
Կ'ըլմանի ժամուն քիւքիկը:

Աշուկը սիրեմ, աշուկը,  
Կ'ըլմանի ժամուն խաշուկը:

Անկանը սիրեմ, անկանը,  
Կ'ըլմանի ժամուն զանգակը:

Ճակասը սիրեմ, նակասը,  
Կ'ըլմանի ժամուն գագաթը:

Մագերը սիրեմ, մագերը,  
Կ'ըլմանի ժամուն աւելը:

## ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Հին-Օրէնքի յետին եւ Նոր-Օրէնքի առաջին սուրբն  
այն է Յովհաննէս Կարապետէն յետոյ իբրև նշանաւոր  
սուրբ կը տօնուի սուրբ Սարգիս, որ հանրածանօթ է առ  
հասարակ ժողովրդեան իբր «Ա.Ղ.Զ.Ի.Կ. ՓԱ.ԽՅԸՆՈՂ, այս-  
ինքն տնէ տուն աղջիկ փոխադրող եւ տեղաւորող  
սուրբ: Այս Սուրբն է հակապատկերը սուրբ Կարապե-  
տի, որ մարդկային աղուորիկ սեռին դէմ քէն ընող  
հոչակուած է միշտ, իսկ սա՛ սուրբ Սարգիս ֆէյֆ ընող-  
ներէն է համբաւուած, խանդալաթ սիրով հողածու-  
թեամբն առ ամուրիս եւ առ կուսանս, որոցմէ եւ  
միշտ վնասուած ու յարգուած:

Այս միակ Սուրբն է, որ ամարանոց չերթար, իր-  
մէ՛ առաջ տօնելի բոլոր սուրբերուն պէս, որք ատեն  
ատեն մագոգի պէս կ'երթեւեկեն մերթ ամարանոցէ ի  
ձմերոց, եւ մերթ ձմերոցէ յամարանոց. — եւ ո՛ր մեր  
մէկ սուրբն, ըստ ամսաթուի, իր տեղը ճիշդ ըրած ունի  
եւ չէ եղած թափառիկոս զինքը տօնած հայ ժողովըր-  
դեան պէս: Զարմանք. իգական սեռին դերը ըլլալով  
ֆէյֆ ընող այս Սուրբն՝ երեսուն եւ վեց տարուան չըր-  
ջանի մէջ, ըստ մեր այրուբենական Տարեգրի, որ է  
Տօնայուցի, իր տեղը տալով իգական սեռին դէմ քէն  
ընող սուրբ Կարապետին, չորս անգամ կ'երթայ դրկից  
ու դրացի ըլլալ անոր<sup>[1]</sup>:

(1) Մեր Սուրբերուն ուրիշ ազդերու սուրբերուն պէս ըստ ամսանուի

ՃԵՐՄԱԿ ձիաւոր սուրբ Սարգսէն զատ՝ կան ուրիշ ձիաւոր սուրբեր եւս, որք նշանաւոր եղած են եւ ի ձի աշտանակած նկարուած եւ աւանդուած են հայ ժողովրդեան: Այս սուրբերն են գլխաւորապէս ինչպէս Ճերմակ ձիաւորն սուրբ Սարգիս, եւ Կորսաղիւճն սուրբ Մինաս, Տիգրաւուն սուրբ Գէորգ, Նշխուն ձիաւորն սուրբ Թէոդորոս կամ Թորոս եւայլն, որք թէեւ ծագմամբ եւ անուամբ օտարադգի կը յիշուին, այլ որովհետեւ այս սուրբերու սխրտի եւ հրաշալի գործերն ընդհանրապէս մեր մէջ հռչակուած եւ կատարուած են, ուստի միշտ յարգուած ու սիրուած են մերայիններէն եւ այնքան չափազանցօրէն, որ այլ եւս այս սուրբեր լոյրորովին գրեթէ հայացած են:

Բարեպաշտ մամիկներ, կիներ ու աղջիկներ սուրբ Սարգսի պահճի առաջին երեք օրն այսինքն կիրակի կէս գիշերէն սկսելով մինչեւ չորեքշաբթի երեկոյ՝ ծոփ են [1], եւ օրական երեք անգամ քառասունական ծուներ աղօթք կ'ընեն: Չորեքշաբթի երեկոյ ամէն տուն՝ ցորենի բովրած ալիւրէ եւ խաղողի ուսպէ թրուած անուշեղէն կը շինեն, զոր «ղայութ» կը կոչեն: Այս քաղցրեղէնը մեծկակ տաշտի (կոնքի) մը մէջ կը շաղէ ասն տիկինը ցերեկուան ատեն: Այդ անուշեղէնի խմորը՝ որոյ վերայ խաչի նշան ձեւացուած է, բաձը ծրարուած կը պահուի, որպէս զի սուրբ Սարգիսն — որ Յոյն աղջիկը կուսպաշտութեան ձիրանէն ազատելու համար՝

չտօնուիլը՝ կիրակիէ է, որ Աստուծոյ նուիրուած միակ օրն ըլլալուն՝ նոյն օրը սուրբի յիշատակութիւնն անկանոնական դատուած է, ըստ աւաքելական ամենահին ուսանդուեան:

(1) Պայպուրթ եւ տեղ տեղ չորեքշաբթի երեկոյէն ցշարած առաւօտ ծոփ են:

իւր հրեղէն Սպիտակի գաւակին վրայ առած՝ Բիւզանդիոնի պարիսպներէն դուրս Մարմարայի անջրպետը յատկելով Քաղկեդոն կը մտնէ, եւ անտի լեռնէ լեռ թռչելով՝ աստուածափառ Մասիսի գագաթը կը բարձրանայ, իւր հակառակորդներուն երեսին փչելով սարսափելի բուքն ու քամին, — աներևոյթապէս գայ եւ իւր ֆանիղ ձիու պայտի նշանն՝ այդ անուշեղէնի զանգուածի վրայ դնէ: Նոյն չորեքշաբթի երեկոյին տանուտէնն սեղանի գլուխը կը բաղմը եւ աղօթելէն յետոյ՝ փոխինդի համար քիչ մը խարկած ցորենի ալիւր իւր բերան ձգելով՝ կը փչէ, եւ դանակ մը ձեռքն առնելով սեղանի վրայ դրուած դայռի զանգուածն իր անեցիկներուն թուոյն հաւասար քանակութեամբ կը բաժնէ. եւ ամէն մէկին բաժնը տալով կը բարեմաղթէ. «Սուրբ Սարգիս քե պախապան եղնի»։ Հուսկ ուրեմն կտոր մ'ալ դայռ սեղանին բաժնն կը թողուի [1]:

Կոյս աղջիկներ եւ փեսայուներ նոյն օրն չոր բլիթներ կը շինեն [2], եւ իրենց տուներու տանիքներու վրայ կը դնեն. երբ ագռաւ մը կամ անծեղ մը գայ եւ այդ բլիթը կտցահար ո՛ր կողմ՝ որ տանի կամ ուր ձգէ, իրենց դրամեքն ալ այն կողմէն գալը կը գուշակեն: Այդ չորեքշաբթի երեկոյն ընթրիքէ ետք, ամուրի երխա-

(1) Թէ Սարգիս վարդապետ մը կայ եղեր, որ շուն մը ունեցեր է, որ իրմէ առաջ իր գալուստն իմաց տալու համար գիւղեր կը շրջէ, որ գիւղացիք դիմաւորեն զինքը: Վարդապետին Առաջնորդը կամ ըստ ուսանոյ լեզուի Արցիխօրան եղող այս շունն երբ սատկեր է, իրր Թէ վարդապետին անունով այս սուրբ Սարգսի պահքն ալ Առաջնորդաց պահք ըսուեր է, շունին ի յիշատակ եւ ի պատիւ. — հայանսխտա առապելի վատողի յերիւրանք:

(2) Պայպուրթ փոխինդ, որոյ մէկ կտորը մեղրի մէջ Թաթխելով կը Թողուն երգիքին վրայ, եւ կ'սպասեն Թռչունին:

տարգններ ու աղջիկներ ջուր չեն խմեր, քիչ մ'ալ աղի բլիթ կ'ուտեն, որպէս զի իրենց ծարաւը զօրաւոր իմն գրգռի, ու իրենց անմեղ քնոյ ատեն ինչ գոյնով եւ անսքով օրիորդ կամ երիտասարդ երազով դայ, եւ անոնց պատուքին դաւաթ մը ցուրտ ջրով յագուրդ տայ, ճիշդ ու ճիշդ ան պիտի ըլլայ իրենց ամուսին:

Իսկ ի Վան կը կատարուի այսպէս. բուքերու եւ սըլուլի [խիտ ցուրտ] տէր այս Սուրբի բարեկենդանին՝ Լիմ անապատի սրապիտներուն [մահակեաց] աւելի ջերմ եւ աւելի զօրաւոր անապատքով կը հարցուի:

«Մարէ՛, ինչի՞ այս պահոյ՝ «Առաջաւորաց» անուն կուտան»:

— Որդի, նոր տարուան մէջ առաջին շաբաթապահքն է, եւ ձոչ-պահոյ ճամբայ խորդողն [հարթող] է, Յունան մարգարի յիշատակն է. այս ուրբաթ օր «Դեմիկ<sup>[1]</sup>» կը կարգան. մէկ ալ օրն լէ «Սուրբ Սարգիսի եւ որդւոյ նորա Մարտիրոսի» սօնն է:

Աղջիկներ ուրբաթ երեկոյ փոխինդ կը շաղուեն, եւ զայն գաղտ ուրոյն կը պահեն աղօթքներ արտասանելով որպէս զի կէս գիշերին սուրբ Սարգիս իր պօղ [գորշագոյն] ձիով դայ կոխել ու անցնիլ, իր պայտի որ եօթը խորհրդաւոր թիւն ունի, հետքը թողլով փոխինդի երեսին վրայ: Վայ այն աղջկան բաղդին, որուն փոխինդի վրայ պայտի նշան չկայ: Գրեթէ ամէն կին ունի յիշատակ մը այս գիշերուան տեսիլներէն<sup>[2]</sup>:

Հրաշափառ սուրբ Սարգիս մինակ աղջիկներուն չէ

(1) Յովնան մարգարէին գիրքը

(2) Մամ կամ պապ սուրբ Սարգիս այս գործը գաղտուկ իրենք կ'ընեն իրենց գաւակներուն սիրտը չտրտմեցնելու համար:

որ բուքի պէս կը համնի, մայրերուն ալ կը վաղէ, որոց զաւակներու աչքին մէջ խիլ կամ կռէթ ընկած է: Այս մայրեր թաշկինակի մէկ ճոթը թուքով կը թրջեն, կ'ուրոյն ու մօտեցնելով վտանգուած աչքին, երեք անգամ կը մրմնջեն այս անխմանալի մաղթանքը. «Այնիս, բաշիս, հաւատամ Սուրբ Սարգիս, խիլ հան, տուր իս»: Անմիջապէս թարթիչներու տակ գտնուած խիլ-խուտոշը վար կ'ընկնի:

Ուրբաթ գիշեր որ շաբաթ կը լուսնայ, մամեր՝ որք հարսնցու ունին աղջիկ՝ կ'երգեն.

«Սուրբ Սարգիս,  
Բռնէ գօսիս,  
Տուն ու երգիք  
Առնուն լուսիկ:  
Սուրբ Սարգիս,  
Բռնէ գօսիս,  
Տուր զաւակիս  
Սիրականիս  
Արեւ լոյս փեսայ,  
Զսփանչ լուսիկկայ,  
Աղուոր քաւոր,  
Քաջ ձիաւոր»:

Իսկ «Աղջիկ-ժողվրտանք»ը որ «ձոնչէք»ի, — ծոմն աւրելու օրը, միշտ շաբաթ առաւօտ կ'ըլլայ, աղջիկներ կը հաւաքուին եւ զիրար շնորհաւորելէ յետոյ՝ կ'ուտեն «Հացըրդոն»ը, հացէձուազեղը, որ իւղի մէջ հաւ կը թով ու ալիւրով շաղուած եւ տապակի մէջ ձգուած ու տապկուած հացի շերտեր են: Փեսացու մանչեր այս

պահուն դէս ու դէն կը պահուըտին եւ կը լրտեսեն ա-  
կընդէտ թէ ո՞րը կրնայ ըլլալ իրենց սրտին սիրականն  
ու տիրականը. սրտաթունդ բոպէներ, հոգեցո՛ւնց Ժա-  
մեր :

Ի Պայազիտ տկզարկի տղեկներու, վաղվղող ճժե-  
րու, լամուկներու պոռպուոցն աշխարհք բռնած է. այ-  
ծի մորուքով, փողցի հաւքուկ ցնցոտիներով, սեւ ե-  
րես մարդուկը՝ խաղքը [1] կը անկտկէ զոյգ քօղքաւոր-  
ներու առջեւ, ծամածռութիւններ ընելով : Քօսա կե-  
լին է, որ Սըբ Սարգիսը տօնելու ելած է : Աղմկայոյզ  
թափորը կանգ կ'առնէ դուռներու դէմ, դիմակաւոր  
հարսներ ձեռք ձեռքի տուած՝ կը պարեն նազանքով :  
Պահոց չորեքշաբթիէն կը սկսի հանդէսը ու կը տեւէ  
մինչեւ շաբաթ օր : Չկայ դուռ զոր չծեծէ խաղքը, եւ  
չկայ մէկն որ չփոխարինէ :

Վաղնջական սովորութիւն է, Սըբ Սարգսի չորեք-  
շաբթին ամէն տուն աղանձ [2] պիտի ընէ : Չարածճի  
տղաներ խումբ կազմած՝ շուն տփելով ման կուգան  
կարէ կտուր, իւրաքանչիւրը թաթպան մ'ունի, զոր  
երկայնկեկ թելի ծայրին կապած, երդիքներէն ներս  
կը կախեն, եւ դուրս կը քաշեն մրգախառն աղանձով  
լի : Շատեր փոխինդ կ'եփեն ու ափսէի մը մէջ լցած՝ կը  
դնեն բարձր տեղ մը, սը երբ «պօղ ձիււոր» Սըբ Սար-  
գիս աղջիկ փախցընէ փեսացու ցոյց տալու համար ա-  
նոր, ձիււն պայտի հետքերը դրոշմուին փոխնդի վրայ :  
Կան պառաւներ որ ջերմ հաւատքով կը պատմեն իբր  
թէ շատ հեղ իրենք նշմարած են ձիււ հետք եւ պայտի  
մխերու նշաններն իսկ . . . :

(1) Սրածայր փայտի ծայրն անցուած ղրխընկոց :

(2) Բովրած ցորեն եւ կանեփ :

Մոռնա՞նք հապա օրիորդներու «ունուսուր» շոռ  
բլիթը : Շատկեկ աղով շաղուած, թոնիրի մէջ եփուած,  
կակուղ հաց մըն է այն. ուրբաթ իրիկուն օրիորդը  
պատառ մի փրցնելով անկէ՝ կը դնէ բարձին տակ,  
մնացածը անուշ կ'ընէ. կը պառկի առանց երբեք ջուր  
խմելու. երազին մէջ ո՞ր երիտասարդ որ ջուր տայ ի-  
րեն, ա՛ն պիտի ըլլայ օր մը իր փեսացուն. իսկ եթէ  
երազ չտեսնէ, պահած պատառիկը, առտուն կանուխ  
դրսի պատին վրայ կը դնէ ու ակնդէտ կ'սպասէ որ  
թռչուններ զան կտցելու եւ կտոր տանելու, եւ թըռ-  
չունուր երթայ, հոն պիտի ըլլայ իր հարսանեկան տունը :

Սըբ Սարգիսը ցաւերու փարատիչ ալ է, մանա-  
ւանդ ծոց-մարերու : Ահա աղօթքի մը փշրանքն որ տա-  
կաւին կը յեղյեղուի պառաւներու բերնին մէջ :

«Թածա խացի [հաց] խոս [հոս] ա գալում,  
Ելեք, տեսի՛ք, ո՛րն ա գալում.  
Իրեք պօղ ձիււոր ա գալում,  
Մեկ Յիսուս, մեկ Քրիստոս, մեկ Ասուածածիւն [1] :  
Էլլան սարով, Երջուան ձորով,  
Հրեշտակադիւ, առով փառով,  
Ասաւ. իմ Տէր, ո՞ւր կ'էթաս հաղար բարով .

— Կ'եքամ դուռն հիւրնդին,  
Էրդիս բանամ ձերնդականին .  
Բազպանս քալեմ վը բարձին,  
Որ չվախի սիրս ի փորին,  
Որ չկապուի լեզուն բերնին. ամեն» :

(1) Յիսուս Քրիստոսն իրարմէ զատ անձեր կարծել, սովորական  
տգիտութիւն ռամկին :

## Պ Ա Ր Թ Ե Ւ Ը

Մեր գեղջուկ տղեկներուն սիրական սուրբն է սա,  
զոր Մենծ-պապուկ կ'անուանեն: Նոքա սուրբ Սարգսի  
յաջորդող օրերուն մէջ հարց կ'անեն. «Պա՛պ, մա՛մ,  
չեկա՞ւ Մենծ-պապուկը»: Շարաթ առաւօտուն պապ կամ  
մամ, միշտ տան մէկ տարէցը, ժամէն գալով տուն կը  
ստնէ: Եւ կը ժողվէ տնեցիները եւ սեղանի կը նստեցնէ  
եւ ինք իբր թէ կը մեկնի: Յանկարծ նա կ'երևի գլու-  
խը խոշոր սրածայր ֆոյոց դրած, ի ձեռին ահագին գա-  
ւազան մը եւ կռնակն ի վար ոչխարենի գզաթ [իկոս-  
թեթի] ձգած. ի սես նորա ծիծաղներ եւ քրքիջներ  
կ'սկսին, իսկ նա գինիի կարասին երթալով մէկ մէկ  
բաժակ կուտայ ամենուն ըսելով. «Եկաւ Մենծ-պապու-  
կը, հազար բարով մեր Բարեկենդան»: Ամէն տնեցի  
պարտաւոր է տարէցին աջը համբուրել, որ կը մրմնջէ.

«Լոյս Լուսաւորչին,  
Հաւասֆ Բրիսոսին,  
Հայ Բրիսոսնեին  
Մեռնի՛մ հաւասֆին»:

Տան էն պղտիկը կ'աղաղակէ. «Ո՛վ է Մենծ-պա-  
պուկը»: Տարէցը կը պատասխանէ.

«Լուսաւորչի լոյս արեւն է,  
Մեր ժամերուն լոյս նրագն է,  
Մեր տուներուն շէնն ու շնորհն է,  
Մեր վանքերուն զարդն ու սերն է...»:

Յետոյ սեղան կը նստին: Տարէցը հացն ու բաժակը  
կ'առնու ըսելով եւ երիցս խաչակնքելով.


«Օրս բարով,  
Տունքս լուսով,  
Հաց ու գինի  
Տայ Տեք բարով»:

Յետոյ կ'առնու բաժակը ըսելով. «Ան որ իմ տանս  
է հակառակ», — կ'արտասանէ հին, շա՛տ հին սա ա-  
նէ՛ծքը.

«Օրն չարով,  
Աչուին կաւով,  
Ասուած ի խռով.  
Աւուրս յոլով  
Ծեծուի բրով,  
Խեղդի ի ծով»:

Սահակ Պարթեւի տօնէն կ'սկսուին բարեկենդանա-  
կան բոլոր ուրախութիւնները եւ անճարակներու հարս-  
նիքները. բայց անճարակ մնալ չըլլար, վասն զի ամէն  
տուն անճարակ-աղքատին հարսնետունը կը լեցնեն ա-  
մէն կերպ բարիքով, Մեծ-պապուկի բարկութենէն  
վախնալով:

### Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց Ա Յ Գ ՈՒ Ց



Այլ սակայն չկայ անտրամախառն ուրախութիւն . բարեկենդանական խրախճանութիւններն այսօր կանուխ առաւօտուն կը փոխադրուին գերեզմանատուն, ուր այսօր անորմեջտ է այգուցը : Այգուցն է հին, շատ հին սովորութիւն : Այգուցն է պաշտօնական սուգ , որ թէ-եւ ցարդ գաւառներու մէջ կը կատարուի , այլ ոչ այժմ մեծ քաղաքներու մէջ : Ի հնումն սգոյ օրերն էին նուիրական , բոլոր հին աղգերն ունեցած են իրենց սգոյ օրերը , այսինքն Այգուցը : Քրիստոնէութիւնն այդ հին աւանդութիւն՝ սգոյ օրերն ոչ թէ չմերժեց , այլ եւ ընդունեց , թող որ Տէր Յիսուս իսկ Այգուցի մասնակցեցաւ երթալով յատկապէս ի Բեթանիա եւ լալով իր բարեկամ Ղազարոսի գերեզմանին վրայ :

Այս է Այգուցը , մեռելի մը ընտանիքն ու աղգականներն եւ բոլոր ծանօթներն գերեզման կ'երթան : Կիներն ու աղջիկներ կը բոլորին նորոգ հանգուցելոյն գերեզմանին շուրջ եւ կ'սկսին ողբերգել : Հին ժամանակներուն մէջ այս ողբերգակ կամ լալկան կիները կ'անուանուէին Եղբրամարք եւ կը վարձուէին : Լալկան կիներն առջեւէն կ'երթային դադաղներու , եթէ ննջեցեալն էր ազնուական ու հարուստ տունէ . իսկ եթէ չէր , այսինքն ննջեցեալն էր անտոհմիկ ու աղքատ , ետեւէն կ'երթային : Այլ որովհետեւ այս լալկաններն ընդհանրապէս կը գովասանէին ննջեցեալը , ուստի մին-

չեւ յայսօր լալկաններու այս ողբերգներ գեղջուկներէ կ'անուանուին Գովք կամ Գովասանք : Եւ փառք Աստուծոյ , այս Գովքեր մինչեւ այսօր բազմած կան փառաւորապէս մեր Մայր-Մաշտոցներուն մէջ անգամ<sup>[1]</sup> :

Մինչ հանգուցելոյն գերեզմանին շուրջ գեղեցիկ սեռը կ'արտասուէ , միւս սեռը , տգեղ սեռ կոչուածը , իրարու պատիւ կ'ընէ գերեզմանոցի հանդստաքաղին վրայ բաժակներ պարպելով , եւ զինի ու օղի խմելով ի հանգիստ հոգւոյ ննջեցելոյն , եւ բարեմաղթութիւններ ընելով , իբր թէ ննջեցելոյն կենդանի ընտանեացն համար : Արբեցութիւնք երբեմն այնքան սաստիկ կ'ըլլան , որ շատեր կ'ստիպուին տէրտէրը կանչել եւ մեռելկոխին ի դարման՝ Աւետարան ընթեռնուլ տալ զինովին վրայ , թող որ տէրտէրներն ու տիրացուներն իրենք եւս իրենց համար շատ անգամ պէտք կ'ունենան մեռելկոխի Աւետարաններու<sup>[2]</sup> :

Այգուցը կը կատարուի ընդհանրապէս թաղումէն երեք օր յետոյ , եւ կը կրկնուին «Քառասնից եւ Տարելից» ըսուած օրերուն մէջ եւս : Այգուցը տան մէջ ալ կը կատարուի , չաքաթ երեկոյ , այլ սակայն առանց Գովքի եւ լուլեայն : Տարէցը՝ մամ կամ պապ , խունկ ծխելով յաղօթրան՝ յարեւելս կը դառնայ եւ անդադար

(1) Անգիր Դ. Գ. Ա. հատոր , երես 28—29 :

(2) Իբր թէ մեռելկոխ կ'ըլլան նաեւ յուսանատ լալկան սղաւորներն ու մեռելի մը յուրարկաւորութեան ատեն յոտնկայս չեղողներն ու օրորոցի մէջ պտուկուկ երիտէները , որոց ի բոյժ՝ նոյն մեռելի գերեզմանին հող կը բերուի յետոյ , կը շիտին սիրտ ու կոնսկի Մեռելը լուալէ յետոյ՝ պատանելու ատեն բերնին կամ ափին մէջ դրամ կը դրուի իբր խաւճըխ յերկինս ճամբորդութեան կան եւ ուրիշ արտասոց սովորոյթներ :

կը խաչակնքէ ըսելով. «Էոյս Լուսաւորչին, հաւատք Գրիստոսին», միւսները կը յաւելուն. «Հանգիստ լուսու հոգուն». յետոյ տէրտէրը գալով կ'օրհնէ հոգեհացը, երբեք ո եւ է մէկ աղքատ հոգեհացէն մանրոս մնալու չէ, վասն զի դարաւոր աւանդութիւն կայ գեղջուկներուն մէջ թէ մեռելը գերեզմանէն դուրս կը ձգուի եւ կրողէն կը տարուի եւ կը ձգուի գէշնոյը, եթէ աղքատի մը աճը լսուի նոյն օրը :

«Շարակին հաց»ն է քառասունքի օրը, առանց մսի, աղի ու յոսի, այսինքն ճմուռ : «Տարելիցի հաց»ն է մսով երուած, այսինքն մատաղ : Տաղաւարներու յաջորդ հինգ օրերուն մէջ գերեզման երթալ եւ օրհնել տալ յաճախ է : Գովք չկայ այս օրերուն մէջ, զի շարականներ կ'երգուին : Հողը նորել եւ ծաղիկներ ու խոտեր ցանել սովորական է, միայն թէ ամէն անգամ որ երախայ մը ծնի, տան տարէցը՝ մամ կամ պապ, մութնուլուսուն գերեզման կ'երթայ եւ երախային ամէնէն մօտիկ աղագականին մանաւանդ նորոգ հանդուցելոյն գերեզմանէն ափ մը հող կ'առնու, կը բերէ ու կը քսէ երախային աչուկներուն ու սրտին վրայ, ըսելով. «Շնորհաւոր տիրածին. լուսածին, աստուածածին» :

Արեւելեան սովորութիւն է դագաղը դարդարել ծաղիկներով կամ տերեւներով, եթէ ձմեռ չէ : Այլ ծաղկէպսակ դնել կամ ետեւէն ու առջեւէն տանիլ Արեւմտեան սովորութիւն է, Հայերն սկիզբէն ի վեր մինչեւ ցայսօր ծաղկեփունջ կը տանին ու կ'ընծայեն ի պատիւ հարսին ու փեսային. հարսնիքներու դարդ է ծաղկեփունջը եւ ոչ թէ դագաղներու կամ գերեզմաններու : Այգուցէն յետոյ կը տօնուին Վարդան, Վահան, Միհրան, եւ այն ամէն անուններ, որք տօնական յա-

տուկ օր չունին : Իրարու շնորհաւորի երթալով ուրախութիւններ ընելու մեծագոյն օրն է այս օրը [1] :

Բայց ա՜հ ձայներ կը լսուին, աւզերու, փեւանջներու անուշիկ զեղգեղ նուագներ, եւ դէս ու դէն պարաւորներ կան որոց դափն ու թմբուկ կը դուգուռան եւ կ'ողջունեն Բարեկենդանը, եւ սէրը՝ սրտերու թինդ ու խինդ սէրը կ'երգուի ու կը յեղյեղուի : Կարմիր է արեւը, կարմիր են աչուկներս, կարմիր պղպղջուն կարմրուկ կթխներն լեփ-լի են կարմիր գինիով : Իմիններուն աչուկները բոցավառ են. իմիններուս այտերը վառ ի վառ վարդ են, կարմիր են շրթներն լուսաւ :

(1) Վարդանանց տօնի եւ Բարեկենդանի սովորոյթներն հետաքրքրական են ի Սղերդ, ուր մեր ժողովուրդն այնքան տգէտ է որ կը դաւանի. «Եսխանէ Բուկուժա տէպէհէլա Գրիստօսըդ» : Թարգմանութիւնն է. «Ով սուրբ Գէորդ, դու պահպանէ Գրիստօսը» : Այս մեր ժողովուրդն որ այսօր տգէտ է ի կրօնս, կը պարծի նոսեւ միամտօրէն կամ ըստ նահնուկան տւանդութեան, «Շըբըբը Խուժէ Իմ Ֆէլլահիլն, պապէմէ ուսս կոթիլէն» : Թարգմանութիւնն է. «Փառք Աստուծոյ. ես Հայ եմ, հայրս այնպէս ըսաւ» :

Մի քանի տօնի օրերը կիւրակէ կը բռնեն. ինչպէս եւ Վարդանանցիւնը : Մերիններն այն տօնը «Խամս զարարի» անունով ուսած են այսինքն Արցեղոց կիւրակի, եւ այս տօնը կը կատարեն հինգշաբթի առաւօտ յետ ժամբողութեան Գահանայք եւ ժողովուրդք իրենց ձեռք զինւոյ փարչեր առած՝ կը մտնեն ժամ. եւ հոն երկու կարգի բամբուկով՝ սուրբ սեղանէն մինչեւ ժամուն արտաքին դուռը գետնի վրայ կարգու կը բազմին Գահանայք առաջին անգամ բռնակն մաղթանք մը ուղղելով՝ ժողովրդեան կենաց համար իրենց զինւոյ բաժակները կը պարպեն, որոց կը մանակցի մեր ժողովուրդը, իր առջեւ ունեցած զինւոյ եւ ողիլ փարչերէն խմելով եւ բարձրաձայն զոչելով. «Քէ՛՛՛ պըլլէյիմս, բէշէյիվաս» : Թարգմանութիւնն է. «Տէր հայր, ձեր կենաց» : Այս արքեպուստան հանդէսը ժամուն մէջ ընելէ յետոյ կ'երթան իրենց տուները, ուր կը շարունակուին խնջոյք մինչեւ ցկէս զիշեր Մեծ պահրի երեքշաբթի :


մրններուն եւ այդ շրթներէն կը թափթփին, ցանուցիւր կ'սփռուին հաղար-վարդին հազարումէկ թերթիկներն, ի ծիլ ու ի ծաղիկ թերթիկներ, թոյր ու բոյր սփռող, սիրոյ թոյր ու բոյր ցանող գունագեղ թերթիկներ:

Հոն են եւ ի նժոյգ աշտանակած Միհրանիկներս ու վահաններս ու զլրար կը շնորհաւորեն ճօճելով ճոկանն ձուպուկ ճակը ի ճակատն ձերմակ ճաճանչուն, ըստ հին խաղերու ու խաղքերու: Գարեգինիս ու Տիրանիկիս դէմ գիմուկն են վարսենիկս ու վարդենիկս. կարմիր հալաւ են հարձ, պսպղուն վալայ են կապած, հիւսկէն կիտուկիտ գօտին ի մէջք, հինայոտ մատիկներով տմփիկը կը շխշխկեն եւ մերթ ընդ մերթ կը դափեն պարելով շորոր: Այլ եւս գլի ի գլոր են, խելայեղ՝ արուն-արցունքոտ են սրտեր, երբ կը յեղյեղուի սա հնաւանդ, սրտերն իրարու կապող ու կաշկանդող, ամբրալինդ զօդող սա ուխտանուագը կամ երդմներգը.

«Հաւկուր ըլլէի,  
Քոր ժուռ ման գայի,  
Մուրիկ ըլլէի,  
Մուրս ի վրայ գայի,  
Փուս փաս ըլլէի,  
Փուս փսոս գայի,  
Սե ուրացողի  
Սե երեսն ըլլէի ա՛յ,  
Թը աչկապուկ խաղայի,  
Սիրականս խաղք անէի, ա՛յ, ա՛յ»:



# Բ Ա Ր Ե Կ Ե Ն Դ Ա Ն



Ո՛չ, աշխարհս արամութեան հովիտ է: հին ու ծըթուած փիլիսոփայութիւն մը կար երբեմն, որ զայս կը քարողէր: Աստուած աշխարհիս մէջ մարդուն աւելի ուրախութեան բաժին տուած է քան թէ տխրութեան: Ամէն կրօնք այս ճշմարտութիւնը դաւանելով ցնծութեան օրեր, այսինքն սօներ նշանակած են, որպէս զի մարդիկ ուրախ զուարթ ըլլան: Քրիստոնէութիւնը, որ քիչ մը աւելի խիտ է ի մասին սա վարդապետութեան թէ՛ մարդիկ աւելի տրտում ու տխուր կենցաղ ունեւնալու են, քանի որ աշխարհս ունայն է, տարուան օրերուն կէսէն աւելին ոչ թէ պահքի, այլ ուտիքի սահմանած է, եւ երգը, որ ուրախութեան միակ նշանակն է ու շարժառիթը. դարերէ ի վեր ընդունած եւ ի գործ դրած է այդ սօնական օրերուն մէջ:

Վանքերն որք տխրութեան եւ լուռութեան սրբավայրեր են, ունին այնպիսի օրեր, որք են կարի հանդիսական, բաղմաժտոր նաեւ մեծաշունդ, եւ այս օրերուն գլխաւորագոյնն է Աբեղաթողը: Բուն կամ մեծ Բարեկենդանի շաբաթ եւ կիրակի օրերուն մէջ վանքերու մէջ չկայ այլ եւս արեղայութիւն. սիրացու, սարկաւադ, վարդապետ եւ եպիսկոպոս ա՛լ հաւասար են, չկայ ակնածութիւն. ամէնքն են իրարու համահաւասար, իրարու հետ ուտող եւ խմող, պարող եւ երգող. թող որ երբեմն աշուղներն ալ իրենց նշխուն ազին հետ կը մասնակցին վանական այս անմեղ բարե-

կենդանական զբօսանայ : Ո՛վ չէ ըսեր այն անուշիկ և և  
ցնծագլին նուագներն , որք այդ սաղերէն կը հնչուին .  
ո՛չ ապաքէն այն ըերաններն , որոյ հանապազօրեայ մըր-  
մունջներն էին Սաղմոս ու Նարեկ , ժամերդ և Շարա-  
կան , գոլասանք ու տարփողք առ խաղողն ու զինին  
չեն յեղեղեր , պնդելով ու պնդելով թէ Քրիստոսի խը-  
մած զինին մեր Նոյ նահապետի այգիէն էր : Եւ ո՛չ ա-  
պաքէն մեր աշուղներն որք ականատես եղած են միշտ  
այս վանական խրատներուն ու հանդէսներուն , չեն  
մեր մէջ տարածած սա առածը թէ վանականները

«Փողեր են Աւետան ,

Առեր են քամպուրան» :

Ահա մէկ աշուղ , գուցէ աւելի իր սէրէն որ ունե-  
ցած է առ մէկ հարմարու կոյս , քան թէ զինիէն զգըլ-  
խած , կ'երգէ այնպիսի մի նուագ , որոյ խնայան ունկա-  
րագիր , մանաւանդ կուտական աչերուն նկարագիրը ,  
որ մէկ գիտուն քերթող ու ներհուն և զգայուն բա-  
նաստեղծ այսքան յաջողակ և այսքան կենդանի և  
որտերու ի թիւնդ ու արտի , յաջողած է երկնել ու եր-  
գել : Ո՛ դու , ո՛ անեղծ նուրբ ու սուրբ սէր , ողջո՛յն քեզ :

«Սեւ ծով մ'եմ տես ,

Միվսակ եր բեօլեր [սպիտակ] .

Ալին կը գարներ ,

Չեր խառներ յիւրեօր [իրարու] .

Ո՛վ է տես մեկ ծովն երկու քեկեօր [տեսակ] .

Ան Ասուածն՝ ինչ կը սիրէ ,

Մի ըլլաք խորոս կնկան քեպիօր [կնքահայր]» :

Ոչ , երբէք կարելի չէ սէրն աննշանակ մնալ այս Ա-  
բեղաթողի օրերուն մէջ : Միթէ կարելի է կարծել թէ  
այդ արեղաներն ալ որք աշխարհս թողլով գրկած են  
մահը , այսինքն վանքը , չեն ունեցած երբեմն այնպի-  
սի օրեր , երբ սէրն իրենց հակառակած ըլլալով՝ փա-  
խած են աշխարհէս , և գերեզմանին (վանական կեան-  
քի) ապստամբ են : Եւ այս անգամ որ զինին կ'զգըլ-  
խէ և կը գրգռուի վերստին զգայուն սիրտն ի յուշ  
սիրականին , որ այլ եւս չկայ , և անգամ մը յիշելով  
զանի , նմանութիւն մը , առածի մը երևութիւն տակ  
կ'երկնէ ու զանի կ'երգէ .

«Ա՛յ եղվընիկ (աղանի) , գարուն եր 'ի գայ առուն ,  
Ա՛յ եղվընիկ , առ ի՞նչ խրատ բու ձեռն անուտ եր իմ  
խոցերուն .

Ա՛յ եղվընիկ , մեռնիմ քս բու նեխուն տեսերուն ,

Ա՛յ եղվընիկ , զբու քեւեր

Ասուած նեխուն է ստեղծեր ,

Որ իսան (Քրիստոս) է հաւներ :

Ա՛յ եղվընիկ , քս ի՞նչ խրատ բու ձեռն անուտ եր ,  
Որ կ'որոտեր սարերն ու ձորեր .

Ա՛յ եղվընիկ , քս ի՞նչ խորոսիկ ունիս բուտեր ,

Ա՛յ եղվընիկ , մեռնիմ բու նեխուն աշվըներուն ,

Աճ ի՞նչ շատ խոցեր

Մեզ բու սրտին ունիս դուն» :

Այլ որովհետեւ կան վանականներ , որք այս Աբե-  
ղաթողի օրերուն մէջ , երբ զգլխուած են զինիէն , կը  
յիշեն այն կեանքը զոր երբեմն ունեցած են աշխարհիս  
մէջ , և որմէ զրկուեր են , ո՛ գիտէ , ո՛րպիսի դժբաղդ

զխառածներու երեսնէն, մեղամաղձէ՛ կարծես թէ բըռ-  
նուած՝ սիրուն սիրուն կ'երգեն, մանաւանդ նոքա,  
որք այլ եւս երիտասարդութիւն չունին, եւ աշխարհս  
մեռած է իրեց համար, ինչպէս եւ իրենք մեռած են  
աշխարհիս համար. ս'վ սեւ բաղդ: Է՞ր այս երգերն որ  
սուրբ սրտերու, անմեղ ոգիներու աղօթաւոր բերան-  
ներէ՛ թրթռած են, երբեմն ի գիր արձանագրուելով մեր  
սրտերը չտրոփեն, եւ մեզ յիշել չտան թէ մեր վանքե-  
րուն մ'ջ Աբեղաթողի այս օրերն են, որ առիթ կու-  
տան անոնց, իրենց սրաին գաղտնիքն ի դուրս հանելու  
երգելով, եւ գէթ առ ժամ մը, մխիթարութիւն մը ու-  
նենալու: Ահա նոցա երգերէն ուրիշ մը.

«Նստեալ կայր ու լայր կառուկն  
Ի վերայ քարին, այ հաւեր,  
Ու գանգաս կ'անէր ձագերուն.  
Թռչունք, այ հաւեր,  
Ի բարձր լերունք էլայ,  
Ի կանաչ մարգեր նայեցայ, ա՛յ հաւեր:  
Իշի, որոգայք ընկայ,  
Ի վարկին մէջ, ի ծովակին, ա՛յ հաւեր:  
Եկին, զիս ի վեր առին,  
Չանաբեկ սուրբն ցրցուցին, ա՛յ հաւեր.  
Չայս իմ կարկըջուն վզիկս  
Յականջէ յականջ գեներցին, ա՛յ հաւեր.  
Չայս իմ կարմրուկ արունս  
Ի գետին ի վար քափեցին, ա՛յ հաւեր.  
Չայս իմ կարմրած կսուցրս  
Կրակին կածըն հասուցին, ա՛յ հաւեր.  
Չայս իմ մանրուբայլ ոսկունքս  
Ի ծնկացս ի վար կսրեցին, ա՛յ հաւեր:

Չայս իմ գունգգուն փեռուրս  
Մեկն ի սար արին՝ մեկն ի ձոր.  
Չայն՝ որ ի սարըն ընկեր,  
Չայն իջեր քամիկն ու քարեր.  
Չայն որ ի ձորերն ընկեր՝  
Չայն իջեր հեղեղն ու քարեր:  
Եւ սուրբ Գրիգորի նման  
Չիս ի հոր-Վիրապն իջուցին.  
Եկին, զիս ի վեր առին,  
Մանկիս հաւսար ցրցուցին.  
Եւ սուրբ Յակովկայ նման  
Մասըն մասըն կրտսեցին.  
Լաւաւն ինձ պաւանք արին,  
Ու կարմիր գինով զիս քաղեցին.  
Ես ձայն զԵրեմիային ածի,  
Նախահօրքն եւ մօրքն Եւայի»:

Այս բոլոր երգերն ի մի բերել եւ աստ զեանդեղ  
կարելի չէ, եւ ոչ նկարագրին արեղաթողական այն  
բոլոր հանգէսներուն, որք կը կատարուէին մեր վանքե-  
րուն մ'ջ, միայն թէ, զիտնալ պէտք է, թէ Էջմիած-  
նի, Երուսաղեմի եւ Մշոյ սուրբ Կարապետի վանքե-  
րուն մ'ջ այս արեղաթողական զուարճութիւններն ա՛լ  
աւելի շքեղ ու զուարթ կը կատարուէին երբեմն, որոց-  
մէ՛ կ'արժէ յիշել Երուսաղեմիքը, իբր նոնջ մ'ուս վան-  
քերուն, փոքր ու շատ առաւելութեամբ կամ պակաս  
սութեամբ:

Աբեղաթողի զուարճութեանց ամենափառաւոր զի-  
չերն է այն զիչեր որ երկուշաբթի կը լուսնայ: Սեղա-  
նատան մէջ եղած զուարճութիւններուն կը յաջորդեն

գիշերային պարն ու թափորը : Տիրացուներ կ'երգեն , սարկաւազները կը պարեն եւ վարդապետներն ու եւպիսկոպոսները կը ծափահարեն , եւ երբեմն կը պատահի որ այս դասակարգերու անձնիւր ոք կ'երթայ ու կը խառնուի մ'ըւններուն մ'ջ , առանց մտածելու թէ այս ինչ աստիճանն ու տարիքն ունի , վասն զի Արեղաթող է , այսինքն ա'լ արեղայութիւնը , կրօնաւորական ասպշխարող կեանքը թողուած ու ձգուած է :

Թափօրապետը ըստով կ'ընտրուի , որ կը նստի դասաւորակի մը վրայ , դուռնն ունենալով ահագին թղթեայ չաթալ-թաղ մը եւ ի ձեռին չոր խտերէ հիւսուած ու քսկորէ՝ ծեփուած իբր թէ դաւաղան մը , հագուստն է թղթեայ շուրջաւ մը որոյ վրայ խոշոր տառերով գրուած կան բոլոր միաբաններուն անունները : Գահաւորակը ձողերէ՝ անցուած կը շալկեն չորս տիրացուներ եւ կ'սխալն հանդիսականք երգել «Որ վերօրհնի» շարականը , Քրիստոսի էջով Երուսաղէմ մտնելուն ի յիշատակ գրուած Ծաղկազարդի շարականը :

Ամենքն ունին վառ մոմեր կամ ճրագներ , եւ երբ թափորը կը մտնէ Արեղաներուն թաղը , յարեւմուտս դարձած կ'երգուի .

«Ամեն . ալիլուիա , ալիլուիա , ալիլուիա» :

Այն ատեն սարկաւազներէն կամ տիրացուներէն մին բարձրաձայն հարց կ'անէ թափօրապետին թէ ինչո՞ւ համար այս հանդէսը կը կատարուի : Նա կը պատասխանէ գոռ ձայնով . «Օրհնեսցի եւ պահպանեսցի կարաս վանքիս , վասն զի Աստուած օրհնեց Նոյը , առաջին անգամ Արեղաթող ան ընելուն համար . եւ գայթակղեցաւ Քամ , երբ ահաւ որ իր գինով հայրը մերկ կը ննջէ» :

Թափօրապետն որովհետեւ արածուութիւն ունի ուղած միաբանը գովելու կամ պախարակելու , երբ սարկաւազէն կը հարցուի թէ Նոյէն ի՞նչ պատիժ առաւ Քամ , ծաղրելուն համար իւր հայրը .

— «Այսինչին պէս սեւցաւ» :

Եւ ահա ծիծաղներ . թափօրն իւր շրջանը կը շարունակէ եւ յարեւելս կանգ կ'առնու եւ թափօրապետը կ'օրհնէ ըսելով . «Օրհնեսցի եւ պահպանեսցի աղաման վանքիս այս նշանաւ սուրբ խաչիս — խաչակնքելով — , եւ շնորհիւ խաղք-խայտառակ Արեղաթող աւուրս — միաձայն — անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից» :

Ամեն . ալիլուիա . . . » :

Սարկաւազը կամ տիրացուն վերստին առ թափօրապետը հարց կ'անէ . «Ստո՞յգ է ժողովածոյէն գրուածը , թէ Նեոք այսինքն սուտ Քրիստոսը Ղովտի աշի արձան եղած կնիկէն պիտի ծնի» :

— «Ոչ . այլ այսինչէն պիտի ծնի» :

Եւ վերստին ծիծաղներ եւ ծափեր .

«Ամեն . ալիլուիա . . . » :

Յետոյ կուգան ի հիւսիս , ուր թափօրապետը կ'օրհնէ ձայնելով . «Օրհնեսցի եւ պահպանեսցի ցորենոյ ըլտեմարան վանքիս այս նշանաւ» եւ այլն : Սարկաւազը կամ տիրացուն վերստին հարց կ'անէ . «Ո՞վ էր ան , որ Աստուծոյ օրհնած հայր-մանանան փորձեց պահել ուրիշ օրերու համար , եւ որդնտեցաւ» :

— «Այսինչն էր» :

Եւ վերստին ծիծաղներ ու ծափեր :

«Ամեն . ալիլուիա . . . » :

Թափորապետն ապա հարաւը կ'օրհնէ գոչելով .  
«Օրհնեսցի եւ սահայանեսցի աղբիւք եւ առու վանքիս  
այս նշանաւ» եւ այլն : Մարկաւագը կամ ախրայուն  
հարց կ'անէ . «Ո՞վ Յորդանանու ջուրն իբր դեղ բժշկու-  
թեան ծաղրելուն համար բորոտեցաւ» :

— Այսինքն էր :

«Ամեն . ախլուխա . . . » :

Հուսկ ուրեմն կ'սկսի հանդիսի վերջին արարողու-  
թիւսը : «Աւրախ լեր , սուրբ եկեղեցի» շարականը եր-  
գուելէ յետոյ՝ սարկաւագը թափօրապետին կը ձայնէ  
ուժգին . «Օրհնեա , Տէր» :

— Հրամայեալ է քեզ ի Տեառնէ խօսիլ :

«Երբ այս վանքին հիմերը դրուեցան եւ սարիսպ-  
ները շինուեցան , ո՞ւր էիր դուն» :

— Գժոխքին մէջ :

«Վա՛յ , ուրեմն դուն գժոխքէն փախած ու հոս ե-  
կա՛ծ , ուրեմն արժանի պատժոյ» . աղաղակներ կը լսուին  
եւ անդէն գահաւորակը կը կործանուի եւ թափօրապե-  
տը գնդախազ (թօփ) ընելով կը ծաղրեն ու կը ծիծա-  
ղին եւ կը տանին գերերեզմանոց , ուր իբր թէ կը  
թաղեն : Եւ վանապետն , եպիսկոպոս կամ վարդապետ ,  
յետոյ դալով կ'աղաղակէ . «Ղազարէ , արի , ե՛լ ար-  
տաքս» : Իսկոյն նա գերերեզմանէն կ'ելնէ գրեթէ մօրէ-  
մերկ , պատանքով , եւ ականատեսներն իբր թէ անա-  
բեկ կը փախչին վանք : Եւ այլ եւս կը վերջանայ Աքե-  
ղաթողի հանդէսը :

Մինչ վանքերուն մէջ այսօրինակ կը կատարուի  
Բարեկենդանը , գիւղերու մէջ երբեմն սապէս . երիտա-  
սարդներէն մին կ'ընտրուի Րէս կամ Գղլը . երեսը կը

մրտուի , գլուխը թղթեայ կամ թաղիքէ չաթալ-թագ  
մը կը դրուի , կռնակն ի վար կը ձգուի սաւան մը կամ  
բրդոս ճրտ ոչխարենի մը , մէջքը թրիքէ կապոցներով  
սխմուած եւ փորը դուրս ցցուած , ձեռքը կը դրուի ա-  
հագին սրածայր ձող մը , որուն ծայրէն կը ծածանին  
լաթի հինուամին կտորներ , ուսերուն վրայ կը դրուի  
ցալի զիւրավառ խուրձեր եւ աշեկներ մրտ երեսով  
եւ թրիքոս անձուռնի զգեստներ հագած անոր շուրջը  
կը բողբոջին եւ սա անիմաստ երգը պոռպոտալով եւ  
ցատկոտելով կը վաղվդեն դէպ ի միւս գիւղը ,

«Այլ իմն գել (գալլ) , քալլ (քե ալլ) իմն գել ,  
Գացեֆ , բերեֆ Նասօյի սել (խաձ շուն) .

Նասօն քնի խոր քուն ,

Կեչկեն (խաձ) ծռի վեր գլխուն .

Անձեղ փախի , մսի տուն ,

Զարկեց կոսրեց գելի նան (վեգ , աչք) .

Փախաւ , ելաւ , մսաւ անմու դեզ ,

Մինձ խուրձ քաշեց վրեն քեզ :

Կնիկ , կնիկ , նուլ վերու ,

Թուլեներ (շան-լակոս) քինսրան սար .

Փրշու մը դրինք վր շրժին ,

Ձեն էլ նամբինք քեթիթին ,

Փրշու մը դնենք վր լոզուն (1) ,

Ձեն էլ նամբենք կիկոզին (2)» :

Ուր կ'սպասէ ուրիշ մէկ խուճը նոյն օրինակ կազմ  
ու պատրաստ , սալոյն ու գոռնան կը հնչոյին , որ  
նշանակ է կռիւի : Այս է Ղոշուն զոշունի կամ Շահ-

(1) Փայտ ջարդող գործիք : (2) 2 զրգիր :

շահ խաղը: Որ կողմը յաղթուի, այն կողմին պարագլուխը — Բէս կա՛մ Գղիբ — իշու վրայ կը դրուի թե՛րս, ագին ձեռքը տալով, ուսերուն ցախի խուրձերուն կրա՛լ տալով եւ կատակներով, հրելով հրմշտը-կելով էջն ալ եւ հեծնողն այ կը ձգուի գեար, առուն կամ ցորենի պարապ մէկ հորը. ուր ուրեմն կը հասնի տէրտէրը, Աւետարան մը կը կարդայ, ընդհանրապէս խաչի, եւ գետագլորը կամ հորաթաւալը կ'աղաատէ եւ փրկողէք կը պահանջէ յաղթուողներէն, որոց խսկոյն միտնալով ~~գլուխներն ալ՝~~ կը յարձակին եւ հողաթաւալ կ'ընեն տէրտէրը, որ հազիւ կը փրկուի գիւղ-գիւղական մեծւորներու միջախտութեամբը: Ուրիշ շատ խաղեր ալ կան, միայն թէ դիժակաւորութիւնը նոր է, եւ դիմակաւորին ի նախիջեւան կ'ըսուի Ջամալ եւ Ջամալն եւ թէ կանայի շորեր է հագած եւ կամ թէ կին է, կ'ըսուի Քէօսա-կէլին: Հոն Բարեկենդանին կ'ըսուի Բարեկենանք. խորիմաստ բառ:

Ահա այսպէս ժողովրդեան մէջ Բարեկենդանը մեծահանդէս կը կատարուի. ամէն տեսակ խաղեր եւ ամէն տեսակ տաղեր իրարու կը յաջորդեն: Բարեկենդանի օրերուն մէջ ոչ մէկ տուն մահրում կը մնայ, այլ միշտ արապասիւ կրեկոյթներ կան, այսինքն իրարու տուն երթալով ըստ կարգի Բարեկենդան ընել. այլ ո՛վ չյիշեր աղքատը, եւ իրենէն բաժին չհաներ անոր: Այլ որովհետեւ չկայ գիւղ մը որ իւր զարկուկը չունենայ, ուստի յաճախ կը լսուի տխրածայն երգեր, ի յուշ դարիպին որ իւր հայրենի երգիքէն հեռի՛ ո՛ր գիւտէ՛ ո՛ւր, իւր Բարեկենդանը կ'ընէ, գույշ հացի կարօտով եւ արցունքոտ աչքով: Հոն Խաչի-երգիք ըսուած տանիքին վրայ կը հաւաքուին անոնք որք զարկուկեր ունին ու կ'երգեն լալազին.

«Եկանք ի Բարեկենդան, կ'երբանք ի Ջասիկ, Ախպար, ելար կ'երբաս, ինճո՛ր թի գասինք. Առաւօսանց կ'ելլես, բեռնակրս բեռցի, Կ'երբաս դարիպ երկիր, շուսով ետ դարձիք:

Ընրն գարնից, եկան գարնան օրերը, Հալեցան ձիւները, լցուան գետերը. Բուսան առուեղերուն կանաչ խոտերը, Վրան ի սան կ'երբան կախուն հետերը:

Լեռներուն գլուխը կանաչ մորի է, Խարիպին մեկ օրը հազար սարի է. Խարիպ, ելիւր եկուր, խելվրս խեւար է, Շաս չե, շաս չե, երեք սարին խեւար է. Երեք սարուէն վերջը ֆերը հեւամ է, Շաս կեմալն ալ ֆու արեւուն զարար է:

Ասունը թի գայի, սքըլլս չունեի, Գարունը թի գայի, խարշըլլս չունեի, Բասամպօյ մեծ ֆաղափ՝ նմանը չի կայ, Ես ֆեզ շաս սիրեցի, կիւմանը չի կայ:

«Յարքս ինձի ձի մ'ե խրկեր բարայով, Կ'ուզես կեմով եկուր, կ'ուզես խարայով. Բարձր ֆեօկեր ունիմ յօրս դին համերով, Եկուր նսինք, սեօնաթք անեմք դեմերով. Սիրիկըս լեցուն է սեքսով խեմերով:

Գեքս պսուս կ'երբայ, Ես մեջը փոս եմ, Աղուր, գացիր եկիր, Ես սքիս հոս եմ. Ընրն գարուն եկաւ, կիւլ պահար պահար, Շաս վարդեր են բացուեր, կիւլ համար հազար:

Եկուր, խարիպ պիւլպիւլ, իս մի լացըներ, Իմ ուրախ սքսիկըս մի սքսեցմեր.

Բարձր ֆոսփեր ունիմ, առջեւը ծով է,

Զրխսակ սենկեր ունիմ, իրարու ֆով է:

Գնա՛ մօրըդ, ալապ մանուկ, ֆու սերըդ ո՞վ է.

Գնա՛ մօրըդ ըսէ, ֆեզ ինձի գովէ.

Աղջիկ, ի՞նչ կորուցիր՝ ցսեր ես կուլաս,

Կորեր մասնիս մասեւ, օղիկըս՝ ականջեւ:

Նկուր ձիուս եսին, պսրսինֆ, ժուռ գանֆ.

Մանչ, դուն օսար մանչ ես, ինս՞ր ֆու ձեմ գամ-

Երկրի սիքեմներ կը բերես վըրաս:

Նազ արե, նազ արե, նազըդ վերցընեմ,

Արի՛ ֆեզի նուռ ու շեֆեր կերցընեմ.

Պիւլպիւլը կը կանչէ պախնամ պարի պես,

Մեկ մըն ալ չիգար, խապար առնեմ խարիպես.

Ինչե՛խ եմ կարօցեր հայվա, նարի պես:

Տեօեկըս սախսակ է, բարձրս չոր ֆար է,

Նեկու ձեռֆա երեսիս՝ մեհիլըս քաց է.

Զար կասկամը (բու) կանչէ, սանըդ պէս արե.

Նար, եկուր ձեռֆովդ պասանըս կարե,

Վերցուր, դիր գերեզմանս. ֆարը դուն շարե»:

Բարեկենդանի կիրակիի գիշերուան ընթրիքէն յետոյ երբ ալ ժամ է քնոյ, մածուն ու կաթնապուր կ'ուտեն եւ անկողինի մէջ խաչած հաւկթով իրենց բերանները կը գոցեն, մաղթելով որ Զատիկին բարով բանան իրենց բերանները հաւկթով: Այս է իրենց մաղթանք.

«Շնորհաւոր Բարեկենդան,

Բարով հասնինք սուրբ յարութեան»:



## Մ Ե Ր Պ Ա Ն Ք



«Լուացարուք սրբեցարուք»ը, որ այսօր ժամուն մէջ կը կարդացուի, ո՛չ այնչափ էրիկ մարդերու, որչափ կ'իներու կ'ազդէ ի մաքրութիւն: Երկուշաբթի կանուխէն կ'իներ կ'ելնեն, թոնիր կը վառեն, ու տան բուրբ մամն. չախան, պղինձ-պղնձկալ, պուտակ-ճօր եւ այլն, ածառի փտրներով կը պուտին ու կը պուտին (ուժով շիկել), եւ եօթն անգամ ջինջ ջրով կը լուան: Նոյնպէս դանակով կը քերեն, կը քերթեն պատերու, սիւներու, դուռներու ծուխու-խուխէն տարթացած (թանձրացած) սեւութիւնը:

Առաւօտ մուռ-լուսուն լալի ժողովածու մարդներ (գնչու) քաղքցիներու դռները կ'ընեն ափութակ: Աղջիկներուն դեղ-դիր կուտան ու անոնցմէ կ'առնուն լակմալ (յերակուրի աւելցուք), ճաթ-պլըն'ի հալաւներ (ցնցոտիներ): Աղքատներն այսօր ջնն երեւիր դռն՝ դուռ, որպէս զի լակ ժողովող չհամարուին, այդ վկարաւորանք է իրենց:

Հաւատքով հարուստ կ'իներ այս շաբթու ամէն օր կիրակի կը պահեն: Երկուշաբթի՝ Բակլայ-խորան է, երեքշաբթի՝ Սորանի խորան, չորեքշաբթի՝ Մկան կիրակի է, հինգշաբթի՝ Կատղած շան, զոր գիւղացիներն աւելի ամուր կը պահեն, ուրբաթը՝ Զարջարոց, զոր կը պահեն չար աչքէ ազատ մնալու համար. իսկ շաբաթը՝ Թալալոսի կիրակի է եւ ամէն մայր կը պահէ այս կիրակին, որպէս զի իւր երախան չթալցնէ: Թալալոսը ե-

ընկալիքներու յատուկ հիւանդութիւնն է . աղան կ'ուշաթափի, կը դեղնի, աղաններ կը կափկափէ, մայրեր բանալիի կամ դգալի կոթ կը դնեն անոնց բերանը, որ կեռիք չիտալուի, ապա կամաց կամաց կը մտածեն, պորտ կ'ոլորեն, մինչև որ կ'ուշաբերի :

Կայ մէկ տեսակ եւս հիւանդութիւն, Կաթիլ աւտոնով . երեսն կը դեղնահարի, դժուար կը չնչէ : Կաթիլ կտրողներ կան, որոյ մենաչնործ է եւ ժառանգական, որք աղուն փորը բթացած սուրով մը կը ձեւ լինի : աղօջաքի բաւեր մրմնջելով, երեք անգամէն Կաթիլ կը հալի : Այս ցաւին համար ալ կիրակի կը պահուի այս օրը, եւ գիւղացիներն Թուխ-մանուկներու կը դիմեն խունկ ու մոմով, մանաւանդ Զատկի չորրորդ կիրակին :

Մեծ պահքի երկուշաբթին խումբ խումբ իրարու կ'այցեն ի ճաշ : Այս ճաշն է կնիք սրապատիւներու, եւ այս ճաշի սեղանն է բաղմազան : Մակեղան (բարակ) թղթի նման լոջ հացերու վրայ դրուած են փանկափոջներ, սեւ սունիչով, կանեփահատո՛ւ ու համեմով օծուած հաց, փւրռախ քալիքալիաներ, կլորակ տղիկներ եւ շատ մը բուսեղէններու, ընդեղէններու, պահածքներու կերակուրներ վաթսունն աւելի պնակներու մէջ շարուած . ամէնքն ընդգլխաճար գինիի :

Մեծ պահքի մէջ ժողովուրդը, մանաւանդ աղքատ դար կը սնանի կանաչեղէններով : Մամիլներ կ'ըսեն . «Մինչև որ երլինք չգըռգուայ, ամէն տեսակ խոտ կրնայ ուտուիլ, բաց ի թունաւորներէն : Մարտ ամիս կը հայթայթէ ամէն տեսակ բոյս երը ձիւնը կը հալի, ուտաի «Մարտի վեյ՝ ձեան վեր, ձեան ցեց» . «Մարտի քսան, գարնան նշան» . կ'ըսեն մամիլիներ :

Մարտի ամսուան պայճառ օրերու մէջ կիներ եւ աղեղներ խմբովին պարտէզ ու դաշտ կը դիմեն «Կանաչ հանդու» . ի ձեռին ունին քերխանիչներ, շեղբիկ, փէկոսա, դանակ, շալկած են մէզար : Ուտելու կանաչներն են սիւեղ, կոլու ճալտիկ, պաւլու մէջար, դառու դմակ, չան սխտոր, մազմղուկ, աւելուկ, խինձ կարոս եւ այլն :

«Մարէ, սա խոտնիլը ծաղիկովն հանե՛մ, կ'ուտուի» :

— Չէ, աղջիկ, այդ պապու է, չուտուիր, դառն է,

«Հապա այս կապուտ երկաթնը» :

— Չէ, այդ էլ դառն՝ լեղի է . այդ Պապկէ-պլոր է . դգոյլ կաց, եղան լեղուներ չհանես, անոնք վէրք կը բռնեն : Այս աքլորիկը, այս թրթրուկը քաղէ, այս մըռճիկը, այս մուճուղեղը, այս չաղալիանաղը հան :

Պահքի աւրողները կ'անիծուին այսպէս .

— «Չը չըպրին, չը դօրանան, ժուռ մուռ մեռնին, աւաղ թաւալ էլնին . խժխժայ եարէն, ինկնի վրէքարները . պատանքը սեւ թելով շղուլեն, սեւ կապուտ հագնին» :

Իսկ յԱշակերտ այս է սովորոյթ :

Կիներն առիքը, դերաններն ու սիւները կ'աւլեն, կը սրբեն, ալիւրով կը նաշխեն . «Եթէ իցեն մեզք ձեր իրրեւ դճանճախարիթ, իրչեւ դճիւն (ալիւր) սպիտակ արարից», ըստ այսմ խօսքի՝ որ այսօր ընթեռնուի է Սուրբ-Գրքէն : Յետոյ կը յաւելուն . «Խուլի բաղարջ ու հատիկ, բարոյ յի գայ մեր Զատիկ» :

Խուլի բաղարջն է առանց թթու խմորի պատրաստուած հայ ի յուշ այն հային, զոր Յնուս կերտու եւ տուաւ իր աշակերաններուն ըսելով . «Առէք կերէք այս է մարմին իմ» : Իսկ հատիկն է ի նշան ցորենի օրհներ-

գուժեան, որ ըստւած է. «Ի պաղոյ ցորենոյ եւ գինւոյ լցուցեր զնոսա»:

Այսօր մէն մի տղեկ պղտիկ տափակ քար եւ մէկ խեցիկ կտոր ի ձեռին ունենալով կը վազէ, կ'երնէ գմբէթայարկ տուն ըստւած երգիքի վրայ եւ զայնս իբր երկանաքար իրարու քսելով կը հարցնէ. «Աղամ, աղամ, ի՞նչ աղամ»: Ներսէն ձայն մը կը լսուի իբր պատասխան. «Օձ աղա, կարծ աղա, դորսնուկ աղա»: Այս կը նշանակէ թէ բոյսերու եւ մարդերու թըշնամի այս կենդանիներուն բերօյնները կը կապուին, որ չխայթեն կամ չլիւսան:

Սոյն օրը ձեղունէն կը կախուին եօթը հաս փետուրներ, ըստ թուոյ պահքի եօթը շաքաթներու, որոց ծայրերը մխուած են խնձոր՝ կամ սոխի չափ խմորէ շինուած գնտակի մը մէջ, որոց եւ չորսը ձերմակ եւ երեքը սեւ են: Ի վերջանալ մէն մի շաքաթի՝ փետուր մը կը փոշուի. այս գնտալը կ'անուանեն Ազրասիզ: Չորս ձերմակ փետուրները կը նշանակեն ձմրան սպիտակ ձիւնը, իսկ երեք սեւ փետուրները կը նշանակեն գարնան այն օրերը երբ երկիրս սեւ հողով եւ կանանչով կ'երևի. որպէս զի տղեկները պահքը չլուծեն, կ'աւանդուի թէ ով որ պահքն աւրէ ազրասիզը անոր աչքերը կը հանէ: Տղեկներ աչքաբաց կ'սպասեն որ հասնին փետուրները, որպէս զի Զատիկն ու կարմիր հակիթը վայելեն ուրախութեամբ:

Իսկ ի Պայպուրթ բակլայ-խորանի օրը, որ ըսել է իբր թէ Փակեալ խորան, մինչդեռ գուցէ աւելի ճիշդն է Պազի խուրհեմ, Պարսկերէն նշանակութեամբ ընդդէմներ ուտելու օրեր, առատապէ կախուած կայ Կոկորիմը. խոշոր սոխ մըն է այն, որոյ մէջ խոթուած

են հաւի կամ սագի եօթն փետուրներ: Կոկորիձի տակէն խոշոր կարմիր պղպեղ մը եւ քարեր կան, որոյ ի տես տղեկներ կ'զգուշանան իրենց պահքը աւրելէ, վախնալով որ եթէ պահքն աւրեն, Կոկորիձէն քար ընկնելով իրենց գլուխը կը ջախջախէ, եւ պղպեղը իրենց բերանները կ'երկուկէ: Այս մանրիկներն այնպէս կը հաւատան թէ այս Կոկորիձն ինքնին է կախուած. Կոկորիձի փետուրներէն առէն մէկը պահքի ամէն մէկ շաքաթուն ինքնին աներևոյթ կ'ըլլան, չեն գիտեր թէ գաղտուկ մէն մի փետուր հետզհետէ կը խլուին եւ կը թաղուին հողի տակ: Աստ՝ այդ սոխին Խարախոնձուղ կ'ըսուի:

Նախնջեւանցիք Մեծ պահքին կ'ըսեն Աղսցի այսինքն Աղսնայ եւ իրար կը չնորհաւորեն. կ'ուտեն Բանջար տապիկելով, Թարաւ եւ Կարման հումութ, Շուշան աղջրով եւ քիչ մը խաշելով, Ծորիկը մանրելով համեմի համար, Աղսան եւ Խաշիլ եփելով: Ուտիքէ մնացորդ կերակուրներու մուրացողները կ'ըսուին Յիգան, եւ կերակուրները Խաշիւան-խաշիւանը: Առատապէ կախուած եօթն փետուրներով Խամաձիկին կ'ըսուի Սոխուած եօթն փետուրներով Պապուրթի զարգարուած. Զատիկինը կարմիր, Ծաղկաղարդինը կանաչ, Լուսաւորչինը սպիտակ եւ միւսները սեւ: «Միջինի»ին կը կիսեն փետուրը պահքի կէսն ըլլալուն ի նշան. նոյն օրը աչքաճանրու կը բաժնուի կըստ հաց, փորն ուռած, մեղրաջրով քսուած եւ կ'ըսուի Պալից:

Ի Բասէն կ'ըսուի եօթնափետուր սոխին Ախեղաձ, ի Ղազախ Պասի-պրո, ուր երկուշաքթին կ'ըսուի կրակի կերակի, չպահողին լաթերը կ'այրուին: Երեքշաքթին՝ քիւն, չպահողը՝ ջուրը կը տանի: Չորեքշաքթին՝ մկանն է, մկները կուտեն ամէն բան, եւ երկուէք մըկ-

նակեր կ'ըլլան: Այսօր որ կին ժամ չկրթայ եւ չլսէ «Տէր ամենա'կալ»ը, չէ կարող ջահրը (ճախարակ) մանել եւ կարկածը կը կոտորի: Հինգշաբթի'ն Ջանոյիկ, մանկու օր, որ տանը մէջ Բարախեա — առատութիւն ըլլայ: Ուրբաթը՝ Կեռիեյ, կեռիք ու բերան կը կապկպին: Շաբաթը՝ Թաղաղուս կերակի, չպահողը կը դալկանայ:

«Միջինք»ի չորեքշաբթի երեկոյին ժամուն մէջ ջրով եւ ձէթով լի կը դրուի կոնք մը եւ կ'ըսուի ղիմֆ, ուր եղէգնէ խաչի մէջ պատրոյգ կը վառի մինչեւ լոյս: Առաւօտուն մաս մաս կը բաժնուի գիւղի տուներուն, այդ ջուրը լառանելով խմորի մէջ եւ կը շինուի նոյն օրունան բաղարջը եւ կ'ըսուի Միջրակ կամ Կրոն: Այս Բաղարջին մէջ դրամ կամ ուլուն ալ կը դրուի իբր գուշակ բաղդի, ինչպէս Կաղանդին:

Յերեւան Լիճքի ջուրը չեն բաժներ եւ մէջը կը վառուին քառասուն պատրոյգ. աղեկներ ու աղջիկներ 40 քարիկներ կը ժողվեն եւ մէն մի քարչ վրայ 40 անգամ ծունր կը դնեն, ուրեմն 1600 ծունր, լուրքանչիւր ծունրի մրմնջելով:

«Քառսուն մանուկ, քառսուն կուս,  
Քառսուն մանկան բարեխուս»:

Լուսաւորչի օրը (մուսն ի վիրայն) ամէն կետուր իրենները կը հրաւիրէ կանաչաղարդ դաշտ զրօնելու համար, որ կ'ըսուի Քեսոջ, եւ կ'երգեն:

«Հարսները կնացած են քեսոջ,  
Իճչ են բերած. — ջուլս ջուլս լաւ (սղայ).  
Անունները իճչ.  
Մեկին զաննակ, մեկին պամբակ»:

Քառասուն Մանուկի տօնն ի Սվազ մանաւոր նշանակութիւն մը ունի, զի հոս է որ կատարուեցան կրօնքի այդ պանծալի նահատակք, հոս է — քաղաքին հարաւակողմը ճախնուտ գետնի մը մէջտեղ — լեղի սեւ ջրով լիճն ուր «Անցանէին ընդ ջուր, մաքրեալք որպէս զոսկի փորձելոյ ի հուր», եւ անդանօր «Պատուական արեանցն հեղլով, զկապուտակ դժովն վարդագոյն ներկէր»: Երբ եկեղեցին դեռ կը շարունակէ երգել «Այսօր Սերաստիա եղեւ երկրորդ Յորդանան», Սերաստացին կէս մը զինքը մահեսեսի կը կարծէ, առանց մինչեւ Երուսաղէմ երթալու: Լիճին քով են բաղնիքին հետքերն ուր քառասնից մին ապաստանեցաւ:

Հոն մամիկներ ի յիշատակ Քառասնից, Մեծ-պահոց սկիզբէն ամէն իրիկուն 40 Տեր ողորմեա ու Հայր մեծ կ'ըսեն, եւ Միջինքին կը լրացնեն, որոյ յաջորդ շաբաթ օրն է մեծ օր մեռելոցի: Ամէն տուն մեծ շարժման մէջ է, մանաւանդ անոնք որ նոր մեռել ունին: Ազոյի-հացի համար Եռլաւ ըսուած թղթի բարակութեամբ հացեր կը պատրաստեն: Այդ հացերն երկերկու քառակուսի կը ծալլեն եւ մէջը մէկմէկ ճանկ չամիչ կը դնեն. եւ զամբիւղի մը մէջ կը շարեն: Շաբաթ առտու այդ զամբիւղները շալկած, լոյսը ճղքել չճղքելուն՝ կանայք կ'իջնեն դէպ Քառասուն-Մանուկ, որոցմէ կը բաժնեն աղքատներու եւ մուրիկներու իբր հոգեհաց:

\* \* \*

Շատ տեղ եւս Խամաճիկ կամ Խուլուճիկ կ'ըսուի սոխին՝ որ հաւի եօթը փետուրով է, որմէ ամէն մէկ շաբթու վերջ մէկ հատ կը փրցուի ու կը պահուի իբր յուռութ:

Յէրզրում երկուշաբթիին կ'ըսեն իրանն, Բարեկենդանէն մնացած կերակուրներու համար: Այդ օր թըթխըմորով շօթ հայ չեն եփեր, այլ ծուկլիկ-բաղարջ ու հատիկ, ըստ Շարականին «Ըստ բաղարջին հաց անխըմոր»: Հիւանդութեան եւ ուրիշ ցաւի ի բոյժ՝ տաք հաց կ'եփեն եւ գլշերը գաղտուկ իւրաքանչիւրին երդիքէն վար կը ձգեն մըմուտով. «Ով տաք հաց, դու առ Աստուած ելնես, այս ցաւն ու զօւն՝ մեր տնէն տեղէն վերցնես: Ով տաք հացի պահապան հրեշտակներ, լսեցէք. առ Ս. Գրքի մըջնորդ եղէք»: Հոս ալ պաս-բարեւի սովորոյթներ կան որպէս կաղանդին եւ Զատիկին:

Բարեկենդանի չորս օրերուն յԱրապլիւր կ'ըսուին չորեքշաբթի՝ գալիփ. հինգշաբթի՝ ճանճնոց. ուրբաթ մկնոց եւ շաբաթ՝ անեծփ-ւոր: Եւ կը մեկնուին այսպէս. ով որ չորեքշաբթի օրը գործադուլ չընէ, տարւոյն մէջ շարունակ արկածներու պիտի հանդիպի. իսկ թէ նոյնը հինգշաբթի օրը չընէ, ճանճերէ պիտի նեղուի. եւ թէ ուրբաթի օրն՝ գործադուլ չընէ, մկներու կեր պիտի ըլլան ամէն բան. վերջապէս շաբաթի օրն՝ թէ գործընէ, տղեկներն իրենց մայրերէն պիտի անխժուին:



## ՏԵՐԸՆՏԱՍ

Այս տօնն է նշանաւոր, վասնզի այդ տօնն է թէ հեթանոսական եւ թէ քրիստոնէական: Հեթանոսական է, վասնզի Միհրը այսինքն հուրը՝ կրակի այս աստուածը, որ երբեմն պաշտելի էր, վերստին կը յիշատակուի: Կրակի այս հանդէսը — արեշ կիճեսի, զոր Հայք ամէն տարի ճիշդ Փետր. 14ին կը կատարեն, ուրիշ բան չէ, եթէ ոչ այն սովորութիւնն որ կար հեթանոս Հայերուն մէջ, որք տարին մէկ անգամ, գուցէ ձմրան մէջ, կը բոլորէին կրակին շուրջ եւ երկրպագելով ցնծութեամբ կը տօնէին հուրը, կրակը: Մինչեւ ցայսօր այն հարսեր եւ փեսաներ, որք հերու ամուսնացած են, կրակի բոցերու վրայէն կը ցատքեն թեւ թեւի տուած, որպէս զի հուրիներ, հրեղէն զաւակներ ծնին, իսկ մանկտին ի տես այդ տեստրանին կ'երգեն ծափահար «Քրիստոս փառաց» տաղը: Միայն գիւղերու եւ քաղաքներու մէջ չէ, որ խարոյկներ կը վառուին, այլ եւ աստուածային տաճարներու մէջ լոյս կը վառի. ամէն Հայ քրիստոնեայ պարտական է իր մոմը աւագ սեղանի կանթեղի կամ բեմի եւ կամ ատեանի եռստեղնեան աշտանակին լուսէն վառելով՝ այդ վառ մոմով իւր տունը մտնել եւ իր տան ճրագը այդ լուսով վառել:

Բայց ինչո՞ւ ուամկութիւնը կ'անուանէ այդ տօնը տերմնասա. արդեօք Տեառնընդառաջ բաւին աղաւաղովն է, բայց այս քրիստոնէական բառն ալ Տօնացուցին մէջ յիշուած չէ, այլ հոն գրուած է «Տօն քա-

ուսման օրեայ գալստեան Քրիստոսի ի տաճարն» : Մի՛ գուցէ այս հանդէսը շարունակութիւնն ըլլայ այն հանդէսին զոր Հայերն ի պատիւ Միհրի, կրակի աստուծոյն կը կատարէին, հաւատալով թէ նոյն օրը Տիր աստուածն իրենց գործերը, չար կամ բարի, կը գրէ, ուստի հանդէս կը կատարէին, որպէս զի այդ Տիր՝ ըստ աւանդութեան եւ Գրող աստուած, իրենց անուններն ու գործեր ուղիղ եւ արդար գրէ : Լուսաւորիչ հին տօները ջնջելէ ճարահատ՝ վերածեց հին Վարդավառը Քրիստոսի Պայծառակերպութեան, իսկ Տէրընտասը, այսինքն Տիրի հանդէսը Տեառնընդառաջի, վասն զի Սիմէոն ծերունին նոյն օրը Հայ սրտերու սիրական մէկ բառն արտասանած էր տաճարին մէջ, յոյս անուանելով Քրիստոսը, եւ հեթանոս Հայն, որ քրիստոնէացած էր, եւ տախաւին իր լոյս աստուածներուն փարած էր, յանկարծ Սահակ Պարթեւի բերնէն կը լսէր. «Լոյս ի լուսոյ, ճառագայթ փառաց, հուր կենդանի» բառերն ու տաղեր : Այսպէս հին գրուածներն Տիրն ու Միհրը յիշելով ազուրկ իմն կրկին կը տիրէին ժողովրդեան սրտին :

\*  
\* \* \*

Տեառնընդառաջին Վանեցիներն Տեկդասալ կ'ըսեն : Նախաստանակին օրը տէրտէրը յատկապէս ժամ կը հրաւիրէ նոյն տարուան մէջ ամուսնացող փեսաները, որք ժամերգի ատեն չապիկ հագած, մեղրամոմ ի ձեռին, յասնի կը կենան : Այս երեկոյ թափորի մոմն է ձրի մոմ : Բոլոր ժամերու բակերուն մէջ խարոյկ կը վառուի եւ եկեղեցական թափորն նոր փեսաները հետեւորդ ունենալով՝ երեք անգամ խարոյկին շուրջը կը

դառնայ երգելով եւ տաղելով : Փեսաներ եւ հարսներ կը ցատկեն երեք անգամ խարոյկին վրայէն :

Գիշերը նորապսակներու բակին մէջ խարուկահանդէսներ կ'ըլլան : Բակին մէջ դէզ մը փայտ կը վառի, բոցը մինչեւ երդիք կը հասնի, եւ ահա պսակադիր քահանայն շուրջառզգեստ՝ կ'առաջնորդէ նոր հարսին ու փեսին դէպ ատուշանը, եղանակելով «Մարմնացեալդ» շարականը եւ «Քրիստոս փառաց» տաղը :

Յետոյ առաջին անգամ տան մամիկն է որ կը փորձէ ցատկել խարոյկի բոցերուն վրայէն, եւ իր քղանցքի ճոթը կ'այրէ, որպէս զի Չարիք իր տան չմօտենան : Կիներ, դեռատի մանկիկ ի գիրկ կը փորձեն ոստնուլ, իրենց եւ իրենց զաւկի փէշերը թոթուելով կրակին մէջ, հաւատալով թէ հոն, այդ կրակին մէջ կ'այրին իրենց ցաւն ու զոռերը : Կրակի ու լոյսի սիրահար ճիւղիժեր կը թրվուան կրակին շուրջ վառ մոմ ի ձեռին կամ ճրագ, եթէ օրն է անհով եւ անձիւն : Այս օրուան մոմերն մինչեւ ցփու Տէրընտաս կը պահուին գրպաններու եւ դարակներու մէջ, որպէս զի դեւերն ու մենէաղէկներն անմերձենալի ըլլան իրենց :

Տաք երկիրներ ապաստանած սարիկներ այսօրուընէ կ'սկսին վերադառնալ իրենց բոյնը : Սարեկները անծեղներու պէս չարանշան են, մանաւանդ այսօր : Երբ մարդ մը այսօր սարեակ տեսնէ, պանդխտութեան պիտի դիմէ, եւ քանի հատ որ տեսնէ, այնքան տարի պիտի մնայ պանդուխտ :

Երբեմն մանչեր եւ աղջիկներ կ'երգեն խարուկին շուրջը դառնալով դառնալով .

«Տերընտաս, մարդ ինձի ասս,  
ես խնդամ, ո՛ւ դուն լաս» :

Ով որ բանի մը կը փափաքի, զայն նոյն տարուան մէջ ստանալու համար, անորմէ կտոր մը նետելու է կրակին մէջ: Անխախտ հաւատք է այս:

Այլ Տէրընտասի հանգիսի գիշերն ամենէն աւելի սրտատրոսի են երկրագործներն, որք ակնայեռ կ'սպասեն տեսնելու համար թէ արդեօք Տէրընտասի կրակին մուխը դէպ ի ո՛ր կողմ պիտի տարածուի, ա՛լ այն կողմի արտերը առաջին անդասանի<sup>(1)</sup> օրհնութենէն յետոյ պիտի բեղմնաւորին: Կրակին մոխիրն հաւտունը կը ցանեն, որպէսզի հաւերն ւժան ըլլան:

Շատ տեղ այս կրակները տանիքներուն վրայ կը վառեն, ուր նոր փեսան հարսանեկան նարօտն ի գլուխ եւ հարսն յերեսն ի քող կ'սպասեն տաներէցին, որ գալով տեսակ մը կրկնապսակ կը կատարէ եւ վերստին ձեռնտուութիւն կ'ընէ կրակին առջեւ. ապա տուն մտնելով հարսնիքի նման կ'սկսին կերուխում եւ ուրախութիւն ընել, իբր թէ նոր հարսնիք մը ըլլայ այն:

Ուրիշ մէկ սովորոյթ. — Երեկոյեան ընթրիքէն յետոյ տան տիկինը ժամուն մէջ վառած իր մեղրամոմէն քանի մը կաթիլ կը թորէ իր մանչերու արախչիներուն եւ իր աղջիկներու լաչակներուն մէջ, որպէս զի այս գիշեր շուռն<sup>(2)</sup> ըսուած աներեւոյթ ոգին ո եւ է կերպարանքով տուն չմտնէ ու չտանի անոնցմէ մին, եւ անոր անցք չտալու համար, երգիքներու լուսամտի իբր կալիչ գործածուած տախտակը կամ թաղիքի կտորը կրակին մոխրով կը թաթաւեն:

Տէրնտասի կրակն, ինչպէս կը հաւատան մերին-

ներն, իր հետ կը բերէ օգերու բարեխառնութիւն, հունձքերու առատութիւն, արտերու արգասաւորութիւն եւ ամուսիններու օրհնութիւն: Շարունակութիւնն է այս այն հաւատքին, որ մեր հիներն ունէին, կրակէն սպասելով ամէն բարիք, եւ զոր Քրիստոնէութիւնն աւնդծ պահած է, չէ ջնջած:

Կայ ուրիշ սովորոյթ եւս. — Տէրնտասի իրիկունը նոր փեսաներու մայրերն իրենց գրպաններն աղանդերներով՝ դժմի բովրած կուտով եւ խիճաղով լի՝ ժամ կ'երթան եւ վերնատան մէջ կը ձրձխեն իրարու նետելով զայնս: Այլ հոն ինչ դժբախտներ եւ ժխոր:

Նոր փեսաներն ժամերգէն վերջ տեսակ տեսակ մրգեղէններով լի ծրարներ շալկած՝ իրենց ծնողքներուն հետ իրենց աներներուն տունը կ'երթան, ուր մինչեւ կէս գիշեր մեծ ուրախութիւններ կը վայելեն. այս արարողութիւնը « Խղեսցուք զկապանս » կ'անուանեն այսինքն փեսան կապանքէ փրկել, որ ինչպէս նշանուած ատեն նոյնպէս ամուսնութենէն յետոյ ժամանակ մը չկրնար երթալ իր աներոջ տունը, մինչեւ որ աներն պաշտօնական կոչունքով չբանայ անոր օտքը, անոր երթեւեկութիւնը չթոյլատրէ, այսօր արգելքի այդ կապանք կը խղուի:

Այս Տէրնտասի օրն երեխէքներ ժամ կը տարուին, ուր ի գիրկ դայեկին կ'օրհնուին: Իսկ մայրը յետոյ իր ազգականներուն կ'երթայ իր երախային հետ, որք երախային աչուկը պահելէ յետոյ՝ այլ եւ այլ նուէրներով մայրն ու տղեկը կը շնորհաւորեն:

\* \* \*

(1) Ծաղկազարդի օրուան Սափորն է այս:

(2) «Անգիր Դպրութիւն եւ Առակք» Ա. Հատոր, երես 275:

Տեառնընդառաջլի տօնն ի Սղերդ կ'ըսուի ՄեկէՏ : Ինչպէս նաեւ գրեթէ բոլոր արարախօս կամ քրդախօս Հայերու մէջ : Այս տօնին առաջին երեկոյին կիներ եւ աղջիկներ մէկ մէկ լապտեր ի ձեռին՝ կը մտնեն ժամը, նոյնպէս էրիւմարդիկ եւ տղեկներ երկուքական կամ երեքական ձեծուած չոր փայտեր՝ այսինքն մարխեր առած, որք արուեստական կերպով շինուած են, եւ զորս Խարխրա կը կոչեն, որ շատ դիւրաւառ է, ժամ կը մտնեն : Երբ քահանաներն «Քրիստոս փառաց» ի տաղերգութիւնը կ'սկսին, յայնժամ ամենքն միահամուռ, էրէկ ու գլին մարդեր, մանչ ու աղջիկ կը յարձակին քահանային վրայ, անոր ձեռքի մոմէն կը վառեն իրենց մարխերն ու ճրագներն, եւ իսկոյն խառնիխուռն վազելով՝ ճրագներն ու մարխերն առանց մարելու կ'երթան եւ իրենց այգիներուն եւ արտերուն մէջ հրավառութեան հանդէս կը կատարեն մինչեւ ցկէս գիշեր, որպէս զի նոյն տարւոյն բերքը առատ ըլլայ :

Իսկ շատեր, մանաւանդ կիներ եւ կոյսեր մոմերու պատրոյգներուն մուխերը ծարիր — սխումե ընելով իրենց աչերու թարթիչներուն կամ ընքուխներուն կը քսեն գեղեցիկ երեւելու կամ աչայաւէ դերծ մնալու համար : Մոմերուն տկուկներն ալ խնամով կը պահուին իբր յուռութ ի բոյժ ցաւերու :

Տիրընդէզի ծխովն ու կրակով կ'այրուին Շուռտ եւ Խոնջող կամ Խարախոնճողը ըսուած դիւանը, որք իբր թէ կ'երեւին նոր-տարւոյ սկիզբէն մինչեւ ցայսօր : Ի Զուղա Տէրընտափ կ'ըսուի Տոռոնջատոռոնջ, ի Հին-Զուղա Տառինջ-Տառինջ, իսկ յերեւան Տէրինտառաջ կամ Տանտառէջ, ուր երբ երեկոյին Աւետարանի սատողը կարդացուի. «Եւ ընդ քո անձն իսկ անցցէ սուր»,

բոլոր ունկնդիրներն իսկոյն կ'այրեն իրենց լաթի մէկ կտորը կամ խոնջանի ծայրը, որպէսզի աղատ մնան Զարէ :



«Ժողովածու»էն աւանդութիւն. բովանդակ այսխարհի յայտնի է թէ Եգիպտոսի Պտղոմէոս թագաւորն Ալէքսանդրիոյ մէջ ձոխ մատենադարան մը հաստատեց, եւ օտարազգի բոլոր լեզուներէ գրքեր թարգմանել տրւաւ յունարենի, զորս հրամայեց զետեղել եւ կարգաւորութեամբ եւ հոգածութեամբ պահպանել : Պէտք եղաւ որ ըստ կարգի՝ հրէական Սուրբ-Գրքի, այն է Աստուահաշուենցի թարգմանութիւնն ալ կատարուի :

Եօթանասներկու լեզուագէտ ուսմաններու յանձնուեցաւ այս թարգմանութիւնը, որոց համար Պտղոմէոս որոշեց կղզի մը, ուր երկ-երկու հոգի, առանձին եւ ուրոյն, զոյգ զոյգ ներփակուեցան գոց սենեակներու մէջ, որոց պատուհանները միայն ծովուն դէմ էին, օդառութենէ բոլորովին զուրկ չըլլալու համար :

Պտղոմէոս որչափ որ ամէն օր կուտար թարգմանելու՝ այնչափ պիտի թարգմանէին, եւ որպէս զի սխալ կամ սուտ չսպրդէր թարգմանուածներուն մէջ, Պտղոմէոս ինքը պիտի քննէր թէ ըստ ամենայնի համանման էին իրարու եւ միանգամայն ցոյց տալով երրայագէտ ուրիշ անձերու պիտի հասու ըլլար թէ թարգմանութիւնն է համաձայն երրայական բնադրին :

Այսքան մանրագնին հոգածութեամբ եղած այս թարգմանութիւն մինչեւ ցայսօր յարգելի եղած է, այնպէս որ համբաւուած է թէ ոեւէ սխալ չկայ կէտադրութիւններու մէջ անգամ Եօթանասնից ըսուած Աստուածաշուենցի այս թարգմանութեան մէջ :

Այդ խոսքերուն մէջ էր եւ Սիմէոն, իր աշխատակից ռաբբիի մը հետ: Եւ երբ Եսայի մարգարէին զրքի սա տողերու թարգմանութեան կարգն էր, որ պիտի վերածուէր հեթանոս լեզուի, յունարէնի, «Անա կոյս յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա ԷՄՄԱՆՈՒԷԼ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած» (Եւայ. Է. 14), սարսուեցաւ Սիմէոն եւ վարանեցաւ թէ թարգմանէ՞ արդեօք այդ տողեր թէ ոչ: Անհնարին անձկութեան մատնուեցաւ, զի թէ թարգմանէ, ծաղրու ծանակ պիտի ընէ իր սիրական նախնիքն ու արդի սերունդը, որ այսպիսի նանրահաւատութեամբ նախապաշարուած էին եւ տակաւին եւս սոյն օրինակ սնապաշտութեամբ կ'ապրէին. ինչ, կուսէ մը Աստուած ծնիլ. եւ այս Իսրայէլի մէջ — այն միակ աստուածընտիր ժողովրդեան մէջ, որ երբէք չէ հաւատացած սուսպելական աւանդութիւններու եւ սուտուփուտ զրոյցներու: Քանի կը մտածէր, կը վարանէր, եւ մանաւանդ սարսափահար կ'լլար երբ ի յուշ կը բերէր թէ, եթէ չթարգմանէր այդ տողեր կամ խեղաթիւր թարգմանէր, ուրիշները ճիշդը պիտի թարգմանած ըլլային եւ պիտի պատժուէր կտտամահ, իբր անհաւատարիմ արքայական վստահութեան, ուստի կամայ ակամայ բացաւ իր սիրտը եւ փղձկալով հեծեծագին հեկեկաց իր ընկերին. «Ես, Ուրիէլ, ես կը ջնջեմ այս տողերը, կարելի չէ գայթակղական չըլլալ այս տողերուն թարգմանութիւնը հեթանոս ընթերցողներուն, ի նախատինս մանաւանդ Իսրայէլի»:

— Սիմոն, կրկնեց միւսը, անհնար է այդ: Ահ, եթէ չթարգմանուի մօնէ, միւսներէն կը թարգմանուի, եւ կը դատապարտուինք սոսկալի մահուան իբրեւ ան-

հաւատարիմ եւ թէ ըմբոստ իշխանութեան»:

Այլ Սիմէոն չհամակերպեցաւ, թողուց գրիչը, եւ առ սաստիկ տրտմութեան՝ գլխիկն ի կախ պահ մը մրափեց եւ... ուր ուրեմն սթափեցաւ, եւ անա տեսարան, հիանալի եւ հրաշալի, միեւնոյն տողեր ոսկեզօծ վառ ի վառ կը փալիլէին խոշոր խոշոր գրերով դրոշմուած, մագաղաթին ի զարդ, ոսկետառ, լուսացնցող եւ հրաշափան:

Հառաչ մը իր սրտի խորերէն ի վեր բորձրացաւ, ի վեր անդր, դղրդեց երկնքի կամարները, ձայն մը կը լսուէր, որ կ'արձագանգէր անդադար. «Ահ, Տէ՛ր իմ, Տէ՛ր, պիտի գայ այդ օրը. կը հաւատամ. տեսնէի այդ օրը եւ մեռնէի»:

— Եղիցի:

Այս էր աստուածային ձայն առ ծերունին Սիմէոն, որ աւարտելէ յետոյ իր թարգմանութեան պաշտօնն Եգիպտոսէ դարձաւ յԵրուսաղէմ. կծկեցաւ եւ նստեցաւ այն դրան քով, իբր արթուն պահապան հակեց հոն այն դրան քով, որ Եգեկիէլ մարգարէէն փակուած հռչակուած էր թէ «Այս դուռն փակեալ կայցէ եւ ոչ ոք մտցէ, ելցէ, բայց մըայն Տէր Աստուածն Իսրայէլի»:

Այն օրէն մինչեւ ցայն օր, ցքառասնօրեայ գալուստ Տեառն ի տաճարն, իբրեւ ուխտաւոր, Սիմէոն 364 տարի աղօթքներու եւ խոնկերու մէջ ընկղմած ու թաթխուած ապրեցաւ:

Այս ծերունիին հետ ուրիշ մէկ աղօթարար եւս կար. նոյնպէս ծերուկ, պառաւ մէկ ծերունի, Փանուէլի աղջիկն Աննա, որ եօթը տարի միայն կենակցած էր էրիկին հետ, որ հոն, տաճարին մէջ մեկուսացած կ'ապրէր շատ երկար տարիներէ ի վեր, աղօթքով ու պահքով կը

հսկէր եւ կ'ակնկալէր աշխարհի Փրկչին գալստեան :

Եւ ա՛նա օր, կը դղրդի տաճարը, ամբարիակ դուռը ճանչելով կը բացուի ինքնին, ջահեր եւ մոմեր կը վառին, լուսաշող կ'ողողի տաճարն ամբողջ եւ ժողովուրդը սարսափահար հեւ ի հեւ հոն հաւաքուած՝ ակահատես կը հիանայ եւ յապուշ կը կրթի, երբ ծերուկն Սիմէոն տղեկ մը, երախայ մը ի գիրկս կողկողազին կը հեկեկայ, կը գոհնայ Աստուծմէ, հեծեծախառն արտասանելով սա մըմունջը. «Արդ՝ արձակեալ զճառայս քո Տէ՛ր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց : Լո՛յս ի յայտնութիւն հեթանոսաց եւ փա՛ռք ժողովրդեան քում Իսրայելի» (Ղուկ. Բ. 25—32) :

Իսկ ակահատես ժողովուրդն ի լուր այս ձայնի զոր իբր աւետիս կը յեղյեղէր Սիմէոն, որուն եւ կը ձայնակցէր Աննա, խնդագին կը կրկնէր ու կը կրկնէր. «Տէրն է աստ, ելէք ընդ առաջ. ՏԵԱՌՆԵԴԱՌԱՔ» (1) :

\* \* \*

Այս տօնն է որ կը կատարուի միշտ Փետր. 14ին, անփոփոխ, եւ հայ ժողովուրդն երբեմն բարեկենդանական օրերէն յետոյ՝ նոր ուրախութեան մը կը մասնակցի, քերականիս կ'ըլլայ, վասնզի այս տօն շատ անգամ կը պատահի Մեհ-պահքի մէջ, ա՛լ ո՞վ մտիկ կ'ընէ Մեծ-պահքին. ժողովուրդը թէեւ ուտիք չընէր, եւ չաւեր, պահքը, այլ կ'աւրէ ծոմն ու ժուժկալութիւնը : Կը

(1) Սխալ ստուգարանութիւն է այդ, վասնզի նախաքրիստոնէական Տէրնտան է, որ բրիտոնէացած է Տեառնդառարի վերածուելով :

բացուին նորէն գինիի տիկերն ու վարչեր, օղին ու գինին կ'ողջունուին վերստին : Երգ ու պար կ'սկսուին, եւ կերուխումներն, եթէ օրն է պահք, Կաղանդի օրուան նմանակ են : Աշուղներու սաղերը լարուած ու սարքուած կը հնչեն ու կ'եղանակեն գովք ու գովասանք, թող չարականի եւ մեղեղիներու անուշիկ եւ հոգեցունց եղանակներու ելեւէջները : Հապա սէ՛րը .

Վերստին սուրբ-Կարապետեան աշուղները կը սաղեն ու կը նազեն, իրենց սրտին նազենին ու նազուկը կը սաղեն. այլ պարաւոր մեր պարմանիներն ի՛նչ կ'ուզեն. ի պատասխան աշուղներու սա սիրական գովքին ու սրտաթունդ աւաղին .

«Կոյսը սիրեմ ես կոյսը,  
Կ'ըլմանի ժամուռն լոյսը» :

Ահա մեր ճլէ-սլէներն, որոց այտերուն կարմրուկ շողերն իբր արեւ շարմաղէ, երեսն ի վար կը կաթկթեն ու կը ցոլցան, կը կրկնեն եւ կ'երեքկնեն, կը թախանձեն ու կը պահանջեն Տէրէն՝ Տէրնտանն որ երկընքի Բամբիչը, տիեզերքի ամենէն հիանալին ու հրաշալին, Աստուածամայրն ըլլայ իրենց գլխին հովանեակն ու սրտին վահանակն ու պահպանակը, միամտօրէն եղանակելով .

«Տերնտա, Մարդ ինձի տա,  
Ես խնդամ ու դուն լա» :

Աշուղը կը շարունակեն .

«Թագը սիրեմ ես լոյս բագը,  
Կ'ըլմանի ժամուռն արեգակը» :

—Տերնտա, Մարդ ինձի տա . . . :

«Երեսը սիրեմ ես երեսը,

Կ'ըլմանի ժամուն խաչերեսը»:

—Տերնասա, Մարդ ինձի սաւ...:

«Պօյիկը սիրեմ ես պօյիկը,

Կ'ըլմանի ժամուն մոխիկը»:

—Տերնասա, Մարդ ինձի սաւ...:

«Կուրծքը սիրեմ ես կուրծքը,

Կ'ըլմանի ժամուն խունկիկը»:

—Տերնասա, Մարդ ինձի սաւ:

«Մասները սիրեմ ես մասները,

Կ'ըլմանի խաչին գամերը»:

—Տերնասա, Մարդ ինձի սաւ...:

«Ծոցը սիրեմ ես ծոցը,

Կ'ըլմանի ժամուն խնձորը»:

—Տերնասա, Տերնասա, Մարդ ինձի սաւ,

ես խնդամ ու խնդամ, դուն լաս ու լաս:

*Յետոյ մամիկներն կ'սկսին ՕՐ ՀՆԷՔԻ, գուլասաներով ամենուս ՄԱՐԻԿը, գլխութեան եւ ողորմութեան մեր Մարիկը, տիրածինը, լուսածինը, աստուածածինը. ալ շողշողուն բառեր կա՞ն որ չը շուայուին ի պատիւ ամենօրհնեալ սուրբ Կուսին:*

«Ճրագ, նրագ նեմարիս,

ձեմախոսիկ մարտիրոս,

Մեր սիրելի Քրիստոս:

Քրիստոս գնաց Հնդու քաղաք(1),

Բերեց անքառամ ծաղիկ,

Իրեց Մարիամի գլխին:

(1) Ռամկական միամտութիւն, Նաղարէթը Հնդկաստանի մէկ քաղաքը կարծելով:

Մարիամ, Մարիամ, դու կուս ես.

Հոգով մարմնով յուս ես.

Էքամ դասեմ բարութիւն(1),

Հոգիս քանիս արքայութիւն»:

*Իսկ Ռուսահայ մամերու Տերնասաի Օրհնէքն է.*

«Ճրագ նրագ նեմարսահասիկ,

ձեմահասիկ մարգարիս.

Պանամ պղնձայ դուռը,

Քաղեմ անքառամ ծաղիկը.

Փնջեմ դնեմ ի գլխուս.

Քունը ըլլիմ մինչ ի լուս.

Արագըս ըլլի ի պարի,

Ասուած մուրագըս կասարի:

Այ Մարիամ, քո՞ւն ես քէ արքուն.

—Հազար քուն, հազար զարքուն.

Մրսիկս ի քուն,

Հոգիկս արքուն:

Այ Մարիամ, այ Մարիամ,

Ասուածածին, ես մեղամ»:

*Ծշղեկ կարելի չէ թէ Տերնասաի այս տօնն է՞ր այսփան շքեղաշուք կը կատարուի ամէն ուրեք, եւ կրակին նեա կը վառին եւ կը հրայրուին սրտեր. աշուղներն ալ աւելի իրենց աչերէն հուրն ու բոց կը շողարձակեն այսօր, զարմանալին այն է որ այս մարդերէն շատերն որք ուրիշներուն աչքի-լոյսին կարօտը կը քաշէին, սիրատարի էին, այնքան խելայեղ մոլեգնեցան, որ իրենց աչքի-լոյսէն զրկուեցան, խաւարեցան, կուրացան եւ կոչուեցան քօր աշուղներ: Տնէ տեղէ զուրկ ապրելով՝*

(1) Բերաննիդ պահեմ ո՛վ մամերս:

անտունի-փերիշան, եւ իրենց երգերն իրենց պէս ան-  
տունի անուանեցան յԱկն, եւ այլուր անկուսի հոչակ-  
ուեցան, լուժայ մը կամ փուլ մը չուղելով ունենալ,  
իբր անարժէք հանգէպ այն թանկագին գանձին՝ զոր  
ունէին իրենց սրտի խորունկ ծալքերուն մէջ. իբր քան-  
կուսի ծաղրուեցան մենէ, այլ Ռուսահայերէ սիրուեցան  
մերթ միսիին եւ մերթ շիրին մակդիրով, այլ ամենէս  
առհասարակ կոչուեցան ԱՇԸԳ-ՂԱՐԻՊ:

Բայց որքան որ տարիներ տարիներու յաջորդեցին,  
եւ հեազհետէ դարագլուխներ բոլորեցան, նորանոր սե-  
րունդներ իրարու պայազատեցին, ծղեցան ու ճղեցան,  
ուռճացան ու բարգաւաճեցան, այնքան սոցա յիշա-  
տակն ա՛լ աւելի բարձր ի գլուխ պանծացաւ եւ տակա-  
ւին ցայսօր կը լսուին մեր ուրախութեան ու տրտու-  
թեան ժամերուն ու ժուժերուն մէջ իբր լալօն ու գե-  
ղօն սոցա սազերուն մեղանոյշ ձենիկն ու հեկեկը, ու-  
րոց մին աւանիկ:

«Ես աս գիշեր դուրս ելայ,  
Մութ գիշեր, չի կայ լուսնկայ.  
Իմ եարս ալ՝ վարեն ի վեր.  
Չեռֆն ի կայ ոսկուն մաշալա:  
Թեւեւ բռնեց, ներս արաւ,  
Դուռ դրաւ, ախիկն ի վրան.  
Փռեց սեռեսէ խալի,  
Ուր գործած քաւուերկու արի:  
Չգեց խուս քիւլի սօշակ,  
Սեռեսէ բարձերն ի վրան.  
Փրոնց սեռեսէ եարախ,  
Սումալու վերմակն ի վրան,  
Խուս քիւլի բարձիկն ի գլխուն:

Զարդարեց ոսկուն սեղան,  
Հաւ խորված կախուկն ի վրան.  
Շարեց Ֆերժուուու Ֆիննան,  
Մեզն ի կայ նուան հաս գինի,  
Սերը սիրողին վայի,  
Աս գինին՝ անուս խմողին,  
Խմե՛ ուր քսիմ անուս:

Ես մեկզա բռնեմ քեզի նուս,  
Անտունի<sup>(1)</sup> քսեմ, ուտե՛ ուս.  
Ինչեխ անտունի մ՛քսեմ,  
Ուր քնայ խեհեհն ի ափիդ,  
Խեհեհն ի ափիդ քնայ,  
Մումայ քել պուլուխդ երեսիդ ցնծայ»:

\* \* \*

Այլ ինչպէս ամէն տօնի մէջ կը խառնուի տրտու-  
թիւն, ի յուշ այն սիրականներուն՝ որք աչքէ հեռու,  
տարաշխարհիկ կ'ապրին, դարիպուկ կ'ապրին, այս տօ-  
նի օրն եւս սրտի դառնութեան մրուրը գերաստիճան  
կը քա՛նուի, երբ սա հին երգի մը երկու տողերու մըր-  
մունջը կը լսուի, հեաք հեթանոսական դարերու.

«Երբամ իյնիմ Երման գեգերք,  
Վախիմ քը չսանի՝ մնամ եգերք»:

Գեգերք կրճատուածն է գետեղերք բառին: Իսկ  
Երման կամ Այրման սեռականն է այրումն կամ երումն  
(կիզումն) բառին, եւ Երման զե՛ս՝ ըստ ամենայն հաւա-  
նականութեան՝ մեր դժոխոց զե՛սն ըլլալու է, որուն

(1) Աշուղական երգի տեսակ մը անուն:

հոսանքը դժոխք կ'երթար: Գերընտիր բանաստեղծական հանձարոյ ծնունդ է այս: Անտանելի կեանքէ մը ազատելու համար մահուան դիմելու որոշում տալ եւ միանգամայն վախնալ թէ գուցէ մահն ալ մերժէ իր գիրիլը . . . Կարելի՞ է արդեօք յուսահատ լքում մը այս օրինակ ձեւով, այս ատիճան ծայրայեղ ի հանդէս հանել:

\* \* \*

Այլ նախնիք որքան որ հեթանոսական Տէրընտանն անջնջելի տեսնելով զայն քրիստոնէացուցած են նոյն օրը Աւետարանէն լոյս ու հուր յիշատակելով, եւ բոլոր հին Տօնացոյցները միայն հրավառութիւն կը հրամայեն, եւ որքան որ արդի Տօնացոյցն եւս կը ծանօթագրէ. «Ստուելի է շրջիլն զՆորովն, որ ի տգիտաց է ներմուծեալ», մերիններն ընդհակառակն բոցերուն վրայէն կը ցատկեն ու կը ցատկեն, խարոյկի մոխիրը կը յափշտակեն, կը ցանեն բունկալը որ հաւերն ածան ըլլան, արտերն՝ որ առատ ըլլան, զայն ջրով կը խմցնեն ծոցերներու, որ անցաւ տղարեր ըլլան, ամուլին՝ որ լուսպարոն (1) ունենայ, խանձուած փայտի կտորները կը նետեն թոնիր, որ վառ մնայ, ցրտի ճիւղերով զիւրար կը շնորհաւորեն — ի յիշատակ Քրիստոսի օրոյցն այդ ծառի ճիւղերով փաթաթուելուն —, որ դալար մնան, այս որքա՞ն խորարմատ աւանդութիւն եւ յամառ պահպանութիւն:

(1) Տէրնտասի օրն ու Զատիկն ծնած մանչին Լուսպարոն կ'ըսուի, եւ աղջիկին՝ Լուսխաժուռ:



## Ծ Ա Ղ Կ Ա Ջ Ա Ր Գ

Գիտէ՞ք, իմ թերափս (1) սիրունիկ է ու խատուտիկ, ծաղկազարդ եւ զարդարուն: Գիտէ՞ք, իմ թերափս աչերէ՞ն կը ցօղին անձրեւի կաթիլները. թերափս արցունքէն է շաղն ու ցօղը: Թերափս գթած է եւ եւ այնքան գթած՝ որ երաշտութեան ատեն երբ մարդ եւ անասուն կը տառապին, ան կ'արտասուէ, եւ անոր արցունքով թրջուած հողէն իսկոյն կը ծլին ու կը ծաղկին ծաղիկ ու բոյս եւ դալարի: Եթէ հարցուի թէ անունն ի՞նչ է. — ՆՈՒՐԻ կամ ՀՈՒՐԻ:

Իմ թերափս աւելի պաշտելի է մեր նունուկներէն (տարիքոտ կին), եւ մեր ճիւղ-պիճներուն ծիծաղի զբօսանքն է, իսկ մեր պապերուն եւ մամբուն սիրականն է Նոյի աղջիկն ըլլալուն համար, որ ջրհեղեղէն յետոյ ծնաւ, որուն օրորոցին մէջ Յիսուս երախայութեան ատեն պառկեցաւ ու քնացաւ:

Թերափս ի պատիւ հանդէսները Տէրնտասի եւ Ծաղկազարդի անդաստաններով (2) կ'սկսին եւ կը վերջանան Խաչվերացի անդաստաններով, այսինքն գարունէն մինչեւ աշուն, երբ ա'լ այնքան վախ չկայ երաշտութեան համար:

(1) Առտին աստուածներ թերափ կոչուած են, եւ են կուռքիկներ եւ արձանիկներ (Գոտ. Ժէ. 5):

(2) Հին սովորոյթ է արտ օրհնել տալը եւ կ'ըսուէր անդաստան: Այժմ արտ երթալով զայն օրհնել տալ չկայ. ու միայն ժամբոս մէջ կը կրտարուի:

Որքան որ մեր հին խոշոր խոշոր աստուածներուն անունները Արամազդ ըլլան կամ Անահիտ, խոշոր խոշոր գրքերու մէջ յիշուած, այլ իմ Թերափիս, իմ պտըտիկ ու խատուտիկ Թերափիս անունը՝ կախարդասար գրքերու մէջ դուն ուրեք գրուած կայ, այն է Հուրի, իսկ ժողովրդեան մէջ շատ յաճախ, մանաւանդ Պարսկահայ եւ Ռուսահայ դաւաններու մէջ եւ դեռ կը կոչուի Նուրի: Տարօնոյ մէջ եւ այլուր Խումկուրուրիկ, յԱին եւ այլուր Ձիյի-մարնա: Պահչէճիկի մէջ եւ այլուր Ճիմի-մարնա: Թէեւ տեղ տեղ Թերափիս անունը փոխուած՝ այլ ինքը նոյն է:

Գիտէ՞ք, իմ Թերափիս ի՞նչ է. — Խրճիկ մը ըստ մշեցիական ասացուածի: Նա ի հանդէս կը հանուի միայն երաշտութեան ատեն, որ երկինք անձրեւէ:

Գիտէ՞ք, իմ Թերափիս մեծահանդէս տօնն էր Ծաղկազարդը կամ Զարդարդարը: Եւ ինչո՞ւ տօն չունենար, քանի որ մեր Տիրն ու Միհրը ունին Տէրնասար. որքան այս ստոյգ է, սա ալ այնքան ստոյգ է իմ Թերափիս համար: Եթէ կրակն իր յատուկ Աստուածը ունէր, ինչո՞ւ ջուրն ալ իր յատուկ Աստուածը չունենար:

Այլ թէ Ծաղկազարդ թէ Զարդարդար. — քուրմերու համար Ծաղկազարդ բառն էր սիրական, վասն զի գրական բառ մըն էր այն, իսկ ուսմիկներու համար Զարդարդար բառն էր գեղընտիր: Բայց է՞ր այդ երկու գործածութիւնը մէկ տօնի մը համար, վասնզի Թերափիս ամէն ատեն որ ի հանդէս հանուէր, թէ երբն երբն ու անուշահոտ ծաղիկներով կը պսակուէր, կը ծաղկազարդուէր եւ թէ խատուտիկ եւ գոյնզգոյն լաթերով կը հագուէր, կը զարդարուէր:

Թերափիս շապիկն էր լուսալիբոս եւ նկարէն, իսկ մէջքի գօտին էր ծիածանը. չէ՞ք գիտեր, որ ծիրանի-գօտին անձրեւելու նշան է:

Ուրեմն Ծաղկազարդը կամ Զարդարդարը մեր ամենահին տօներէն է: Այս տօնը դժուարին է հաստատել թէ քրիստոնէական տօն մըն է, զի ինչո՞ւ Քրիստոսի յերուսաղէմ փառաւոր մուտքի տօնը կոչուի մեր մէջ Ծաղկազարդ կամ Զարդարդար, քանի որ մեր ամենահին պապերուն ու մամերուն արմաւենին ու ճիթենին գրեթէ անծանօթ էին: Արդի Ծաղկազարդի օրը չէ՞ք գիտեր որ Հայ-Քրիստոնեայ ժամերու մէջ ոչ խորան եւ ոչ սեղան կը զարդարուին գոյնզգոյն ծաղիկներով եւ շքեղ ու փայլուն լաթերով: Այդ բանը չկայ մեր մէջ, ուրեմն իմ Թերափիս յիշատակ է հին Ծաղկազարդով կամ Զարդարդարով:

Փա՛ստ. — սովորութիւնը որ դեռ Փոքր-Ասիոյ շատ մը Հայաքնակ գաւառներու մէջ կայ, կը հաստատէ զայս: Ականատես եղած եմ որ Ծաղկազարդի օրը Մշեցի լամուկներ (փոքր տղեկներ), մանչերը զատ եւ աղջիկները զատ զատ խմբուելով մարդածեւ խրճիկ մը (պէպէ՞ք) կը շինեն, որուն կ'ըսեն Խումկուրուրուկ. անոր երեսը ճերմակ լաթով կը պատեն եւ վրան աչք ու քիթ եւայլն կը նկարեն: Մէջքէն գօտի կը կապեն եւ գոյնզգոյն լաթի կտորներով կը զարդարեն: Երեսի լաշակէն հիւռններ եւ պսպղուն փուլեր կը կախեն եւ գլուխը ծաղիկներով կը պսակեն: Երգ երգելով ու պարելով Ծաղկազարդի այս հարսնցուն փողոցէ փողոց կը պտրտցունեն, պատուհաններէ ու երդիքներէ ջուր կը սրսկուի անոր վրայ, իսկ նուսուկներ ու մամեր հանդէսը սարքող լաճերուն նուէր կուտան կորկոտ, ձաւար,

մողաշար (աղացուած սիսեռ՝ յեպրեպի), ձէթ (կտաւատէ քամուած) (1), պատրաստելու համար ճապիոցը, տեսակ մը կերակուր որ կ'եփուի լուսաղբիւրներու կամ առուներու մօտ:

Իսկ այլուր նոյն օրէն զատ երբ երաշտութիւն ըլլայ, փոքրիկ տղու մը ձեռք խաչափայտի ձեւով ձող մը կուտան. եւ զայն լաթերով զարդարելէ յետոյ՝ հին պարեգօտով մը կը կապեն մէջքը եւ այսպէս մարդաձեւ ծիծաղելի բան մը կ'ըլլայ այն: Եւ զայն յետոյ կը պտըտցնեն փողոցէ փողոց Հայերէն կամ Թուրքերէն երգելով. Թուրքերէնն ահաւասիկ.

«Չիչի մամա նե՞ իսքեր.

— Ալլահնան եաղմուր իսքեր,

Քեքեքն փարա իսքեր.

Վեր Ալլահըմ, վե՛ր

եաղմուր իլի սեկ»:

Չիչի-մաման տեսողները հաց կամ դրամ՝ եւ այլն կուտան պտըտիկներուն եւ անոր վրայ ջուր կը սրսկեն եւ զայն կը թրջեն, հաւատալով որ երկինք կ'անձրեւէ:

Իսկ Պահչէճիկի մէջ Թերափ կ'ըլլայ տղեկ մը, որ մանրիկներէ չըջապատուած՝ առօք փառօք պտոյտ կ'ընէ խաչափայտ ձողն ի ձեռին ունենալով եւ զայն ձօձելով, որուն վրայ ջուր կը սրսկուի վերէն, դէս ու դէնէն, սա հաւատաքով թէ երկինք պիտի անձրեւէ:

Սօս-Վարդիթերի վէպի հեղինակը որ Հնդկաստանի

(1) Վանայ, Տիւրքէրիի, Սղերդի եւ այլ գաւառներու մէջ, սոսի-թէ կը բամուկ պանքի այս իւր եւ կ'ըսուի Շիրիկ:

եւ Պարսկաստանի մէջ նշանաւոր եղած է իբրեւ հնագէտ եւ պատմագէտ եւ որ հոգեւորս Տ. Ներսէս Կաթողիկոսի քարտուղար եղած է յէջմիածին, կը յիշատակէ մեր Թերափը, եւ մեր տղեկներուն փողոցէ փողոց ման գալով եղանակած սա երգը կը հրատարակէ.

«Նուրին եկել ա,

Աջ բա Հիւրին եկել ա.

Կաւմիր գօտիկ կապել ա:

Եղ բերեք, պոքսբ քեքն,

Ջուր բերեք, գլխին քափեք,

Մեր Նուրիի թայր ջրեք,

Ուսեքն խմեքն, ֆէյթ անեքն»:

Բայց գիտէ՞ք, Թերափս աննկարագրելի հրապոյր մը ունի, վայ այն երիտասարդին որ Թերափս անոր նայի: Գեղեցկութեան տիպար է ան, որուն դարպաս ընել ըստ Փրանսական ասացուածի, քծնիլ ըստ Հայ բառի, չըլլար: Միհրանիկն անգամ, սա մեր Տիրանիկն անգամ, այս երկու աստուածներն անոր նայելէ կ'զգուանան: Գիտէ՞ք, այս իմ Թերափս հիմա ո՞ւր է. — լոյս աշխարհի մէջ: Գիտէ՞ք թէ հիմա ի՞նչ կ'անուանուի ան. — ՀՈՒՐԻ եւ թէ ՆՈՒՐԻ:

Իսկ Շարունալն է իմ Թերափս Սվազի մէջ, ուր երաշտութեան ատեն շարմաղը խոտով լեցուն տղեկի մը գլխին վրայ դրուած՝ կը տարուի փողոցէ փողոց, չըջապատուած պտըտիկներէ, որոնք կ'երգեն Թուրքերէն.

«Եաղմուր եաղմուր եաղ իսքեր,

Գոչ-գոյուն գուրպան իսքեր.

Թեքեք խամուր իսքեր,

Փրունեք չեօրեկ իսքեր:

Վեք արահրմ, վե'ր  
Պիւ սիւրիւ եաղմուր»:

Շարմաղի խոտերուն մէջ դրամներ կը ձգուին, եւ այդ դրամներով որձ ոչխար մը կը գնուի եւ կը տարուի վանք, ուր մատաղ ըլլալով աղքատներու կը բաժնուի: Ի տես այս սրտաշարժ արարողութեան եւ հանդիսի, Թերափս կ'արտասուէ, այսինքն երկինք կ'անձրեւէ:

Վանայ քանի մը գիւղերուն մէջ ալ իմ Թերափս է Ձախաւէրը, որուն ծայրը կը փաթթեն մեր լամուկներն քուրջեր եւ գոյնզգոյն ծաղիկներ ու խոտեր: Գիւղէ գիւղ պտոյտ ընելէ յետոյ՝ երեկոյին մթնշաղի ատեն ձախաւէրը լուսաղբիւրի մը գուռին (աւաղանին) մէջ կը ձգեն, որ թրջուի եւ երկինք անձրեւէ, յետոյ մատաղ մը կ'ընեն պարելով եւ երգելով վանքի մը մէջ կամ խաչմանուկի քարի մը առջեւ:

\* \* \*

Այս տօն կ'ըսուի ըստ Տօնացուցի «Գալուստ Գրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակաւ յերուսաղէմ», Ողորդման (Յունարէն), կամ կիրակի, օր Արմաւենեաց, ըստ աւանդութեան ԾԱՂԿԱԶԱՐԴ կամ ժողովրդական բարբառով ԶԱՐԶԱՐԴԱՐ կամ երբեմն ԾԱՌԶԱՐԴԱՐ կամ ըստ Ռուսահայերու եւ Պարսկահայերու ԾՌԶԱՐԴԱՐ, իսկ ի Պեսարապիա, Նախիջեւան եւ այլուր եւս ԾԱՌԿՈՏՐՈՒՆՔ, ծառերու ճիւղեր կտրելով, ի չնորհաւորութիւն իրարու տրուելուն համար:

Այսօր բոլոր ժամերը ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերով կը զարդարուին. եթէ չկան, ծառերու մանաւանդ ուռենիի ոստերով, որոց օրհնած ճղիկներն խնա-

ժով կը պահպանուին եւ իբր յուռութ կը գործածուին մանաւանդ մրրկի ատեն, խաչածեւ իրարու փաթթելով յետ համբուրի՝ ի դէմ հովին կ'այրուին, ըսելով.

«Ասուծոյ մեռնիմ զօրքին,  
Մե պախպան փորձանքին»:

Այսօր կ'սլսի ժամերու մէջ երգուիլ ծննդայով եւ զիյով «Փառք ի բարձունս»էն սկսելով, բայց վանքերու մէջ դեռ կը գործածուին նաեւ Ճօճանակ եւ Ճեռ: Ճօճանակն է թաթի չափ կոթով կլոր տախտակ, որոյ ծայրերէն կապուած ու կախուած են կլորիկ տախտակիկներ, բոժոժաւոր, այնպէս որ ճօճելու ատեն թէ տախտակին եւ թէ իրարու զարնուելով՝ ձայն կը հանեն. իսկ Ճեռն է փայտեայ փոքր գլան, վրան փորուած ատամներով, որոց սուր ծայրերը փոխ ու փոխ զարնուելով, ձայներ կը հանեն այսինքն կը ձուռնէ:

Այսօր ամէն նշանած աղջիկներ ժամ կ'շտապեն, ուր կ'ստանան իրենց կեսուրցուէն գլխի ծիրլաք այն է գոյնզգոյն բարակուկ ծոպաւոր շարլաք-եսպլա եւ դաւար ճիւղերով փաթթուած մեղրամոմ, զոր կը վառեն երբ դպիրք կ'եղանակեն. «Ուրախ լեր յոյժ դուստր Սիօնի...» շարականը: Ժամերգէն յետոյ նորապսակ հարսերն կ'առաջնորդուին ուղղակի իրենց ծնողական տունը, յառաջ քան զայս տօնն երթալ՝ է ամօթ. համազգային կանոն է այս: Հոն կը մնան եւ կ'ընեն Չատիկը, զատկուան յիսուն օրերն (յինունք) ու մինչեւ ցառաջին Պսակ, որուն եւ կ'ըսեն ԱՌԱՋԻՆ ԴԱՐՉ, զի այն կիրակի օրը կը վերադառնան առաջնորդութեամբ իրենց փեսայներու կողմէն զրկուած ազգական հրաւի-

բակներու : Թէ այս ամբողջ օրերուն եւ թէ բոլոր կիրակամտի եւ պահքի օրերուն գիշերները առագաստ չկայ : Ո՛վ բարոյականի սուրբ աւանդութիւն , կանոն ողջպահիկ , չխառնելով հոգեւոր ուրախութեան եւ արտամութեան մէջ մարմնաւոր ուրախութիւն եւ հանգիստ տալ պահ մը մարմնոյ աւելի եւս ի կազդուրումն ուժի եւ առողջութեան :

Բայց ո՞ր եւն իմ սիրուն ու ժպտուն տղեկներս ու աղջիկներս . Ծաղկազարդ ըլլալով ծաղկազարդ կ'ըլլան , անէ տուն , դռնէ դուռ կը սլքտան , ուռնիի դալար ձիւղեր կամ ծիլ ծիլ ծաղիկներ ի ձեռին՝ կ'երգեն ու կը պարեն եւ ձու կը ժողվեն , կարմիր հաւկիթ ու տելու համար Զատիլին : Կարելի չէ ի մի ամիտիել այն գեղոյ՝ տաղերն որք աւելի եւս կը լսուին գիւղերու մէջ մանաւանդ ի Ռուսահայս եւ ի Պարսկահայս առհասարակ :

«Անակ , անակ հօհանակ ,  
Գոռ գոռ որոս մեր կոչնակ .  
Ասծու դուռը բանանք մտնենք ,  
Ժամ պատարագ անենք սարենք .  
Չալ եզր մորթենք , մասաղ անենք ,  
Պոզերը (կաշի) չարսախ անենք ,  
Միշին ցոսինք , քեարգեան անենք :  
Մասաղը սիրողը երկու ձու սայ ,  
Մին ինձ՝ մին իմ բնկերին .  
Ով սայ՝ գիզի բարձի ցոսի ,  
Ով չսայ՝ չոր բարի ցոսի » :

Տեղ տեղ ձօձանակ ու ձեռ ձռնչելով հաւկիթին  
հետ Հոսիկ ալ խնդրելով կ'երգեն :

«Ճրո հրո հրչեռնակ ,  
Ասծու հալալ պիպեռնակ .  
Ընկերս ինկաւ ծովը ,  
Ծովէն ելաւ ծիրանայ .  
Խունկ առեք , մոմ առեք ,  
Տասներկու պատարագ արեք .  
Իմ կարմիր հաւին հաւկիթը դուրս բերեք .  
Ով որ բերե՛ շէն մնայ ,  
Ով չբերե՛ հաւի փորին դեմ կեցայ » :

\* \* \*

«Ճրչանակ , անակ անակ .  
Կեղեցւոյ (ժամուն) դուռը բանանք ,  
Մտնենք մէջը , աղօթք անենք ,  
Դուռ գանք , չալ եզր մասաղ անենք .  
Պոզերը չարսախ անենք ,  
Վրէն պատարագ անենք ,  
Հախուն խաղան անենք :  
Չայթուկ բակենք , սանք հաւերին ,  
Հաւերն ինձ մի մի ձու սան ,  
Չուձուն սանենք , սանք պառաւին ,  
Պառաւիկ ինձ մի կաթայ սայ .  
Կաթէն սանինք , սանք խառասին ,  
Խառասն ինձ մի շիվի սայ .  
Շիվին սանինք , սանք չօբանին ,  
Չօբանն ինձ մի գառը սայ .  
Դառը սանինք , սանք Ասրծուն ,  
Ասուած ինձ մի աղբեր սայ :

Աղբեր, աղբեր, ջան աղբեր,  
 Դու բերդի գլխին աղբեր,  
 Ես բերդի սակին աղբեր:  
 Աղբեր աղբեր կանչեցանք,  
 Աղբեր ձին քամբեցինք.  
 Աղբեր գնաց բանջարի,  
 Բանջար չըլաւ, խոս ըլաւ,  
 Խոսի սակին ծիս ըլաւ,  
 Ծըլվըլալէն դուրս քուաւ,  
 Հանգիստներին (մեռել) լիս (լոյս) ըլաւ:  
 Բերեք տուեք մեր երկու ձուկ,  
 Ասուած պահի ձեր հարսնացուն »:

Բոլոր այս տաղերուն գրեթէ վերջաբանն այս է իբր օրհնէք կամ անէծք.

«Ով որ չսայ՝ իմ երկու ձուկ,  
 Մուկն ու կասուն իրենց քթուն.  
 Ով որ կ'սայ իմ երկու ձուկ,  
 Ասուած պահե իր փեսացուն »:

Ձարմանք, Թրքանայերու» մէջ Ծաղկաղարդին ձու հաւքելու սովորոյթը չկայ, միայն օրհնած կանաչ ձիւղեր իրարու տալով շնորհաւորութիւն կայ. իսկ վա՛յ անոնց որ Գերովբէ անունն ունին, որոց կուսակն իսկոյն կը ցատկեն անառակներ սա շարականը երգելով.  
 «Այսօր աւանակ քերովբէ... »:

\*  
 \*  
 \*

Ծաղկաղարդով կը վերջանայ ԱՂՈՒՀԱՑԻՐ: Մեծ-պահճի բուն անունն է այս, որոյ կրճատուածն ԱՂՀԱՑԻ կամ ԱՂՑԻ: Աղուհացք ըսուած է, որովհետեւ այդ քառասուն օրերուն մէջ, որ ի յիշատակ Քրիստոսի քառասնօրեայ ծոմապահութեան կը կատարուի, միայն աղ ու հաց ուտելու ամենահին սովորութիւնը կար եւ խստիւ կը պահպանուէր, թէեւ մինչեւ ցճաշու ժամ ծոմ պահելն ալ անհրաժեշտ էր, որ եւ յետոյ տակաւ մեղմացաւ միայն մսեղէնէ եւ կաթնեղէնէ հրաժարելով:

Արդարեւ աղն ու հացն են մարդկային կենդանութեան թանկագին պէտքերու անհրաժեշտներէն, մանաւանդ որ կը հայթայթուին «քրտամբք երեսաց» ըստ աստուածային անէծքի, մինչդեռ ջուր, օդ եւ լոյս բնատուր են: Աղն ու հացն էին նաեւ նշան հպատակութեան եւ Արեւելքի մէջ ժողովրդեան կողմէն իշխաններու եւ թագաւորներու կը մատուցուէին ափսէի մէջ դրուած, իցոյց տիրասիրութեան եւ հաւատարմութեան:

Աղուհացքի, որ է Մեծ կամ Աւագ պահք, կը յաջորդէ Անորդական կամ Քառասնորդք պահք, կը յաջորդէ ԱԻԱԳ-ՇԱԲԱԹը, որոյ առաջին երեք օրերն՝ Աւագ երկուշաբթի, երեքշաբթի եւ չորեքշաբթի տուն-տեղ կ'աւլեն, լաթ կը լուան, կը մաքրեն, նախապատրաստ կ'ըլլան Ձատկին համար կարմիր հաւկիթ ներկելով, կաթայ եփելով եւայլն: Երեքշաբթի օրն է «Յիշատակ տանն կուսանաց» եւ երեկոյեան Աւետարանի ընթերցման աւտեն տասը փոքրիկ աղջիկներ կամ մանչեր շապիկ հագած վառ մոմով կը բոլորին Մեծ-գրակալին շուրջ. եւ դպիրներէն աւագը կամ լուսարարը ափսէի մէջ դըրուած ոլրած տասը թղթիկներ կը բերէ եւ կ'առաջարկէ իւրաքանչիւրին մէկ հաա առնուլ, որոց մէջ ուրոյն ու-

որոն գրուած կան ինաստուև եւ յիմար բառերը : Անոնց որոց իմաստուն բառն է հանդիպած եւ հինգ հատ են , մոմերը վառ կը մնան եւ որոց յիմար վիճակուած է , մոմերը կը մարուին : Տիմար սովորութեան մը ծիծաղելի տեսարան :

Աւագնիւնդչարթի օր ամէն ոք ոտնալուայի կը մասնակցի ըստ Տօնացուցի թէ եպիսկոպոսն կամ քահանայն «լուասցէ զոտս ամենեցուն ի մեծաց մինչև ցփոկունս» : Տաշտ կամ կոնք մը , լի ջրով գրուած կայ , եւ ինչ խառնաչիտթութիւն : Երբ մեծ ու պղտիկ իրար կը հըրմըշակեն ոտնալուայի համար : Կոնքի կամ տաշտի պըղտոր ջրէն կը տարուին կը տրուին անասուններուն ալ որ մաքրուին մեղքէ : Հապա իւղը , իրենց աջ ոտներու վրայ , երբեմն ձախին ալ , քսուած այդ իւղէն աչք ու քիթ , բերան ու ականջ կը քսեն , որմէ կը տանին ու կը քստեն անասուններն ալ : Այս սովորոյթ գրեթէ ընդհանուր է մանաւանդ ի Կիլիկիա , ուր , ուրեք ուրեք ուրիշ կոնքով կամ տաշտով օրհնած ջուր եւ ախտէն իւղ կը տարուի վերնատուն , կիներու եւ աղջիկներու աջ ձեռներ լուալու եւ իւղոտելու համար . այս է ձեռնկրասն :

Աւագ-ուրբաթն է աւագ օր մեռելոց : Գերեզմանք կը լուսավառին , հոգէնաց կը բաշխուի առաւօտուն , իսկ երեկոյին ժամուն մէջ դագաղը կը դրուի , ըստ Զէյթնցի բարբառի յիշ-փեքը , հոն իբր թէ Քրիստոս փռուած է , այն է պարած վերմակ մը շապիկի մը մէջ պարուրուած , որ ժամարարի գօտի ունի մէջքին , նախորտ փորն ի վար , վակաս վղին , սաղաւարտ գլխին , բաղպան ձեռներուն , Աւետարան ի կուրծս , այս է թաղումը . ճիշդ ննջեցեալ քահանայի թաղման նմանօրինակութեամբ :

Դագաղին ձողերը ուսելու վրայ առած են հււժկու շապկադգեստ տիրացուներ իրենց ետեւն ու առջեւ դպիրներ ունենալով , որք «Պարգեւատուն ամենեցուն» շարականին երգեցողութեամբ թափոր կաղմած են , եւ աշխարհի չորս կողմը դառնալով մերթ ընդ մերթ կը կենան , որ քահանայն ընթեռնու Քրիստոսի թաղման չորս աւետարանները : Այլ ժամերգէն յետոյ տեսարանն է կարի խառնաչիտթ , վամազի երբ ճաղը կը զետեղուի բեմին վրայ շինուածոյ դմբէթածածք բաց սնտուկի մը մէջ , իրր գերեզման , մեծ ու պղտիկ իրար կը հրեն կը հրմշակեն , կը ծեծեն կը ծեծկուին գերեզմանէն խտտիկ մը , ծաղիկ մը խլելու , տուն տանելու եւ զայն իբր յուռութ գուրգուրագին պահպանելու համար . ո՞վ գիտէ , գուցէ օր մը , չար օր մը , սեւ օր մը լացի եւ սգի օր մը պէտք ըլլայ այն : Զեր հաւատքին մեռնիմ , ո՞վ Լուսաւորչի լոյս հաւատքի լոյս դաւակներ :



Յերուսաղէմ եւս սովորոյթներ կան . ուխտաւորներ ճրագաւոյցի ատեն Քրիստոսի գերեզմանի լոյսէն կը վառեն իրենց մոմեր , որոց տկուկները կը պահուին եւ կը վառուին յաջորդ տարին իրենց ժամուն մէջ ճրագաւոյցի երեկոյին : Քրիստոսի գերեզմանին մէջ զոյգ զոյգ կամ խմբովին մանուկներն իրարու շաւարար կ'ըլլան , եթէ մանչ են , իսկ եթէ աղջիկ ու կին են , կ'ըլլան իրարու շաւար : Իսկ աղբերգիր եւ քեռգիր կ'ըսուին անոնք որք ոեւէ մէկ վանք կամ լուստուն իբր ուխտաւոր իրարու կը հանդիպին :

Երուսաղեմի օրհնած աճառն ու Քրիստոսի բանտին մէջ կապուած ձիթենիի ծառին ձիթապտուղի կուտերէն

չինուած համրիչներն են նուիրական: Նոյն աճառով կը լուան իրենց սիրական մեռելը եւ կուտերէն մէկ հատ կը դնեն մեռելին բերանը, հիմա դուն ուրեք կը գործադրուին այս սովորոյթք. բայց պատանն է անհրաժեշտ, կտաւ է այն, նկարէն սեւ խաչով, տէգ եւ եղեգնածայր սպունգ եւ աքլոր ի վերեւ կամ շուրջ խաչին, իսկ ներքեւ խաչին կայ գանկ մեռելի, ըստ աւանդութեան Ադամական գանկ: Այդ պատանով ի հող կը մտնեն մեր հսգի կամ ւղջեսի, ւահեսի պապաներն ու մամաները կամ իրենց սիրականները:

\* \* \*

Ինչպէս Տէրնտան ու Վարդավառը եւ Զարգարդարը նախ հեթանոսական տօները ըլլալով քրիստոնէացած են, կ'երեւի թէ Զատիկն ալ նոյնպէս եղած ըլլայ: Եւ կ'արժէ յիշատակել թէ ինչպէս ի հնումն ճանճիկ աստուած մը եղած է, որպէս կը յիշուի Սուրբ-Գրքի մէջ (Գ. Թագ. Ա. 1—13), գուցէ Զատիկ աստուած մը կամ Զատիկ անունով տօն մը եղած ըլլայ, զի ցայսօր Զատիկ կոչուած կարմիր միջատը, որ այս օրերուս մէջ կը թռչտի, մերիններէն կը բռնուի, ախի մէջ կը շոյուի եւ յետոյ կ'արձակուի եւ կը դիտուի թէ ո՞ր կողմ կը թռչի, եւ կը հայուի կամ մեկնուի թէ այն կողմէն պիտի գայ յաջող բաղդ մը, կամ յաջող դարձ մը պիտի ընէ այն կողմէն տարակայ սիրական մը:



## Չ Ա Տ Ի Կ (1)



Զատիկի առաւօտուն կայ մի հ'անաչի եւ մարդկային ապառաժ սրտերն անգամ ի թունդ հանող մի դարմանաչի տեսարան. անդ՝ հայարնակ դաւաճներու մէջ տեսարան, որ Հայուն հաւատքն գեր ի վեր ի հանդէս կը հանէ, Զատիկի գիշերն երբ ժամերգութեան զանգակի առաջին հնչիւնը կը լսուի, Հայ ժողովուրդն ոչ թէ ժամ, այլ նախ ի գերեզման կ'երթայ, իւրաքանչիւր ոք իւր ննջեցելոյն գերեզմանաքարին վրայ մո՛ր կը վառէ, մեղրամո՛մ, ոչ թէ՛ ճարպու, իւր մեղուններու վեթակներէն առնուած ու շինուած, սո՛ւրբ մոմ. կը վառէ այդ մոմ, կը ծնրադը՛: զայն կը կանգնէ ի գլուխ տապանաքարին եւ կը մրմնջէ առ ննջեցեալն, աւետելով անոր. «Քրիստոս յարեան ի մեռելոց»: Ո՞ր ազգն ունի այսպ'իսի սո՛ւրբ բարոյական. երախտագիտութեան եւ սիրոյ այս սրբիսի խորին զգացում. ահա՛ Զատիկ եւ ահա՛ ողջոյն աւետեայ կենդանիներ: առ ննջեցեալս թէ՛ «Քրիստոս յարեան»:

Զատիկի գիշերին Հայոց համայն գերեզմանատունք այսպ'իս լուսավառ կը պայծառանան:

\* \* \*

Ի հնումն Հայ ժողովուրդն ունէր նուիրական տօներ, եւ այդ տօներով իւր սրտին սիրական արեւն ու լոյս կը պաշտէր եւ անդադար յեղյեղելով շուշանն ու

(1) Տէրնտան եւ Ծաղկազարդ ընդ մամով:

վարդ, ողբելին կը խայտար: Բազմիններն կը թնդային ի ձայն քնարի Հայ գուսաններու, այլ այս անգամ մինչ հեթանոսութեան յաջորդած էր քրիստոնէութիւնը, պիտի լռէին այդ գուսաններ եւ պիտի չթնդային քրիստոնէական տաճառներու խաչանիշ կամարներ, քանի որ այս նոր կրօնն ալ ունէր իւր կարմիր-Արեւը, որ ընդ համօրէն աշխարհ լոյս ձագագայթած էր: Քրիստոս էր այդ արեւը, որ շուշանափայլ ու վարդավառ լուսով պիտի կրանք շնորհէր աշխարհի: Ուստի Հայ տաղարանը ի փառս Չատիկ ո՛չ ապաքէն պիտի երգէր եւ ի խինդ հանէր սրտեր, եւ տաճարներու գմբէթներ ի թունդ հանէր հեթանոսական հաւը քրիստոնէական հաւին-Քրիստոսի փոխանման ընելով:

Լսենք ուրեմն,

«Հաւիկ մի պայծառ տեսի աննման,  
Ի յայն իսպախայտի վերայ աննման.  
Աննմանիդ ո՞վ նման. — դու նման:  
Զքեւս արծաքափայլս ունէր աննման,  
Արեգական շողոյն նման աննման.  
Զձայնիկն ողորմուկ ամէր աննման,  
Գաբրիէլեան փողոյն նման աննման.  
Զաչերն արսասուօք լնոյր աննման,  
Առաւօտեան ցօղոյն աննման»:

Իսկ դուք ո՞ւր էք ո՞վ իմ քնարերգուներս, սիրատարի ու սիրազեղ աչուղներս, լուսակաթ աչուղներս եւ լուսացնցուղ խաչուղներս ու խաչվառներս. դուք էք մեր հաւատոյ փառապատկներն, որ սուրբ Կարապետէն ազ ուղեցիք երգելու համար Չատիկը, դուք էիք որ Աստուծմէ շնորհք առիք. երգեցէք ուրեմն, եւ

մենք լսենք ձեզ, լի անպատու սիրով առ Աստուած եւ առ սրբանուէր յիշատակս Չատիկ:

«Արեւն է ծագեր վեր մեր երդիքին,  
Ծագեր է ծագեր լոյս Լուսաւորչին:  
Չասիկն է բերեր լոյս մեր երդիքին,  
Հաւիկն է արթուն սուրբ Կարապետին.  
Կարմիր է հաւկիթն մեր սուրբ Չատիկին,  
Հաւիկն է ամէլ սուրբ Կարապետին»:

Իսկ դուք եւս ո՞ մամեր, դուք եւս ձեր օրօրն ըսէք, զի Չատիկ Տեառն է:

«Գիւնին է կարմիր, տեսեր կ'օրհնէ,  
Չատիկն է եկեր, մասաղը կ'օրհնէ:  
Մեր մասաղիկն՝ է մեր ախորիկ,  
Իւր մեռնիմ ես խորոս կասարին:  
Չատիկն է մեր հաւկիթիկ,  
Նշխուն է մեր հաւկիթիկ:  
Օրոր. իմ գաւակիկի,  
Օրոր, աչիս լուսիկ.  
Օրոր, Լուսաւորչիս,  
Օրոր, իմ գաւակիս»:

\* \* \*

Հիններն հաւկիթը տիեզերքին խորհրդանշանը կարծելով, կը հաւատային թէ հաւկիթի կեղեւն կը նշանակէ ցամաքը, սպիտակուցն՝ ջուրը, դեղնուցն՝ կրակը, իսկ օղն է թաղանդի եւ կեղնուի մէջտեղ: Այս հաւատք եւս կար թէ երկիրս հաւկիթի թուխտէ ծնուած է, ուստի շատ փիլիսոփայներ չէին ուտեր հաւկիթ, նուիրա-

կան բան մը որպէս թէ պղծած կամ փճացուցած չըլլալու համար :

Միայն սա ճշմարիտ է թէ ի հնուց անտրի սովորութիւն կար դարնանամտի օրն իւրաքանչիւր աստիճանի անձեր իրարու ընծայ տանիլ հաւկիթներ, մանաւանդ կար իր եւ երբեմն նշխուն : Նաեւ ոսկիէ կամ արծաթէ շինուած կարմիր հաւկիթներ կը տարուէին իշխաններու ի նշանակ հպատակութեան եւ այս յաճախ արեւելքի մէջ, մանաւանդ Հայ եւ Պարսիկ ազգերու մէջ :

Պարսիկներու արքայն մեծն Շէմշիտ<sup>[1]</sup> որ արդի ամանորն հաստատեց այսինքն Նէվրուզը, ի յուշ ստեղծման աշխարհի, հաւկիթով ընծայարեբութիւնն որ արդէն կար, պաշտօնականի վերածեց, որ մինչ դարդ կը կատարուի մեծահանդէս, ութ օր : Պարսիկ նախարարներ գիշերահաւասարէն մէկ ժամ առաջ չքեղ հագուած Շահին պալատը կ'երթան եւ Շահէն կ'ստանան ոսկեղէն հաւկիթ : Յետոյ ամէն ոք իրարու կը զրկէ նկարուն եւ կարմիր հաւկիթներ : Այս տօնին «Նոր հագուստներու տօն» ալ կ'ըսուի, զի չկայ մարդ մը որ ութ օր շարունակ նոր լաթ չհագնի, մինչեւ իսկ յետին աղքատը, որուն կը տրուի նոր լաթ կամ ունեւորի մը ձեռամբ եւ կամ հանգանակութեամբ :

Հայերն ու Պարսիկներն որովհետեւ արեւը կը պաշտէին, ուստի բնութեան այս նոր յարութիւնը այսինքն դարունը կը հոգակէին «Յաղթութիւն արեգական զօրութեան», որպէս յետոյ քրիստոնեաներն եւ զայն հոգակեցին «Յաղթութիւն արեգականն արդարութեան», զի

(1) Գուցէ սա է Շահ ձէլալէտաին, հեյլնակ պարոկական արդի տու մարին :

Քրիստոս ձիշդ այս օրերուս մէջ աշխարհի տուաւ նոր կեանք իւր յարութեամբ :

Հրեաներն եւս Պասէքի տօնին՝ պինդ խաշուած հաւկիթ կը գործածեն, եւ ըստ Թալմուտեան բացատրութեան այն հաւկիթները կ'ակնարկեն Ձիզ թոչունը որ մյուս աշխարհին մէջ միայն Իսրայելի զաւակներուն համար հաւկիթ պիտի ածէ իբր անմահական կերակուր, մանանայէն աւելի համեղագոյն : Կ'երեւի թէ հաւկիթական այս աւանդութիւն Պարսիկներէն նոքա փոխ առած են, երբ գերի էին երբեմն ի Պարսկաստան Քրիստոսէ առաջ :

\*

Միշտ խնդիր եղած է թէ հաւկիթը կարմիր ներկելու եւ ուտելու սովորութիւնն ե՞ն առաջ ո՞ր ազգին մէջ մուտ գտած է, այսինքն ո՞ր ազգին գիւտն է :

Հաւկիթն ուտելը բնական է, սակայն զայն ներկելը ինչո՞ւ համար է, հարկաւ այս ալ իր սկզբնապատճառը ունենալու է : Արդ քննելի է թէ կարմիր ներկը եւ հաւկիթը ո՞ր աշխարհի մէջ իրենց սկզբնական գոյութիւնն ունեցած են . իրաւ է որ հաւկիթին գոյութիւնը աշխարհիս մէջ ամէն տեղ կայ, բայց կարմիր ներկը ամէն տեղ չկար, միայն թէ սա յայտնի է թէ կարմիր ներկին հայրենիքն՝ արեւելքն է, ուր կը գըտնուի Որդանկարմիր անուն բերքը, որմէ կ'արտագրի կարմիր ներկը եւ կը տարածուի բոլոր աշխարհ : Բայց այդ կարմիր բերքը հաւկիթին հետ ի՞նչ բան ունի, հաւկիթը եթէ բոյս մը ըլլար, գուցէ այդ ներկին հետ խնամութիւն մը ունենար, ուրեմն ուրիշ մէկ պատճառ կայ որ կարմիր ներկն ու հաւկիթն իրար գտեր եւ իրարու հետ այսպիսի խնամութիւն մը ըրեր են :

Հաւկիթի կարմիր ներկելու աւանդութիւնն այս ըլլայ գուցէ . որովհետեւ կարմիրն է՝ իբր սիրական գոյն եւ Հայերն էին ի բնէ բնապաշտ եւ բնութեան մէջ գերընտիր բերքն է Որդան-կարմիրը եւ բնութեան ծընընդարեւութեանց մէջ հրաշալին է հաւկիթը , ուստի զայն Որդան կարմիրով զարդարուն ընելով նուիրագործած են , Սասուածներու եւ իրարու միանգամայն ընծայարեւ ըլլալով , մանաւանդ զարնամտի օրերուն մէջ , երբ բնութիւնն է հրաշագեղ եւ վառ ի վառ՝ կարմիր արնակ :

Արդէն մեր մէջ մինչեւ ցայսօր կարմիր ներկել սովորոյթ է մասաղցու եզն ու կով , աքլորն ու հաւ , եւ գինիով լուալ ամէն նուիրական անօթներ ըստ Մաշտոցի : Հարսնիքներու մէջ եւս ո՛չ ապաքէն իննան , կարմիր քողն ու նարօտ անհրաժեշտ են , եւ Չատիկի միջատին՝ արեւ-պեօնի Կայծօռիկ կամ Փոսուռայի կըսուի Չափիկ :

Ազգի մը մէկ սովորութիւնը դւրիշ ազգերու մէջ ընդհանրացած ըլլալուն օրինակները բազմաթիւ են , դիտենք թէ հաւկիթ ներկելու սովորութիւնը հաւանականաբար Հայերէն օրինակուելով , տարածուած է ամէն տեղ , քանի որ նոյն իսկ կարմիր ներկն է Արեւելեան բերք :

\* \* \*

Եւ որքան տաղեր կան որ կ'երգուին Չատիկն . կարելի է համբել , ո՛չ ապաքէն ամենուն բերանն են սոյն օրինակ երգեր :

« Մարսր կուգար ծաղկընեով ,  
Երկնից հաւեբն կարգըլով .  
Ահա եկաւ մեզ սուրբ Չափիկ ,  
Բերեմք ներկեմք կարմիկ հաւկիթ » :

Այլ միայն տաղերը չեն արդարեւ , որք սրտերու կը ներշնչեն հոգեկան աւիւն ու խանդ , այլ կան խաղեր , զատկական խաղեր որք կը կատարուին լուսաղբիւրնեւրու մօտ , զարդարուած շատ մը կարմիր հաւկիթներով զորս կ'ստանան յաղթական պարաւորներ ծերունի դողդոջուն ձեռներէ եւ գովեստներ կը լսեն նահապետական բերաններէ : Հոն աշուղք կը սաղեն , եւ աղջիկներ արծաթեայ զագաք ի գլուխ , թեթեւոտն կը պարեն կանչար : Պարկեշտ հարսներ կը կայթեն շորտը եւ պատանիներ դէմ առ դէմ շարուած , մերթ իրարու մօտենալով եւ մերթ իրարմէ հեռանալով , կը խաղան ծախը , եւ կամ իրենց թեւերն իրարու ուսին վրայ ձգելով կը խաղան ցասֆանը , քրդական նախարալին ալ խառնելով . իսկ կիներ կարմիր վալա հագած եւ լաչակ ի վեր ձգած դուրան պարը բռնելով բոլորածեւ կը դառնան : Հաբլ է յիշել արդեօք վագրը ու վարձիք . երիտասարդք հեւ ի հեւ չնչաստպառ կը վաղեն հեռուն բարձր տեղ մը նահապետին գաւազանէն կախուած կարմիր հաւկիթը առնելու համար [1] : Հապա կարմիր ներկուած ուլիկներն ու գառնուկներն , եւ միւս անասուններն [2] , որ այսօր կ'արծաղուին եւ կ'օրհնուին նահապետէն եւ լուսաղբիւրի ջրէն կը սրսկուին , որպէս զի կենդանիներն եւս մասնակցութիւն ունենան զատկական ուրախութիւններուն : Ահա այս է զատկական խաղերու փոքրիկ մէկ նկարագիրը , որք տակաւին կը կատարուին գաւառներու մէջ , իրարմէ աւելի կա՛մ նուազ տարբերութեամբ :

(1) Խաղերու շարքն ու յիշատակութիւնը տես «Անդիլի գրութիւն եւ Աւակը» գրքի յերեմ ԱԱ-ԱԸ :

(2) Տեղ տեղ Համարձմոն եղին , արարողութիւնն ալ կը կցո ի :

\* \* \*

## ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ

Հաղիւ թէ արշալոյս կ'սկսի երեւիլ, սրտեր կը տրոփեն, զարմանք. երկու անեղ կուսակցութեանց իւրաքանչիւրին սրտեր, մին անեղ, վասնզի ունի քահանայապետներ, դպիրներ, ծերեր, փարիսեցիներ, սաղուկեցիներ եւ իշխաններ, ժողովրդեան յոյժ մեծագոյն մասն յիւր կողմ, իսկ միւսն եւս անեղ, թէ եւ փոքրաթիւ, եւ հաղիւ քանի մը հատ իշխաններ ունի, այլ սակայն անեղ, վասնզի Յիսուսի աստուածայնութիւնն ունի յիւր կողմ, հաւատք թէ Յիսուս պիտի յաղթէ մահուն, թէ նա որ մեռեալներու կեանք տուաւ, կարելի է որ յաղթուի մահէն: Սրտեր կը տրոփեն, մահաւանդ քանի մը կիներու սրտեր, որք անհամբեր կ'սպասեն առաւօտեան, որպէս զի երթան իրենց վարդապետին եւ բարերարին, որ մեռած էր առանց օծութեան, առանց օրհնութեան, երայտապարտութեան եւ յարգանաց վերջին պարտքը կատարել. հէք կիներ, որք եթէ այս իրենց պարտքը կատարած լինէին Յիսուսի թաղման պահուն՝ գուցէ ժողովրդական կատաղութիւնը բլքտէր զիրենք, ուստի առ անի՝ Յիսուսի թաղման միայն յուզակաւոր եղած էին: Գիտէին այդ կիներ թէ Յիսուս եթէ ոչ Աստուած, գէթ մարգարէ էր, ուստի Յիսուսի մարմնոյն գոնէ օծութիւն մը տալ արժան կը մարէին, այլ սակայն երկիւղն այդ մտածումը յետաձգել տուաւ այդ կանանց, եւ սպասել կատաղի եւ մուկին կրից հանդարտութեան: Ուստի Յիսուսի մահուան երրորդ օրը շատ կանուխէն դէպ ի Յիսուսի գերեզմանը կը յառաջանան, մտմտալով միանգամայն թէ ո՞վ պիտի տէրունական գերեզմանի անագին քարն ի բաց պիտի թաւալէ, զի իրենք ոյժով տ'ար էին, ա-

ռանց մտածելու միանգամայն թէ հոն զինուորներ կային քահանայապետէն կարգուած, որք պիտի թոյլ չտային կնքուած տապանաքարին դպչելու առանց քահանայապետական հրամանի, բայց միթէ այս իւղաբեր կանանց խորին եւ անկեղծ հաւատքն արդեօք կը թողուր մտածել այդ ամենուն վրայ:

Իւղաբեր կանայք կը յառաջանան ի գերեզման, լսնելով, լուզով եւ մոմով, կը յառաջանան եւ անա կը գտնեն խոշոր տապանաքարը ի բաց ձգուած. մինչ կը զարմանան, անա լուսեղէն բերաններէ սոյն հրեղէն աւետիսը կը լսեն, մարդկային աղգի վերակենդանութեան սոյն աւետիսը. «Ձի՛ լսնդէք զ'իենդանին ընդ մեռեալս. Քրիստոս յարեաւ» Այս կիները սարսափաւ յերուսաղէմ կը մաննեն, հերարձակ կը հասնին յԱռաքեալու ու կ'աւետեն. «Քրիստոս յարեաւ»: Առաքեալք կը շփոթին, Պետրոս եւ Յովհաննէս կը փութան ի գերեզման, եւ հաւատոյ ձայնիւ կը կոչեն. ուրեմն «Քրիստոս յարեաւ»: Այլ սակայն մինչ ի Գալիլիա Առաքեալք հաւաքուած են, անիւ եւ անձկանօք. Յիսուսի գերեզմանի պահապանք կը գուժեն առ քահանայապետն Կայիափայ, թէ «Քրիստոս յարեաւ»: Կայիափայի աչերէն կարծես կայծակներ կը թափի՞փին, փութով ի ժողով կը կոչէ Ծերակոյտը, որք կը գումարին, խոսարձելով իրենց ճաղատ գըլուխները եւ սպասելով, լսել քահանայապետէն թէ ինչնոր բան պատահած է: Լուսութիւն մը տիրած է խորին եւ անաւոր, սրտեր կը տրոփեն եւ կը տագնապին սահաւոր կաս'յածէն, թէ մի գուցէ մոլորեցուցիչը, խարեբան յարութիւն առած լինի: Կայիափայ կասկարմիր քղամիդ վրան ձգած, ինչան մահաչուկ դուժի, քայլ առ քայլ կը յառաջանայ, կը բաղմի քահանա-

յայտատկան ամուսն, որոյ բարձրագիւր յենարանին ի վերեւ Մեծ մարգարէն Մովսէս լուսեղէն երկու եղջերածեւ յնցողներ ի ճակատն ունենալով արձանացած կայ: Ժողովն փառաւոր, կաճառն անկաշառ, դատաւորն անաչառ, ո՛վ ոքանչեւի տեսիլ անաւոր եւ նշանաւոր, Կայրափայ կը գուժէ. « Ի զուր գերեզմանին վրայ անագին քար մը դրի, յարեան: Ի զուր տապանաքարը կնքեցի, յարեան մուրեցեցիցիք. խաբեբայն: Ի զուր պանապաններ դրի ի հսկել, այլ նա, մուրեցեցիցիք, խաբեբայն յարեան. քարն է գլտորուեր, պահապանք ի գետին են փռուեր եւ ճեսիլ իրեջսակաց եւս տեղի ունեցեր է»:

Քահանայապետին այս խօսքն անմիջապէս կ'ընդհատուի Մերակուտէն. « Ի զուր թող հրեշտակք երեւին եւ աւետեն թէ յարեան: Ի զուր թող ինքն իսկ Յիսուս երեւի եւ ինքզինքը կենդանի թող ցոյց տայ իւր աշակերտաց թէ յարեան. ԿԸ ԿԱՇԱՌԵՆԻ ամէն բերան. » [Մասք. ԻԶ. 15]:

Մինչ ծերակոյտն այսպէս կը խորնի եւ կը ձեռնարկէ ի գործ, անա Տէր Յիսուս Գալիլեա կ'երեւի իւր աշակերտաց եւ կ'ըսէ. « Գնացէք ընդ ամենան աշխարհ. գնացէք, քարոզել Աւետարանս. գնացէք. « Ես ընդ ձեզ եմ զամենայն առուրս մինչեւ ի կատարած աշխարհի. » [Մասք. ԻԸ. 20]:

\*  
\*  
\*

ՊԱՍԷՔԸ Հրէից Եգիպտական ծառայութիւնէ ազատութեան յիշատակի տօնն է, եւ կը կոչուէր Եբրայեցիքէն Փեասիս այսինքն է Ելի. եւ կը կատարուէր մեծահանդէս: Ամէն Հրեայ պարտական է գալ հոն ուր

Աստուծոյ խորանն ու տապանակը կային, եւ հոն մորթել եւ ուտել Պասէքը:

Այն ամիսն որ ի հետմն կը կոչուէր Ապրիլ եւ այժմ Նիսան, Աստուծոյ հրամանաւ նուիրական եւ առաջին ամիսն եղաւ Հրէից, զի Պասէքը կը կատարուէր որպէս պատուիրած էր Մովսէս սոյն ամսոյ մէջ եւ այսպէս. « Ոչխար կատարեալ, արու, տարեւոր, անարատ լիցի ձեզ, յողեաց — ոչխարներէ — եւ յայծեաց առուցուք եւ եղիցի ձեզ պահեալ մինչեւ ի չորս եւ ի տասն առուր ամսոյս այտորիկ, եւ զենցեն զնա ամենայն բազմութեամբ ժողովրդեան որդւոցն Իսրայելի ընդ երեկս... [Ելի. ԺԲ. 1—20]:

Պասէքի երկրորդ օրը կը կատարուէր Երախայրեաց տօնը: Երեկոյն քաղուած հունձի որայ մը խորանէն դուրս գաւթի սանդիւն մէջ կը կատուէր, որոյ վրայ քահանայն յետոյ ձէթ ու խունկ թափելով ի ցոյց կը հանէր օրհնելով աշխարհի չորս կողմերը: Քահանայն ապա նոյն ձեւով օրայէն ալ մը առնելով կը նետէր դէպ ի սեղանն, այնուհետեւ ամէն Հրեայ ազատ էր քաղել իւր հունձը: Երախայրիք ի նշան էին շնորհակալութեան առ Աստուած: Այս ընծայն մասն էր փոխանակ ըլլորին, որոյ տէրն էր Աստուած [Գեւ. ԻԳ. 10]: Տէր Յիսուս խաչուեցաւ զատկական գառին օրը եւ յարութիւն առաւ այս սոյն որայնիրու — Երախայրից մատուցուած օրը, ուստի Առաքեալն կը գրէ. « Առաջին պտուղն նրնջեցելոյ [Ա. Կորնթ. ԺԵ. 20]:

Պասէքը այնպիսի բարոյական կապ մ'էր, որով բոլոր Իսրայելացիք, հեռաւորն ու մերձաւոր, հարուստն աղքատ իրար գտնելով ու տեսնելով կը մխիթարուէին: Մովսէս զայս հաստատեց վառ պահելու համար Իսրաւ-

յէլի սրտին մէջ աստուածաշնորհութեան սուրբ հուրը :  
Կը խայտար Իսրայէլ լսելով այն երգերն որք կը հնչուէին  
ի ձայն փողոց՝ ի քահանայից , կը հրահանգուէր ի կեն-  
ցալ բարոյականի , լսելով մարգարէից աստուածաշունչ  
պատգամները : Եւ Պասէքն այսպէս ներքին խորին հա-  
ւատք մը հաստատելով՝ Իսրայէլի սրտէն կը ըզլսեցնէր  
սա հաստատուն դաւանանք թէ Իսրայէլ ունի մի միայն  
Մէկ Աստուած եւ Մովսէս ծառայ նորա :

Քրիստոնէութիւնն եւս ի սկզբանէ անտի Հրէից օ-  
րինալաւն ունէր իւր համախմբութիւնն , որ Ուխտաւո-  
րութիւն կը կոչուէր , միայն թէ Հայ քրիստոնէութիւնն  
Չատիլի ածնի համար բայ ի յերուսաղէմ ուխտաւորու-  
թեանէ՝ չունէր ուխտաւորութիւն : Ամէն Հայ-քրիստոնեայ  
Չատիլին պարտ էր գտնուիլ իւր տան մէջ , իւր երգի-  
քին տակ , իւր սեփական եկեղեցւոյն մէջ , հոն կատա-  
րել Չատիլին իւր աղգականքն ու բարեկամօք եւ սի-  
րելեօք , յնծագին կատարել , զի «Չատիլ Տեառն է» :

\*  
\* \*  
\*

Մեր նախնիք Պասէքը Չասիլ թարգմանած են ա-  
ւելի բարձր բարոյական դաս մը տալու համար Հայ  
ժողովրդեան : Չասուիլ ի մեղաց , այս էր Չասիլ բառին  
բուն իսկ նշանակութիւնն , ուրեմն Հայ-քրիստոնեայ  
մը Չատիլին արտասանելով իսկոյն պիտի յիշէ թէ այլ  
եւս գերի չէ մեղաց , զս այսինքն ի բաց ձգած է հին  
մարդը , մեղաց մարդը , եւ թէ ազատուած է մեղաց գե-  
րութենէն :

Չատիկը կը տօնուի մեծահանդէս եւ որքան այսօր  
գեղեցիկ կ'եղանակուի սա մեղեդին , տաղերգը :

«Հաւուն հաւուն արքնացեալ՝  
Դիսելով զհեքանոսս .  
Չայներ , ձայներ սաւրակին՝  
Սիրասնունդ սիրելոյն :  
Գարձիւր , դարձիւր Սովնացիդ ,  
Ընդ վիմին հովանեաւ .  
Եկ հարսնուհի ի լեռնց ,  
Ընծայ ի դաժաց այծեմանց :  
Եկեալ եկեալ սաւաղին  
Յնփրայիմ Բեքելին .  
Այսօր , այսօր անբառամ  
Ծաղկեցաւ լուսափայլ » :

Այլ կանխած ուրախութեան մեր Հայ տղեկներն որք են  
Ճրագալոյցի երեկոյնն երբ պատարագիչը կ'արտասանէ  
«Առեֆ կերեֆ» . հաւկիթներ հանելով լրենց ծոցերէն , եր-  
կու ձեռամբ ի վեր կը բռնեն եւ ի ցոյց կը հանեն , իսկ  
անհամբերներն արդէն կեղեւած լինելով , երբ կը լսեն  
պատարագիչի այդ բարբառն , լրենց բերանը կը նետեն  
հաւկիթը , վազվազելով անմիջապէս ի տուն , աւետիս  
տանելով առ ծնողս . «Չատիլն եկեր է մայրիկ . Քրիս-  
տոս յարեալ ի մեռելոց» : Չատիլ առաջտուն երբ տա-  
ներէյ քահանայն տնօրհնէքի կը գայ , կ'օրհնէ ոչ թէ  
միայն զինին , այլ հաւկիթն , որ կը պահուի մինչեւ  
ցվերջ տարւոյ : Կ'օրհնուի աղն , զոր կը լնուն վերստին  
իւր ամանին մէջ , կ'օրհնուի ցորէնն կամ ալիւրն , զոր  
կը լնուն ամբարին մէջ , կ'օրհնուի ջուրն որմէ յետ կա-  
թիլ մը խմելոյ կը լնուն յիւր կարանն , կ'օրհնուի այս  
ամէնն , որպէս զի այդ Հայ Քրիստոնէին տուն չին ու  
պայճառ մնայ , ի լիութեան մնայ :

## ՆՈՐ, ԿԱՆԱԶ, ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԷՔ

Նոր կամ կրկնագլխի կիւրակէ. — որովհետեւ Առաքեալք անսնելով թէ Հոգին սուրբ ճիշդ այն օրն, յորում Տէր Յիսուս յարութիւն առաւ ի մեռելոց, երկընքէն իջաւ եւ ղերկնք օժտեց այն աստուածային շնորհօք, որպէս կանխաւ խոստացած էր Փրկիչը, ուստի նոյն միաշարաթէն յետոյ, յաջորդ միւս միաշարաթի օրն ի յիշատակ եւ ի վառս Տեառն մերոյ փառաւոր յարութեան եւ դալստեան Հոգւոյն սրբոյ ի վերնատունն, փոխան հրէական շարաթի՝ անուանեցին սուրբ օր, այսինքն տօնեցին առաջին կիւրակէն. եւ որովհետեւ այս սուրբ օրն նոր օր մը եղաւ հաւատացելոյ եւ միանգամայն կրկին Զատիկ, այսինքն օր ուրախութեան եւ օր նորոգութեան ի նստութենէ մեղաց, ուստի Հայաստանեայց եկեղեցին ի Տօնանուցի կը նշանակէ սոյն օրը Նոր կամ Կրկնագլխի կիւրակէ,

Յոյնք այս կիւրակին Թումայի կիւրակէ կը կոչեն, զի կ'աւանդուի թէ այսօր Տէր Թումայի երեւելով կըշտամծեց նորա անհաւատոնթիւնը, եւ Ներսէս Շնորհալի եւս այսօր կը տաղերգէ զայս. «Սարսելով Թումայի շօշափէր զխոյոլած արգին եւ զքեւեռացն, եւ զոչելով վերածայնէր. Տէր եւ Աստուած դաւանելով զՅարուցեալդ, որով առաք զերանին, որք ոչ տեսալ՝ հաւատացաք»: Արդարեւ սրբալիտի մեծ երանութիւն մեզ, որ առանց մարմնոյ աչօք զՅիսուս տեսնելով հաւատալու՝ կը հաւատամք Նմա, հոգւոյ աչօք տեսութիւնը բաւական համարելով:

Աշխարհաւստուն կամ կանաչ կիւրակէ. — որովհետեւ այսօր Առաքեալք հիմնեցին առաջին եկեղեցին յերուսաղէմ ի Սիօն, ուստի ի յիշատակ հաստատութեան քրիստոնէական առաջին եկեղեցւոյն՝ այս կիւրակէն կը կոչուի Աշխարհամատրան կիւրակէ: Աշխարհամատուան է տեղի աղօթից բաղմաթիւ հաւատացելոյ: Ամենայն ազգաց Մայր եկեղեցիք Աշխարհամատուան կը կոչուին, ինչպէս որ մեր Աշխարհամատուան է մեր Էջմիածնի սոճարը, Մատուան Յունական բառ է եւ կը նշանակէ մարտիրոսանոյ, զի հնումն սոճարք կը կանգնէին անդ, ուր մարտիրոսաց նշարք ամփոփուած էին, եւ այդ սոճարք կը կոչուէին յանուն անդ թաղուող մարտիրոսաց, որք եւ էին միանգամայն Ուխտատեղի, ուր ժողովուրդն մանաւանդ սրբոյն նահատակութեան տարեդարձի օրը խուսնեամբ կը դիմէր: Առաջին եկեղեցին անդ յերուսաղէմ ի Սիօն հիմնեցաւ, ուր Մեծ Նահատակն արգէն իւր մարմինն ու արիւն բաշխած էր ի փրկութիւն աշխարհի. անդ առաջին եպիսկոպոսն Երուսաղէմի Յակոբ տեառնեղբայր ինչպէս կ'աւանդուի, այսօր առաջին անգամ սեղան կանգնեց եւ իրրեւ հանդիսապետ Առաքելոյ եւ տեսուչ հաւատացելոյն որ ի Հրէաստան, Պատարագի անաւոր խորհուրդը կատարեց, որոյ անուամբ ցայսօր կը յիշատակուի Խորհրդատեարն, զոր Քրիստոնեայ եկեղեցիք կը գործածեն, թէեւ բաւական ընդարձակուած, որպէս եւ մերն՝ ի ձեռն մեր երանաշնորհ նախնեաց:

Այս կիւրակէն ի Հայս եւ կանաչ կը կոչուի. վասն զի հեթանոսական այն սովորութիւնք եւ ասօնք, որք կրնային քրիստոնէական տիպ ու հանգամանք կրել, չէին կրնար խաղառ անհետիլ քրիստոնէութեան մէջ.

ինչպէս շատ աղգերու, նոյնպէս Հայոց մէջ խորարձատ սովորութեան կար գարնան արմտեայ դալարագեղ այն է կանաչ ճիւղեր ընծայ տանիլ առ Աստուածս երկրին, եւ բազմինները դարդարել կանաչագեղ ոստերով. ո՛վ չյիշեր թէ Գրիգոր լուսաւորիչ հրաւիրեցու Անահայ նուիրել կանաչ ոստ, եւ չհնազանդելուն համար բազմաչարչար նահատակեցաւ: Հայ եկեղեցին եւս գիտէր թէ ի հին օրէնս պատուէր տէրունի էր երկրի թարմ բերքերէն ընծայաբեր լինել առ Աստուած, ուստի այսօր յունին իւր հաւատացելոց կ'ընթեռնու Ս. Գրոց սոյն սողերը. «Պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակող, եւ հա՛ն նմա պտուղ ի քոյ արմտեաց: Գիտէր եւ թէ մարդն իբրեւ տունկ՝ մեղաց խորշակէն թառամնր թօշներ էր, արդ՝ ինչպէս ամէն տունկ ի սկզբան կանաչ եւ ապա կ'առնու կարմիր գոյն, մարդկային տունին եւս ծծելով այն ցօղն, զոր Գրխատս իւր խաչի վրայէն թափեց, եւ Քրիստոսի յարութեան լոյսէն նոր կեանք առնլով կանաչացաւ:

Լսենք Տաղարանը:

«Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ  
Այսօր ի նոր գերեզմանէն,  
Երփնագարդ հոգւոցն տունկի  
Կանաչացան կենդանութեամբ»:

Այս կիւրակիրն յաջորդ կիրակին Կարմիր կ'ըսուի, վասն զի մեր ժամերուն ներսն ու դուրսն կարմիր կը դարդարուին. ինչպէս ի հնումն հեթանոս Հայք իրենց բազմինները կը դարդարէին կարմրագոյն դալար ոստերով եւ կարմիր զգեստ հագնելով տօն ցնծութեան կը կատարէին, այսօր եւս քրիստոնեայ Հայք ի դաւառու

կարմիր զգեստ հագնելով կը գնան ի վանս կամ ի տունս Աստուծոյ, եւ կը հրճուին հոգեւոր խնդութեամբ, զի «Չատի՛կ Տեառն» է:

Լսենք այս օրուան տաղը:

«Այսօր նոր արեւ հարեալ ի նորահաւ արեգակնէ.  
Ի նորահաւ արեգակնէ:  
Այսօր նոր շուեան ծաղկեալ ի նորաշունկ բուրասանէ,  
Ի նորաշունկ բուրասանէ:  
Այսօր նոր վարդ վառեցաւ, լոյսն ի վերինն երուազեմ,  
Ի վերինն երուազեմ»:

\* \* \*

Ի Սվաղ Ապրիլ 17ին Մկան կ'ըրակէ է. ով չպահէ, վրէժխնդիր մկիկն իր հատու ախոսներով ծուէն ծուէն կ'ընէ բող: Եւ բամպակէ կերպաններ: Այս գիշեր կ'երեւին քնն մեզ մեկնումնալիներ, փերի:

Ապրիլ 23ին է Ծռատօնը, զոր յղի կիններն ու նոր հարսները կը պահեն: Ե՛թէ ոք չպահէ, դաւակը կ'ըլլայ կոյր, խեղ եւայլն: Նոյնը կ'ըլլան անոր տան ծնելի աւանանները: Սոյն օրը կը պատժուին, ոչոնք կտորոզ եւ կտորոզ գործիք մը ձեռք առնուն, ուստի կ'ըրակուրները կը պատրաստուին նախորդ օրէն:

Չատի՛կն ցՀամբարձում երեկոյները չեն աշխատիր. ով որ հակառակն ընէ՝ հակուր կ'ըլլայ, չիլ կամ կարճատես: Ա. Բէն Յիւնանցի հինգշաբթին՝ կիւրակի կը պահուի տվլլթի կիրակի ըսելով, որով չարը բարի կը դառնայ: Լուսնի ծննդեան յաջորդ ամէն չորեքշաբթի օրը՝ ժամ կ'երթան քահանայի՝ կարդալիքի համար որ օրն ըլլայ բարի:

Մայիս 7ին է Միւռնի կիւրակի, որ ինչոյքի թուիմանուկներու եւ լուսաղբիւրներու մօտ:

Նախիջեւանցիք Կանաչ կիւրակէին դաշտ ու մարգ կ'երթան զրօսանքի: Աղջիկներ կը քաղեն ծիթին ձմրան ի պէտս: Հոն կ'ուտեն Ականջապուր, որ մածնախառն մսի արգանակէ եւ ականջի ձեւով շինուած տեսակ մը իւզոտ պիօրեֆ է. ականջի մէկին մէջ կը դրուի մեխակի հատիկ, եւ որու որ պատահի այն ուտելու ատեն, բաղդաւոր է ան: Զատկուան մատաղին կ'ըսուի Ախաւ, արդեօք Ազափ, յունարէն բառ, որ առաքելական դարու մէջ աղքատաց բաշխելի կերակուրին կ'ըսուէր:

\* \* \*

Զատկէն մինչ յՀոգեգալուստ, ամէն կիրամտի գիշեր, երբ երկինք ամպոտ է, սա սրտաուռն եղերգն արծազանգ կը գտնէ ընտանեկան սրտերու մէջ, որոց մէկ սիրականն է նոգեհ, անտէր ու անտիրական, եւ գուցէ հոգեւորք:

«Ես սա գիտեմ դուրս ելայ,  
Թուխ անուռ ամպիկ մը կը ցողայ.  
Յօղա դու ամպիկ, ցողա՛,  
Յօղալուդ ասեմն է հիմա,  
Զորցե՛ր ինձորիս մորհը,  
Զրելուս ասեմն է հիմա»:



## Վ Ի Ճ Ա Կ<sup>(1)</sup>

Հստ Տօնացուցի «ՀԱՄԲԱՐՉՈՒՄՆ Քրիստոսի Աստուծոյ մերոյ», որ ժողովրդային բարբառով կ'ըսուի ՎիճԱԿ:

Աղջիկ ու մանչ լեռ ու ձոր երթալով, ծաղիկ քաղելով զիրար կը զարդարեն, եւ այդ ծաղիկներէն մին մանաւանդ Անթառամն ու Ապրիմ-մեռնիմը փետտելով եւ տերեւներն իրարու տալով կը մաղթեն.

«Քեօք բեզիբկէն եկեր է,  
Զեր կալու սեղն իջեր է.  
Ոսկի ցիցը զարկեր է,  
Հրեղէն ձի կապեր է,  
Քո բաղդ քո դուռ բերեր է»:

—«Աս օրս Համբարձում է,  
Աղջիկներուն հարցում է.  
Ամէն աղջիկ պագ մի սայ,  
Մեկե՛ր աշխարհի կործում է»:

—«Ուսկի՞ կուգաս. — էլի վանայ,  
Տարեդ եմ եղեր սիվանայ.

—Ես սիվանայ, դուն սիվանայ  
Ասուած մեզի դուռ մի բանայ»:

(1) Կայ ՎիճԱԿ յիշատակութիւն Անգիր դպրութեան Ա. հատորի մէջ, յերես ԵԷ:

—«Գարնան վրայ կ'երթամ, սիրսս ինկաւ կիւման,  
Դառնամ ետեսս հայիմ, բռնեք է սիւման.  
Մորնիկ մ'ըլէ, բուսեր սեվլի պոյ նման,  
Ան ըլլմ եարիսս պոյին եր նման»:

—«Վերի շուկան սափուկ հացիկ,  
Վարի շուկան պոզման բամբէկիկ.  
Քրիսոսս բերնովն է ըսեր,  
Էսի ֆու նակհիկն է գրուեր»:

—«Երկնուց ընցաւ սար մափի,  
Մի' սար հասին դմակն ոսկի.  
Ոսկերչին սարայ տուի,  
Թափեցի զանգ ու մասնի»:

—«Էլ նստի բարձին վրայ,  
Տաւերկու լուս կը ծարի,  
Ան ալ ֆու բաղդի վրայ»:

—«Կայներ է սիւնընըվեր,  
Կ'աղաչէ Ասուածանըվեր,  
Կ'ուզէ իր ծոցուն ընկեր»:

—«Բարձ բարձի վրայ,  
Հրամմէ նստի վրայ.  
Լուս կը վառուի սասներկու,  
Ըմին ֆու բաղդի վրայ»:

—«Վիճակ, վիճակ,  
Ոսկի կոճակ.  
Մամս բերեց եօրը կտրնակ,  
Եօրին ալ մասէ մուճակ»:

Այս գաւառաբարբառներուն մէջ, ոտանաւոր թէ

արձակ, կան երբեմն ազդեցիկ եւ գերընտիր տողեր,  
օրինակ.

—«Արեւ զարկեր կամուր բերդին,  
Քու սերն ընկեր մէջ իմ լերդին»:

Կամ

«Շօրօր մը' ֆեյէ, փուռ է,  
Խորոսկի պագն անուռ է.  
Ընչան որ ես դուրս ելայ,  
Լուսնակն անուռ կը ցոլայ»:

\* \* \*

Գարնան ի Վան մեր տօներուն մէջ գրեթէ ամենէն  
աւելի զուարթ հանդիսաւորութիւն մը ունի Վիճակը:  
Սիրական եւ նուիրական է այն՝ ոչ միայն քաղքենիին,  
այլ աւելի եւս գեղջուկին, մանաւանդ գրող-կարգա-  
ցողներու համար:

Ամէն երես կը ժպտի, ամէն սիրտ կը խայտայ, եւ  
մինչ պառաւն իր սպիտակ վարսերուն, ալեւորն ալ իր  
խողանին ծաղիկ կը կապէ, տանտիկիներ վարդի թեր-  
թեր դէս ու դէն կ'սփռեն, եւ կոյսեր տափ ի ձեռին  
շուշանով կը զարդարուին: Իսկ դաշտերու մէջ հօտաղն  
ոչ թէ միայն ինքն է ծաղկազարդուած, այլ իր գառ-  
նուկն ու ուլիկը, հորթն ու մաքին, լծկան եզն ու գո-  
մէշը՝ պճեղէն մինչ եղջիւրներն ճիւղի եւ ծաղկի փնջե-  
րով զարդարած է:

Շատեր՝ կէս գիշերին կ'երթան նետուի վաղուն  
ջրերու մէջ, վասն զի այն գիշեր դարխտի անմահու-  
թեան աղբիւրներէն կաթիլներ կը կաթկթեն վտակնե-

րու եւ գետակներու մէջ, ի բոյժ համայնատեսակ ցաւերու :

Ճատու պառաւներ գիշերը դուրս կ'ելնեն, լեռն ի վեր կ'ելնեն մաղթանք ընելով աներեւոյթ ոգիներու, որ առաջնորդեն իրենց՝ յաջողութեամբ գողնալու համար դրկիցներու իւղն ու կաթը եւայլն :

Օրորոցի տղեկէն մինչեւ ջոկանի կոթնած ծերուկն լուր օրուան իրենց շորերը կը փոխեն, կարմիր կանաչ կը հագնին, ինչ որ պահունի հալաւ կայ անտուկներու մէջ կը հանեն ի ցոյց արեւու : Ձոր, հովիտ, առուակ եւ աղբիւր, խաչ-քար եւ Թուխ-Մանուկ, գերեզմաններ լի են անցորդ ուխտաւորներով, որք աղօթող են, խնկող եւ խնդրող :

Խորարմատ է հաւատքն ամենուն սրտին մէջ : Ամուլն մէկ հին փոքրիկ որրան մը կը դնէ հոն ուր սուրբ է հողը, եւ իւր արգանդին համար շնորհ կը խնդրէ . պառաւ մը բորբորուած ճրագ մը կը վառէ, իւր հոգու ճամբան լուսաւոր ըլլալու համար : Ծաղկեայ պսակներ՝ ցանուցիր կան օրհնած խաչ-քարերու ու Թուխ-Մանուկներու վրայ՝ կոյսերէ եւ պատանիներէ համբուրուած եւ ձգուած, ի յուշ եւ ի յոյս ամուսնական պսակի : Եւ կաղնին հազարամեայ եւ միւս նուիրական ծառերն պճնուած են շորերու հազար ու հազար կտորիկներով որք կախուած են կանաչագեղ ճիւղերէ, որ պէսզի օր մը դեղ ու բոյժ ըլլան ցաւագարներու <sup>(1)</sup> : Ոչ մէկ ձեռն իր ժպրհի այդ ծառերէն ճղիկ մը կամ տերեւիկ մը խլել :

\* \* \*

(1) Օրինակի համար մէկը հիւանդ ունենայ, կ'երթայ քրչիկ մը կը բերէ այդ ծառերէն եւ հիւանդին ցաւած տեղը կը կապէ :

Չորեքշաբթի երկանքի ձայն կայ, վասնզի Համբարձման Սամիրցուն սունեն . (Սամիրը կերակուր մը է աղցանէ, ձաւարէ, կարագէ ու կաթէ բաղադրուած եւ ամէն տուն պէտք է եփէ, այս է Համբարձման Սամիրը) : Սունել՝ խոշոր աղալ : Աղլիկներէն մին պարիկ կը ձեւանայ հազնելով նոփզնոր հագուստ ու կապուստ, եւ միւսներն, որք տարիքոտ են միշտ անորմէ, ծաղիկներով զարդարուած անոր շուրջ կը պարեն . յետոյ բղիկ մը գիւղին մէջ շրջադայեցնելով՝ պուտ պուտ ջուր աղբիւրներէ, եւ Թուխ-Մանուկներու քովէն մէկ մէկ քար կը գողնան եւ բղիկի մէջ կը լեցնեն : Հօտաղ տղեկներ ծաղիկ ի գլուխ ծաղիկներ կը հաւաքեն <sup>(1)</sup> : Համբարձման առտուն նախրի մէջէն սեւ ու ճերմակ խայծերով խայտաբղէտ եղ մը կ'ընտրեն, ծաղիկներով կը զարդարեն իբրեւ Ապիս աստուածն Եգիպտոսի : Լեռնէն ի գիւղ կը բերեն «Համբարձման եզն անա» ըսելով : Հօտաղներն ունին մէկ բղուկ ու մէկ սապատ, հաւկիթ ու կարագ ընծայ առնելու համար տուներէն, ըսելով . «Շէն մնաս, չէն» : Այս ատեն ուրիշ թաղի կամ գիւղի թափոր մը կը հանդիպի, կագ ու կուլ, հաւկիթներ կը կոտորեն եւայլն : Ուր ուրեմն մինչեւ երեկոյ թափորը կը վերելայն : Ուր կը մնրկանայ եւ կ'ս'սի Տապկոցը : Առ զուարճութեան դաշտերու մէջ եփուած կերակուրին Տապկոց կ'ըսուի :

\* \* \*

(1) Կ'երեւի թէ այս զարնանային սիրուն հանդէս, որ ի հունմ կը կատարուէր ի պատիւ Անահտայ, շատ ազդած է Մովսէս խորենացոյ, որ կը գրէ . «Առաքինութեան լուսահրոշ վարդիւր եւ շուշանօր՝ տանասիրացն ոսկեվարսեակ վայելանան զլուխք ի փառս Քրիստոսի Աստուծոյ » :

Գարնան դռնակներն են բացուեր, աղջիկներն ձոր  
ու հովիտ, դաշտ ու սար կ'երթան ու կուգան ու կը  
ժողվտեն ցորնուկն ու կորկտուկն, փշուկն ու քուշմա-  
թը. կը ծրարեն ու տուն կը բերեն:

Վիճակն է եկեր, ծափ ու դափ զարնելով կոյսեր  
կոյս-ջուր չտեսած կուժ մը եօթն աղբիւրներու ջրով  
արդէն լի ըրած են, ուր՝ կուժին մէջ ամէն ոք բան մը  
ձգած է, ըայց զայն նշանակած ըլլալով, որպէսզի  
Վիճակի ատեն դիւրին ըլլայ գիտնալ ո՞րը որո՞ւ է:  
Կուժը զարդարած են եօթն տեսակ ծաղիկներով եւ  
կանաչ ճիւղերով, եւ կ'երթան լուսաղբիւր: Իսկ հե-  
ռուէն մանչեր խումբ խումբ սոցա կ'ուղեկցին: Ամե-  
նուն բերնէն կը լսուի սոյն հագներգը.

«Դրմպը՛ն, դրմպը՛ն, դը՛մպ, դրմպը՛ն.

Ես պըճըլիկ աղջիկ մ'եմ,

Եօթը աղբրկայ ջրիկ իմ.

Եօթը ծառի նդիկ իմ,

Եօթը ծաղկի բերքիկ իմ,

Ես աղջիկն իմ, վըճուկն իմ:

Դրմպը՛ն, դրմպը՛ն, դը՛մպ, դը՛մպ, դրմպը՛ն.

Էլե՛՛ֆ, էլե՛՛ֆ, աջխընք,

Արեւն երգի՛ մաղուեր է.

Օրն ամեն օր չըլմանիր,

Գարնան արեւ ցեթեր է.

Էս օր վնակ վնկառուկ,

Քրնձ արեւը ջուս էլե՛՛ֆ »:

Երբ ամենքը կը համին լուսաղբիւրին քով, կուժը  
հոն կը դրուի եւ սպիտակազգեստ քողարկաւոր աղջիկ

մը կ'սկսի Վիճակի կուժէն բան մը առնլով, զայն ի  
տես հանել եւ գոչել.

«Էս օր հինգօտաբքի, վաղը ուրբաք.

Դուռիս կղպեմ, պատերն երկաք.

Մարիամ նստե վինակ կուսայ,

Հարս աջխիկի պախք մը բանայ »:

Կուժն հետզհետէ կը պարպուի, եւ միայն զուտ  
ջուրը կը մնայ, եւ այդ կուժին մէջ լուսաղբիւրի ջրէն  
ալ ջուր յաւելլով գիւղ կը դառնան. դգալով կամ  
գաւաթով կուժի ջրէն ամենուն կուտան, իբր թէ ըլ-  
լայ այն ամէն տէրտի տէրման: Ահա եւ սոցա վերա-  
դարձի խօսքերը.

«Աս ի՛նչ կոճիկ մոճիկ է.

Էկեր իջեր մեր դուռը.

Շարեապիկ հագեր է,

Քթան լաչկիկ ձգեր է.

Բակն արեւով լեցեր է,

Մանուկ սրղան տետեր է,

Գացեր մօրկան ըսեր է,

Մօրկան խեղիկըն անցեր է,

Խոչ մը մասալ երեր է:

«Աղջիկն օղերով կ'ուզեմ,

Տղան փողերով կ'ուզեմ.

Դորդան տաւառով կ'ուզեմ,

Սնունկը մալերով կ'ուզեմ.

Տունը քամալով կ'ուզեմ,

Էգին օրթոսով կ'ուզեմ.

Քար գողնամ, խիժ գողնամ,  
Եօրն աղբիւրէ շուր գողնամ.  
Իրմպը՛ն, դրմպը՛ն, դը՛մպ, դրմպը՛ն » :

\* \* \*

Իսկ Ռուսահայերու մէջ Վիճակի այս սովորոյթն ալ կայ: Շատ կանուխէն եօթն աղջիկ անխօս, լուռ-մունչ կ'երթան եօթն աղբիւրէ կամ եօթն հորէ եօթն բուռ շուր բլուղի մը մէջ կը լնուն, եւ եօթն տեսակ ծառէ եօթն տերեւ փրցընելով եօթն տ'սակ ծաղիկի հետ կը խառնեն եւ դռնէ դուռ ժուռ գալով դրկիցներէ վիճականիչներ կոծակ, մասնի, հիւլուն, ուրիշ մանր մունր բաներ առնելով կը նետեն բլուղին մէջ, եւ զայն կը դնեն վարդենիի կամ ուրիշ ծաղկի թփի մը տակ:

Կէս օրէն յետոյ՝ շրջան կը կազմեն եւ բլուղը գիրկը կը դնեն փոքրիկ աղջիկի մը, որոյ գլխին կը ձգեն մի մեծ մեղար (շաղ) եւ կը ծածկեն: Վիճակի գործողութիւնը կ'սկսի երգելով. եւ վիճակահան աղջիկը հետզհետէ, ամէն մէկ երգի ընդհատման պահուն, բըղուղէն կը հանէ եւ վեր կը բռնէ վիճականիչ մը, եւ երգողներն իսկոյն գուշակութիւններ կ'ընեն անոր համար՝ որուն վիճականիչն է, որ կուրախանայ կամ կը տխրի ըստ բաղդի: Այս երգերն ալ շատ շատ հազիւ չորս տող են, եւ միշտ կը կրկնուին: Եւ յետոյ կ'սկսին ուտել: «Կաթնաւ»ն որ է կիններու եւ աղջիկներու այսօրեայ կերակուրն, այն է տեսակ մը սխալան: Զատկէն մինչեւ ցայսօր արգիլուած է կաթ կ'իւր կաթնոտ կենդանիներէ որ գիրուկ ըլլան, չնիհարնան: Իսկ «Տապկոց»ն

է էրիկ մարդերու ու տղեկներու այսօրեայ կերակուրը, որ է հակլթախառն խոտեղէն իւղի մէջ տապկուած այսինքն տեսակ մը ձուաղեղ, օւնիք:

Ուրիշ մէկ սովորոյթ եւս կայ: Առաւօտուն ժամուն մէջ կը հաւաքուին կոյսեր ու մանչեր, որոց մէն մին օրհնած ախտէէն ոլրած թղթիկ մը կ'առնու, որո՞մ մէջ գրուած է սուրբի մը կամ սրբունիի մը անունը, եթէ վիճակատէրն մանչ է կամ աղջիկ, եւ իրենց անունակիցն ըլլայ իրենց վիճակուած թղթին մէջի սուրբը, երանի իրենց. իսկ եթէ չըլլայ, պարտին այդ սուրբին կամ սրբունիին անունն յատուկ վանքն ու ժամը ուխտի երթալ, ուր ալ ըլլայ ան, եւ կամ անոր պատկերին առջեւ մոմ վառել եւ խնդիրք ընել:

Իսկ վանքերու մէջ Վիճակի այս սովորոյթն էր տարբեր: Ժամերգութենէ յետոյ վիճակ խնդրողները կը շարուն վառ մոմ ի ձեռին. նախ կ'երգուի «Համբարձաւ Տէրն մեր» շարա'յանը, եւ Մատաթիայի վիճակաւ առաքելական ընտրութեան գիրքը կը կարդացուի եւ յետոյ իսկ «Մետասան աշակերտքն», Աւետարանն ըստ Մատթէոսի: Վանահայրը կամ երիցագոյններէ մին գրակալէն առնելով Վիճակագիրքը, ուր ըստ այբուբենական ցանկի վիճակներ գրուած կան, Սաղմոսէն առնուած աղօթք մը, կը հարցնէ իւրաքանչիւր վիճակ խնդրողի թէ ո՞ր աստուածագիծ գիրը կ'ուզէ որ իր վիճակը ըլլայ:

—Այբը:

Վիճակահանն իսկոյն կը բանայ վիճակագիրքն ու Այբ գիրը վերնագիր ունեցող խօսքը, իբր վիճակ կ'ընթեռնու բարձրաձայն. «Ապրեցո՛ղ զիս Տէր, ի մարդոյ չարէ, յառնէ՛ անիրաւէ փրկեա զիս»: Եւ նոյն թուղթը վիճակագրէն փրցընելով կը յանձնէ վիճակ-

ընկալին, որ ուրախութեամբ կ'առնու, եւ համարելու կը պահպանէ: Այլ սակայն վիճակընկալն վիճակի այս աղօթքն՝ ա'լ այնուհետեւ պարտաւոր է ամէն գիշեր քնանալէ առաջ եւ ամէն առաւօտ արթննալէ յետոյ՝ արտասանել մինչեւ յաջորդ տարի վիճակի: Եւ այսպէս կը շարունակուի:

Բայց թէ վիճակ խնդրողներու թիւը այբուբէնական ցանկի գիրերէն աւելի ըլլայ, կը կրկնուի, միայն թէ ան՝ որուն կը վիճակուի այն գիրը, որ ուրիշի մը առաջին անգամ վիճակուած է, անոր վիճակակից, բաղդակից կը համարուի, իրարու աղբերգիւր կամ քուրգիւր կ'ըլլան: Գերընտի'ր սովորոյթ եւ յո'յժ բարոյալի, որ այժմ գրեթէ դադրած է բոլորովին:

Նաեւ ի Ռուսիա ու Պարսկաստան վիճակի տօնի կ'ըսուի մերիններէն «Ջան կիւլում, ջան» այն է վարդգէս, վարդահանդէս» ի կրճատը, որ է տեսակ մը կիւղքանայիւր. վարդեր կը հաւաքուին ծաղիկներու հետ եւ պլուզի մէջ կը ծրարուին, ուր կը խառնուին այս ու այն կլինէ յու կոյսէ ձգուած ճժիներ այսինքն մանեակ, մատնի, մատնոց, օղ, ասեղ եւայլն: Ապա վարդի կամ ծաղիկի թերթեր կը սրսկուին ջրով ու կը յանձնուի պլուզը դեռատի աղջիկի մը, որ կը հանէ իւրաքանչիւրին վիճականիչը, չորեքտողեայ երգէ մը յետոյ, որուն տէրն իսկոյն կը շնորհաւորուի իբր բաղդաւոր: Չարագուշակ վիճակ չկայ, զի երգերն աւելի ուրախական են եւ սիրազեղուն, եւ ոչ երբէք տխրական եւ տրտամառիթ:

«Վիճակ, վիճակ,  
Վիճակի չիչափ (ծաղիկ) .  
Վարդ մանուշակ,  
Ոսկի կոնակ»:

—«Կանանչ կուծը բոնեի,  
Կանանչ պաղչայ ջրեի .  
Բիբիլ (վազոս) ձի հեծցունեից,  
Շուս իմ եարիս հասցունեից»:

—«Ես ձագ էի, նըւվըլսայի,  
Ոսկի սիւնի կըկըսայի .  
Մարգարիտ քել շարեի,  
Ալեմից (աշխարհ) քագն եղնեի»:

—«Օսկի կքիչի բոնեի,  
Արծաթ մակաթ (գի) զարնեի,  
Արնոց սանեի,  
Բարնոց բերեի»:

—«Աղջի, կապե' քո ոսկին,  
Ականջ մի' մօրդ խօսից .  
Գլուխըս դիր դեմ գրլիսիդ,  
Նանկեք սուր հօրդ ցեղին»:

—«Բօսսան եմ ցանե համեմ,  
Խուրմա քուեք որ ծամեմ .  
Խուրմա առայ ու պահեմ,  
Կարօս եարիս ու սանեմ»:

— «Բօսան եմ ցանած բազուկ,  
Իմ եարն եր ֆեզմե նազուկ.  
Թե որ անոր չեք նանչուր,  
Թեւին ունի պիլազուկ»:

— «Ջրի եկար ու գացիր,  
Սիրուն երեսդ չ'բացիր.  
Սեւ աչքերով ու վառ բռով  
Ինձ երեցիր, վառեցիր»:

— «Ծառ մը ունիմ ծիրանի,  
Քամին սերել կը սանի.  
Տերեւն ինձմէն արի սար,  
Իմ եարոջրս մասանի»:

— «Սար ու ձոր ամպել է,  
Շեկ եարը ձին քամֆել է.  
Հեծի, ջրիք խաղցել է,  
Անձրեւ եկե բացուել է»:

— «Աղջի, անունդ Շուեան,  
Արի երբանք սուրբ Նեան.  
Թե որ ինձիկ խօսք կը սաս,  
Մասնիկըս սամ ֆեզ նեան»:

— «Գերի եղայ աչքերուդ,  
Կամարակապ ընֆերուդ.  
Էսեմք անգուր սիրս ունիս,  
Որ չի նանչեր ընկերիդ»:

— «Վարդ եմ ֆաղի մաղերով,  
Վեր եմ դրել շաղերով,  
Հրես (անա) էլաւ իմ եարը,  
Այ ձին սակըն խաղալով»:

— «Դուն ելել ես կ'երբաս բեր (կարմասուն),  
Ոչ բերն եղնի, ոչ բերասեր.  
Խեր չսեանի ֆո խերն ու մեր,  
Ինձի շաներ այս դարսին սեր»:

— «Աղջի, զնա կալը սես,  
Պաղ աղբբրին սալը սես.  
Պաղ աղբբրէն ջուր խրմե,  
Արի արսիս հալը սես»:

— «Ջաղցի դոներ սաւած են,  
Ունֆեր դալմով ֆաւած են.  
Ղալամն ի՞նչ է, բուղբն ի՞նչ է,  
Լուսնի լուսով նաւխած է»:

\* \* \*

Երբ նուիր հաւաքել սկսին, «Գո՛վք» կ'ըսեն յա-  
ճախ, յանուանէ կանչելով նուիրատուն:

«Կանչեք կանչեք Արսէին ա,  
Արսէի աչ նեխուն ձին ա.  
Արսէն ուր (իւր) ձին քամֆեր ա,  
Քեր մէյսան ընցեր ա.  
Անձրեւ եկեր, քոջեր ա,  
Արեւ զարկեր չարցեր ա.  
Խընզ (ֆընզ) ֆաՅուր վարդ բացուեր ա:

Արսէն նսէ տշալին ա,  
 Խեղն ու միսն ա փեւակին:  
 Արսէն նսէ գերանին ա,  
 Ոսկի դաւալ (սրինգ) ա բերանին.  
 Խմեր ա նուան գինին ա,  
 Հոս բաներ մանիւսակին ա:  
 Արսէն ձին արօսն եր ա,  
 Քուր ուր աղբօր կարօս եր  
 Ահ, ահ, ահ»:

\* \* \*

Վիճակի ուրիշ երգ, ի Պրիթլիւ:

«Այ իմ սաբերու սալվար, ձոբերու սուրբ Աս-  
 տուածածին:  
 Խարսնիկ, խառնէ խա՛ն վիճակ ի բարին»:

—«Կանանչ կանանչ կանչեցին,  
 Կանանչ արսեր վարեցին.  
 Պեօս պեօզ (նեւմակ) ձիանք խեծուցին,  
 Քեզ քու սրտի մուրադին խասուցին»:

—«Ծառ մի կեր Հինսայ քաղաք,  
 ձուղճճ սրէք քաղէք քաղաք.  
 Ամեն ճիւղին ջրխսակ ճրազ»:

—«Նասեր ես բակ՝ վիճակ կ'ենես,  
 Մեկ Աստուծոյ տիկնի կ'ենես,  
 Օսկի օրորոց կ'օրորես...»:



## Վ Ա Ր Դ Ա Վ Ա Ռ

Չկայ աշխարհիս մէջ տօն մը, որ հնագոյն ըլլայ  
 Վարդավառէն: Չորս հինգ հազար տարուան տօն է այս,  
 զի հաստատուած է Նոյ նահապետէն. բոլոր Հայերն  
 ի վաղուց անտի կը տօնեն Վարդավառը: Ա՛նչն ատեն  
 եւ ամեն տեղ Հայերը գոյնզգոյն ծաղիկներով, կարմիր  
 վարդերով վարդապսակ զարդարուեցան եւ զարդարե-  
 ցին նաեւ իրենց բազինները կամ տաճարները, անոր  
 համար այս տօն Վ.Ա.Ր.Դ.Ա.Վ.Ա.Ռ կոչուեցաւ: Հայերն իրա-  
 բու վրայ ջուր սրսիկցին կամ գետերու եւ ձորերու մէջ  
 լողացին, աղանչներ թռուցին ի յիշատակ Նոյն եւ ջըր-  
 հեղեղին: Մատաղներով ցնծացան յանուն Վարդավառ-  
 ուի: Այն օրէն ի վեր, ջրհեղեղէն յետոյ, երբ Աստուած  
 օրհնեց մարդկութիւնը եւ իւր ծիրանի գօտին կապեց,  
 այն օրէն ի վեր, երբ Նոյ բազկատարած ազօթեց եւ  
 Աստուծա՛յ օրհնութիւն խնդրեց համօրէն մարդկութեան  
 համար, այն օրէն ի վեր տօնուեցաւ Վարդավառը: Ո՛ր  
 լուսաղբիւրներ ու կաթնաղբիւրներ, ո՛վ աղանակիւ  
 վտակներ, ձեր վճիռ կաթիլներ, որք վէտ ի վէտ կը  
 ցոլան, չե՛ն միթէ վկայ թէ Վարդավառն ո՛րքան կա-  
 թողին եւ հաւատքով տօնուեցաւ միշտ:

Ի հետեւն այս աշխարհախումբ տօնի օրն էր Նաւա-  
 սարդի առաջին օրը, «Ամանորը, տարուոյն առաջին օրը»:  
 Վարդավառի հինաւուրց տօնն՝ ա՛լ աւելի փառա-  
 ւորապէս սկսաւ կատարուիլ, երբ զայն սուրբ Գրիգոր  
 Լուսաւորիչ նուիրագործեց կեսարիայէն սուրբ Կարապե-

տի մարմինն ի Մուշ փոխադրած ատեն, եւ այնուհետեւ եկեղեցական քնարն ալ սխաւ գովաբանել այն վարդն, որոյ կոկոնէն դուրս ծլեցաւ ու ծաղկեցաւ աշխարհի փրկութեան Արեւն ու Լոյս:

\* \* \*

Վարդավառի օրերուն մէջ տեղ տեղ անցորդ մը միւս անցորդը կը հրէ դէպ ի լիճն կամ առուն որ տղկի ոտնէն ցգլուխ: Տղկուողն նոյնը կ'ընէ ուրիշի մը եւ այսպէս կը շարունակուի այս տարօրինակ մկրտութիւնը, աղաչակներով ու ծիծաղներով ի թունդ հանելով լեռ ու ձոր: Եթէ դեռ կամ լիճ չկայ, աղբիւրներէ ցնցըղիկ (ֆիսկիյե) ըսուած խաղաղիկով ջուր կ'առնուն, եւ հեռուէն ջուր կը ցայտեցնեն ու կը թրջեն անցորդները: Ծատերը թէեւ չեն ուզեր չտղկուելու համար իրենց տուներէն դուրս ելլել, այլ մանրիկներու անհանդարտութենէն աւելի եւս կը նեղուին, որք տիկերով եւ բարչերով ջուր կը թափին այսպիսիներու վրայ գոչելով. «Եյէ՛ք, ս՛վ մեռնի, ս՛վ սաղ մնայ ի գալ տարու Վարդէ՛վըրին»: Թաղէ թաղ կամ գիւղէ գիւղ ձիարշաւներու պատարա կ'ըսուի, զըզղիկներով — հողաման — իրարու կ'ընդհարին, կը կռուին, կը ջանան գիրար ջուրին մէջ ձգել եւ մխրձել: Վա՛յ, որ յաղթուի, ջուրը ձգուի եւ մխրձուի, ամօթահար կը քաշուի եւ ալ խմբին մէջ մանելէ արգիլուած կը մնայ:

Այսօր երիտասարդներ կ'ըմբռնամարտին եւ փայտխաղ եւ ջրիխոտ խաղաղով կը մրցին վայելելով հանդիսականներուն ծախահարութիւնները: Յաղթականները հանդիսապետէն վարդապատկ մրցանակ կ'առնուն, զոր կը բոլորեն իրենց արախչիներուն շուրջը: Իսկ հարսներու

եւ կոյսերու պարերու տեսարանն է հիանալի: Հապա գոմէշներու իրարու հետ ոգերել տալու խաղը, ո՛րքան անեղ եւ ո՛րքան սրտատրոյի զգայուն սրտերու:

Տարեւորներն օր առաջ պնակ ի ձեռին մատաղցուի համար ժողովք, հանգանակութիւն կ'ընեն, որպէս զի մատաղ ընելով<sup>(1)</sup> երաշտութեան, մարախի, ժանտախտի եւ ուրիշ արկածներու չենթարկուին: Նաեւ դաշտերէ այլեւայլ հունձերու որաներ ժամ կը բերեն եւ կը դնեն սեղանին վրայ Տէրտէրին հետ սա աղօթքն ընելով. «Տէ՛ր պահէ մեզ Վարդավառի բուքէն ու կարկուտէն, Տէրնտափ տաք ու շոգէն»:

Արգիլուած է Վարդավառէ առաջ ինձոր ուտելը, ինչպէս խաղող ուտելն Աստուածածնէ առաջ: Տեղ տեղ դեռ կայ զատկական հաւկիթին պէս իրարու ինձոր տալու սովորութիւնը. դալար ձիւղի մը վրայ փաթթած վարդ կամ անթառամ, գիներբուկ, շուշան, նունուֆար եւ այլ ծաղիկներ եւ ինձորներ ժամու սեղանին վրայ բերելն ու շարելն է պարտք անհրաժեշտ:

Վարդավառի շաքաթական պահքն զատ՝ անոր նախորդ շաքաթին ալ կը պահեն շատեր, որուն կ'ըսեն «Աթուք»: Տղեկներ միշտ կը յորդորուին որ այս պահքը պահեն, որպէս զի սուրբ կարապետէն չնորձք եւ խմստութիւն առնուն: Վերափոխումն ու Խաչվերաց ալ ունին Աթուքի պահքը:

Նոր հարսները Վարդավառին երկրորդ «Դարձ» կ'երթան 15 օրուան համար, եւ կը մնան իրենց հօրենական տան մէջ<sup>(2)</sup>: Երբեմն առածներու մէջ եւս կը յի-

(1) Մատոցոյ եզի կ'ըսուի «Վարդեանի եզ»: Տե՛ս եւ Մատ.սր.  
(2) «Ա. դարձը» Զատկէն մինչեւ Առաջին Փսակն է:

չուի Վարդավառը. անէծքի դէմ կ'ըսեն. «Աստուած որ կռնկուն ձէն լսէր, Վարդավառին ձիւն կը դնէր»: Ուրիշն մը գթութիւնը գրգռելու համար հեգնօրէն կ'ըսեն. «Ին՝ քո Վարդավառի շող օրեր»:

\*  
\*  
\*

Կ'արժէ աստանօր յիշատակել սա աւանդութիւնը թէ երբ Լուսաւորիչ կործանեց մեհանները եւ դեւերը հալածելով թխմեց այրի մը մէջ զանոնք բոցակէզ այրելու համար, դեւերէն մին երբ հնոցէն փախչելու ճիգն ըրաւ, իր սաքը կառչեցաւ Լուսաւորչի կոր ու կեռ գաւազանին, եւ երբ դուրս պրծաւ, կազացաւ եւ սապէս աղաչեց.

«Ձեռ արեւուն ես ըլլիմ դուրպան,  
Խնդրեմ զիս մի նետի մուք զրնհան.  
Ես կ'եղնիմ քե ծառայ յաւիտեան,  
Կ'եղնիմ զեռ սուրբ վանքերուն փոռիհան,  
Մոխիրներ սանեմ, քափեմ Բրե-Պարման(1)»:

Հաւանեցաւ Լուսաւորիչ եւ այն օրէն ի վեր մինչեւ այսօր այդ դեւն է մոխրահան, անունն ալ Կուտրաթ է: Մայրվանքի անտեսուհին ամէն օր գունտ մը խմոր կը շաղուէ եւ թոնիրի ախանին մէջ կը դնէ, այդ խմորն է սնունդ Կուտրաթի: Ամէն Վարդավառի օր մեր այս Կուտրաթը կը յիշեն մեր աշուղներ իրր վէպ հետաքրքրական:

\*  
\*  
\*

(1) Այժմ Ղզալի կ'ըսուի, որ Տիգրիսի մէկ ձիւղն է:

Ըստ ուրիշ մէկ աւանդութեան այս կաղ դեւ սուրբ Կարապետի վանքին մոխիրները երկու գիշերն անգամ կը շաղկէ գետնի տակով կը տանի երկու աւուր ճանապարհ գէպի Տիարպէքիր Բրէ Պաթման գիւղին մօտ կը թափէ, որմէ մեծ բլուր մը ձեւացեր է: Ահա աշուղներուն այս մասին շինած երգը.

«Լուսաւորիչը ժողվեց դիւան,  
Լըցեց զրնհան.  
Կաղ դեւն եկաւ սասց. «Յաման,  
Ձիս մի՛ դնե՛ր զրնհան.  
Ես կ'եղնիմ սուրբ Կարապետ փոռեհան,  
Տանիմ քափեմ Բրե-Պարման,  
Մինչ օր Բրիսնու գայ դասասան»:

\*  
\*  
\*

Սուրբ Կարապետի ձեղ ծամոնը (ծութ) եւ գաղպէն Վարդավառեան ուխտաւորներէ ընծայ կը տարուին ամենուրէք իբր դեղ եւ բժիշկ ցաւերու:

Իսկ սուրբ Կարապետ, որ տիրեց հայ բազիններուն եւ մեհաններուն, թոյլ տուաւ որ Հայք իւր գերեզմանը զան ու համբուրեն ոչ թէ իւր տարեկան տօներուն, այլ Վարդավառին. Վարդավառն է միթէ սուրբ Կարապետ. — Ոչ: Հապա է՞ր սուրբ Կարապետ առանց բարկանալու հանապազ իւր ուխտաւորին շնորհատուր է: Վասն զի սուրբ Կարապետ գիտէ թէ պէտք է որ ժողովրդի մը սրտէն ջնջուին այն հետքեր, որք հնութեան տիպ ունին եւ նուիրական յիշատակներու նշաններ են:

Ո՞վ են սոքա, որ երամովին կը խայտան. ո՞վ են

սոքա որք սուրբ Կարապետին եւ Վարդավառին այն-  
քան փայլ, այնքան վեհութիւն կը սփռեն. — Հայ ա-  
շուղներն են, որք իրենց սագերը սուրբ Կարապետի վը-  
րայէն առնլով՝ չնորձ են առեր, աշուղի չնորձ են ա-  
ռեր: Սոքա գիւղէ ի գիւղ, հիւղէ ի հիւղ, քաղաքէ ի  
քաղաք կը մտնեն, սրտեր թունդ կը հանեն, մերթ  
ցնծութիւն եւ տխրութիւն կ'ազդեն եւ Վարդավառն  
ու սուրբ Կարապետը:

\*  
\* \* \*

«Իսկ Բղիի արեւմտեան կողմը, Տերսիմի սահմանա-  
գըլլին վրայ, վեղարածեւ սրածայր երկու գագաթնե-  
րով վեր բարձրացած է Սուրբ Լոյսը. իրմէ աւելի մեծ  
լեռ չկայ Բղիի մէջ:

Հայուն ու Բիւրաին ամենէն մեծ երգումը Սուրբ  
Լոյսն է որոյ սուր գագաթին վրայ կ'երգնուն միշտ:  
Եւ հաւատք կայ թէ այդ սարին վրայ ծնող աղեկը  
չնորձալի կ'ըլլայ, զոր կ'անուանեն Վարդերես:

Շաբաթ օրը կ'սկսին ուխտագնացութեան պատ-  
րաստութիւններ տեսնել: Թոնիրը կը վառեն, ջուր կը  
տաքցնեն, բոլոր տնեցիք կը լուացուին ու կը մաք-  
րուին: Տանտիկինը կ'եփէ լաւաչ հաց, գաթա ու խոր-  
տիկ: Իրենց բոլոր փոխնորդ լաթերն ու զարդերը դուրս  
կը հանեն. ով որ չունի՝ ունեցողէ մը փոխ կ'առնէ: Ե-  
թէ երբէք մէկը իրեն տանը անդամներուն եւ կամ իւր  
մէկ դրացիին հետ գժտուած է, անպատճառ պէտք է  
հաշտուի, եթէ ոչ իւր ուխտը ընդունելի չ'ըլլար: Կի-  
րակի առտուն շատ կանուխ, դեռ բարի լոյսը չփըր-  
թած, ճամբայ կ'ելլեն ուխտաւորները, մեծ մասամբ

հետիոսն, շատ մը կիներ ու աղջիկներ բուլիկ կը քա-  
լեն, մանաւանդ անոնք որ խոտացած են անպատճառ  
Վարդավառին Սուրբ Լոյսի ոտքը երթալ. անոնք քա-  
րերու, մացառներու եւ փուշերու մէջէն կը քալեն,  
չատերու ոտքերէն արիւն կը վազէ, սակայն բնաւ հո-  
գերնին չէ, որովհետեւ կատարելապէս համոզուած են  
թէ իրենց ուխտը ընդունելի պիտի ըլլայ:

Դեռ արեգակը լեռներուն գլուխը չցաթած, ուխ-  
տաւորներուն մէկ ծայրը կը հասնի Սուրբ Լոյսին ստո-  
րոտը, հոն պաղ ջուրին առջեւ կ'ըջնեն նախաճաշ մը  
ընելու եւ հանգստանալու: Ով որ ամէնէն առաջ ու-  
կանուխ հասած է աղբիւրը, անիկա իրաւունք ունի բո-  
լոր ուխտաւորներուն վրայ ջուր սրսկելու: Աղբիւրին  
առջեւ կը տարածուի ընդարձակ կանանչ ճախին մը որոյ  
մէջտեղը քանի մը ուռենիի ծառեր կան, որոնց շուքը  
նստած կը զովանան ճամբորդները: Այդ տեղէն մինչեւ  
լերան գլուխը ժամ մը կը տեւէ քալելով: Վարէն դէպ  
ի վեր նայած ատենդ, ամբողջ լեռը լերի աղաւաթ  
ի վեր նայած ատենդ, ամբողջ լեռը լերի աղաւաթ  
քարէ զանդուած մըն է կարծես, ոչ անտառ եւ ոչ պու-  
րակներ կան. տեղ տեղ կը հանդիպիս միայն քանի մը  
խոշոր գիւնի (1) ծառերու, այնքան հաստ որ երկու մար-  
դու գիրկ չեն պարտիւր. ոչ ոք չիշխեր անոնցմէ ճիւղ  
մը կտրել, զի նուիրական են:

Երբ ուխտաւորները Սուրբ Լոյսի կատարը հասնին,  
հայ ու քիւրտ բոլորն ալ կը գծիին (կը ծռին) գետին,  
մէկմէկ ափ հող կ'առնեն, երեսնին ու աչքերնին կը  
քսեն, քարերը կը համբուրեն: Լեռը այնչափ բարձր է

(1) Տեսակ մը անպտուղ ծառ, որուն տերեւները ամառ ձմեռ չեն  
թափիր:

որ գագաթին վրայէն նայողը ամբողջ Բլին իբր 360 գիւղերովը պատկի մը պէս աչքին առջեւ կ'ուենեայ. մինչեւ անգամ Բալուէ կրնայ տեսնել, եթէ հետը դիտակ ունենայ: Արեգի կողմին ձիւնը շուտ կը հալի, իսկ ծմակ կողմինը մինչեւ վերջը կը մնայ. լեռան վրայ բաւական դուրան (տափարակ) տեղ կայ. սակայն խիստ քարուտ է, տեղ տեղ խոշոր խոշոր քարայրներ կան, որոնց մէջ հարիւրաւոր մարդիկ կրնան ապաստանիլ: Այդ օրը որոշուած քարայրին մէջ Տէրտէրը պաշտօն պատարագ կը մատուցանէ. խաչ քարերով սեղան եւ որմապատ խորան շինուած պատրաստուած են: Պատարագէն առաջ Տէրտէրը մատաղցուներուն ալը կ'օրհնէ, քիչ մը կը կերցնեն մատաղցուին, զոր երեք անգամ քարայրին եւ խորանին ետեւ դարձնելէ ետքը կը մորթեն:

Շատ մը ժողովրդական երգեր կ'երգուին այդ օրը, որոնցմէ իբր նմոյշ՝ ահա մին.

«Ծառան քակը մնացի,  
 Փեշիմալըս լուացի.  
 Խապար երեք իմ մօրկան,  
 Ես հոս դերիպ մնացի:  
 Հիւանդ եմ, հալուկ չունիմ,  
 Ճանիլ եմ, եարուկ չունիմ.  
 Եարքս դրած խեճեք,  
 Տեսնելու հարուկ չունիմ:  
 Տարին քանցերկու ամիս,  
 Խնձորը գօշիս հոտաւ.  
 Նէ խնձորին տերն էկաւ,  
 Նէ եարիս խապարն էկաւ »:

\* \* \*

### ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ



Հայերն ըստ կարգադրութեան Ներսէս Շնորհալի կաթողիկոսի, ինն օր անընդհատ կը կատարեն Սուրբ Աստուածածնի յերկինս վերափոխուելուն տօնը: Թէ ինչո՞ւ ինն օր. — վասն զի հրեշտակներու ինն դասակարգերն ուրոյն ուրոյն մէկ մէկ օր վայելեցին Տիրամօր փառայեղ տեսիլն երկնքի մէջ: Այս տօն ուրիշ քրիստոնեայ եկեղեցիներ ձիշդ Օգոստոս 15ին կը կատարեն անփոփոխ: Հայերն նոյն շաբթուան կիրակի օրը կը կատարեն (1): Որքան եւ դարեր հռովեցան եւ տարիներ բոլորեցան, այնքան Ներբողներ ու Տաղեր եւ Գանձեր ամէն ատեն եւ ամէն տեղ իրարու յաջորդեցին հեղեղաբար ի պատիւ Աստուածածնի:

Արդարեւ Հայ քրիստոնեայներու մէջ չէ՛ եղած սիրտ մը որ բարսխած չլինի ի լուր անուան Սուրբ Աստուածածնի, եւ չէ՛ եղած բերան մը որ օրհներգ մը, փառաբանական մրմունջ մը հնչած չլինի առ Մայրն ո-

(1) Զարմանալի զուգորդութեամբ, Աստուածածնի մահը պատահեցաւ այս ամսոյ այս օրերուն մէջ, երբ Հայերն իրենց ոսկիածին, ոսկիամայր Անահիտը, մայրն զգաստութեան, սրբութեան եւ շնորհաց մեծահանդէս կը տօնէին, այն է Նուասարդի առաջին օրը, Ահաւոր եւ Տարեմուտ, այժմ Օգոստոս 7—Տինտ Բաղդ ՇՈՂԱԿԱԹ, որ կը յիշուի Աստուածածնի նախորդ օրը, Նաւակոսիի, շաբաթ, զուցէ էր մակդիր Անահիտի, որ փոխանցեցաւ ի փառս Տիրամօր, և «Տօն Շողակաթի սրբոյ ԷՊՄԻՍԻՆ» ըստ տեսեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ եղած է այժմ:

ղորմութեան: Կարելի է թուել այն ուխտատեղիներն որք ցայսօր իսկ հրաշափառապէս կանգուն կան ու կը մնան, ուր ի գետին կը խոնարհին փարփառ ճակատներ բարեպաշտ ու հաւատաւոր ուխտաւորներու, սեւեռելով իրենց աչերն առ շնորհագեղ եւ հրաշագործ պատկեր ամենօրհնեալ Կուսին,

Շարականի ո՞ր մէկ տողերը, մարգարտափայլ տողերն աստանօր կարելի է յիշատակել, որով ժողովուրդն իւր սրտակաթ ուղերձը կը մատուցանէ իւր սրտի ու երկնքէ այս գեղանշոյլ Մարգարտին:

Ո՞չ ապաքէն նոյն իսկ վերջին ժամանակներուս մէջ կը վխտան այլ եւ այլ Չօներ եւ Գեղօններ, որք արտասանուած ու հնչուած են զանազան բերաններէ. կարելի չէ չյիշել մեր Աշուղներն եւ նոյն իսկ մեր մամիկներն, որք ամէն օր Տիրամայրը յիշելով ի թունդ կը հանեն մեր սրտեր:

«Իմ Տերն եկաւ անպախաղաց,  
Աշխարհ սարսեց չորեքդիմաց.  
Գաբրիէլեան փողը ձայնեց,  
Մեղաւորի հոգին դողաց:  
Դրախտեանական ծառ ծաղկեցաւ,  
Անմահութեան հոտ բուրաւ.  
Մարիամ չոփեր՝ աղօթք կ'անէ,  
Որ Տերն իր Հայ քրիստոնէին  
Մեղքը բողնէ, արժան անէ  
Արեւուքեան բաց դունակին »:

Այլ փառքը, յաւիտենական փառքը վերապահուած էր այն Նարեկեան Պապուլին, որ երբ իր լուսակաթ ա-

չերն, յարթութեան թէ յերազի, ի վեր անդը սեւեռեց, ամպերէն վեր պիչ ի Լուսապսակն աշխարհի, երբ երկնքի ու երկրի այս Բամբիչն ու Դշխոյն տեսաւ, տեսաւ ու զուարթացաւ. խանդավառեցաւ եւ տաղերու վսեմագոյնը երգելով՝ անմահացաւ, որոյ քանի մը տողերն անաւասիկ, ցոյց տալու համար մեր հին լեզուի վսեմութիւնն անհունապէս, եւ թէ մեր Պապուլին սիրոյ թռիչն անհունական:

« Աչք ծով ի ծով ծիծաղախիս  
Ծաւալանայր առաւօտուն.

Երկու փայլակնաձեւ արեգական նման  
Շողն ի ժմին իջեալ յառաւօտ լոյս:

Յայտին նունենի սարդիասունկ  
Գեղաւթակ ծայրից ծաղկանց,  
Որոյ սիւնն ի արտին նիւսխայօրէն  
Կարկաշայր սաբբերունի սեր...:

Բերանն երկքերթի վարդն ի օրբանցն կաբեր,  
Ծոցըն լուսափայլ կարմիր վարդով լցեալ.  
Ծղիքն ծիրանի մանուշակի հոյլք,  
Գօտին արծաթափայլ ոսկէքսուն,

Կամարակապ յականց, յականց շափիւղայ:  
Չեռացն եղիւոյ կամարակապ կապեր  
Ասինաղ, պաշինաղ, սողի, խողի երգով.  
Հիւսեր զելեւոյն ընդ միմեանս,  
Հանդարտիկ խաղայր, բեկնեթեկին նեմեր,  
Լեզուին շարժողին քողերեգանայր տալիւն:

Ի ծամին խեղեփին հագրէ գ'ի նոյն սեր  
Հոգիագգետեսեալ՝ գեղն ի գինւոյն գոյն.  
Վարսիցն երամից զարդ՝ երամից զարդ  
Ոլորն են առեալ եռանիւսեակն բոլորեալ այսիւք»:

Այս է նկարագիր շնորհագեղ Կուսին, զոր գրեց հոգևով, զոր օծեց սրտագեղ արցունքով Պլպուլն Նարեկայ եւ աւանդեց Կուսին հարազատ զաւակ հայերուս մինչեւ ցայսօր:

Այլ կիներուն փառքն է Աստուածածինը, եւ ոչ մէկ տօն կիներուն համար այնքան նշանակութիւն ունի որքան Աստուածածինը: Իրենց ամէն ուխտ այս տօնին պահուած է գրեթէ, ինչպէս եւ ամէն ուրախութիւն: Այս Աստուածածնի տաղաւարական օրերուն մէջ կը շնորհաւորուին բոլոր այն կիներ, որ յատուկ տօնական օր չունին: Օրինակի համար կը շնորհաւորուին

Ա. օր Մարիամ, Բ. օր Թագուկ, Գ. օր Սրբուկ, Դ. օր Պայծառ, Ե. օր Երանիկ. Զ. օր Համասիկ (Համասիլու), Է. օր Անթառամ, Ը. օր Տիրուկ (Տիրուհի), Թ. օր Մարգարիտ:

Իսկ խաղողորհնեֆն ու ճոսփաջն այսպէս կը կատարուին: Շողակաթի ցերեկը կը հաւաքուին եւ տէրտէրն մկրատ յաջ ձեռնի եւ խաչ ի ձախումն կ'երեւի շուրջառագգեատ: Տիրացուներն վառ մամեղէններով եւ կանթեղներով կ'եղանակեն. «Արեւելք գերարփին եւ օթարան լուսածին» շարականը եւ կ'երթան դրախտը, եթէ վանք ունին (1), իսկ եթէ չունին, գիւղին կամ քաղաքին երեսփոխին այգին կ'երթան, ուր անդաստանի արարողութիւնը կը կատարուի ճշգօրէն, ապա դպրապետն ուժգին կը ձայնէ. «Օնհնեա Տէր»: Ժամարարը կը ձայնէ. «Օրհնեսցի ողկոյց... այգւոյս այս նշանաւ սուրբ Խաչիւս եւ սուրբ Աւետարանաւս եւ աւուրս շնորհիւ...», յետոյ ժամարարը կ'առնու մկրատ մը կամ

(1) Վանքերու պարտէզները դրօստ կը կոչուին:

դանակ, եւ ողկոյց մը կտրելով ի ցոյց ժողովրդեան կը բարեմաղթէ. «Երկնքի լոյս Թուխ-մանուկներէն ցողուած են այս մեր այգիներուն ողկոյզները. Աստուած օրհնեց մեր այգիները Նոյի տապանով, Մովսէսի տապանակով, Քրիստոսի սուրբ խաչով, Աստուածածնի արցունքով, Լուսաւորչի լոյս հաւատքով:

«Հաց ու գինի  
Տեր կենդանի» (1)

Թէ մեր այգիներն ա'լ պիտի ըլլան միշտ դալար եւ ողկոյզներն ըլլան միշտ անսպառ»,

Այս արարողութենէն յետոյ ամէն մարդ իր այգին ա'լ ազատ է քաղելու, այլ ազատ չէ խաղողն ուտելու, մինչեւ առ վաղիւ, երբ ըստ Մաշտոցի օրհնութիւնուն մէջ: Օրհնուած խաղողէն կզիկներ կը տարուին եւ լուսաղբիւրներու եւ խաչքարերու վրայէն կը կախուին, որպէս զի թռչնիկներն ալ անմասն չմնան երկրի այս բարեբերութենէն: Այս օրհնուած խաղողէն կը շինուի բաժկոցու գինին: Նոյնպէս այս օրհնուած խաղողէն կը պահուի տան մէջ մինչեւ ցյաջորդ տարուան Աստուածածնի օրը իբրեւ պիեֆիք:

Իսկ Տաղարանի մէջ լի են գանձեր եւ տաղեր յանուն սուրբ Աստուածածնի, որոց իւրաքանչիւրն ունի իւր անուշ ու ազդեցիկ եղանակն ու իմաստ:

Գեղեցիկ գեղ, գովելի, աննման,  
Վեհ սանար, մախուր, աննման,  
Աննման կոյս Մարիամ, աննման »:

Մէկ ուրիշ եւս.

« Դու լուսեղէն սանար ես,  
Ոսկիապաս խոռան ես,  
Դու մարգարիս անգին ես.  
Ասուածածին, մեղայ քեզ »:

Անթառամն է Աստուածածնի ի զարդ՝ ծաղիկը,

(1) Երզման ձեւ է այս:

### Ի Ա Չ Վ Ե Ր Ա Յ



Գրեթէ երկու հազար տարիներէ ի վեր Խաչին փառքն է որ կը տօնուի: Հայ ժողովուրդն ի սկզբանէ անտի կաթողին փարեցաւ սուրբ Խաչին: Բոլոր հին եւ նոր դուսաններ ամէն դասակարգէ, թէ եկեղեցական եւ թէ աշխարհական, Խաչը երգեցին, Խաչին ի փառս ցնծացան ու բերկրեցան: Սրտեր ամէնուրեք տրոփեցին մանաւանդ աստուածափառ տաճարներու մէջ, ուր Խաչի շարականներն հոգեզմայլ հնչեցան: Արդարեւ յոյժ սրտառուչ է Խաչվերացի արարողութիւնը, վասն զի աշխարհիս չորս կողմերը Խաչով կ'օրհնուին, եւ ժողովուրդն ո՛րքան ըղձակաթ կը նայի Խաչին եւ կ'աղօթէ:

Խաչի յիշատակով ո՛վ չցնցիր եւ չխռովիր, երբ յիշէ իւր մանկութեան ժամանակները, եւ այո՛, յիշէ մեր պապերուն բարեպաշտութիւնը: Տղեկ մը առաջին անգամ երբ սկսէր թոթովել եւ տարուէր դպրոց, քերական մը կը տրուէր, կամ այբուբէնը ցոյց տուող տախտակիկ մը, պնակիկ մը: Այլ այդ քերականին ու տախտակին վրայ խոշոր գրերով դրոշմուած խօսք մը վարժապետը աշակերտին նախ թոթովել տալէ յետոյ՝ «Սուրբ Խաչ, օգնեա՛ ինձ», ապա արտասանել կուտար այբուբէնը: Այսքան կանուխէն հիններն իրենց մանուկներուն սրտին մէջ Խաչը կը դրոշմէին, վասն զի էին կարի սիրահար Խաչին: Ո՛ր Հայ քրիստոնեայն առաւօտուն քունէն արթննալուն, եւ տունէն դուրս ելնելուն պէս զինքը չխաչակնքեր, որ Խաչով փորձութենէ

պահպանուի եւ յաջողութիւն գտնէ նոյն օրը շնորհիւ Խաչին, Իսկ երեկոյին ո՛վ քնանալէ առաջ չխաչակնքեր որ խաղաղութեամբ վայելէ գիշերը: Նոյն ո՛վ չխաչակնքեր գինքը հաց ուտելէ առաջ եւ հաց ուտելէ յետոյ:

Այսպէս ամէն ատեն եւ ամէն տեղ Խաչն է պաշտուած եւ այնքան յաճախ յարգուած, որ խաչապաշտ մակդիրը մերիներն իրենց փառք ու պարծանք համարեցան միշտ:

Ռեհանն է Խաչին ի զարգ՝ ծաղիկը:

Ամէն ուրեք Խաչն է Հայէն սիրուած եւ Խաչն է դրոշմուած եւ Խաչն է երգուած մանաւանդ ուխտաւորութեան ատեն, որ կը վերջանայ այս Խաչվերացի եւ վարազայ Խաչի օրերուն մէջ ձմրան երեսէն: Ամէն Հայ Մայր-վանքերու մէջ ուխտ ընելով գոհանալէ յետոյ՝ կ'երթայ Թուխ-մանուկներու, որք անյիշատակ դարերէ ի վեր մանուկ սուրբեր ըլլալով հանգչած են Խաչքարի ի վեր մանուկ սուրբեր ըլլալով հանգչած են Խաչքարի մը տակ, ալերս ընել ու պաղատել, եւ երբեմն սուրբուրու տակ եւ հանգչել, վասն զի այդ խաչանիչ ծածուերու տակ եւ հանգչել, վասն զի այդ ծածուերուն տակ մեր հիններն ո՛չ ապաքէն հաղարաւոր տարիներէ առաջ համալսելիներն չեն ըրած, եւ մերիներուն դեռ այսօրուան յութիւններ չեն ըրած, եւ մերիներուն միթէ հետք չեն մեր հեթանոսական հին աւանդութիւններուն,

Լուս-աղբիւրներու կամ Խաչ-աղբիւրներու ջրիկէն խմել եւ զովանալ և անդադար երգել, գովասանք ու մաղթանք իրարու խառնելով, ո՛ւր սովորական չէ:

Ո՛չ, կարելի չէ չյուզուիլ, երբ մարդ լսէ այն անուշիկ ձայներն, որք կը միանան ի ձայն սաղի աշուղներուն, որք հոն են, ուր ուխտաւորութիւն կայ, ուր

ուխտատեղի կայ, շէն վանք կայ, հանգավանք կայ,  
Թուխ-մանուկ կայ, Խաչ-աղբիւրիկ կամ Խաչածոր կայ :  
— Հնա՞ր է թուել :

«Խաչ աղբրիկ, Խաչ աղբրիկ,  
Ի՞նչ անուշ է քե պաղ ջրիկ .  
Աջ կողմիդ է ջրջրիկ (1),  
Զախ կողմիդ է ջրվրիկ :

Խաչ աղբրիկ կիգայ կար կար,  
Հոն լոգնողը կ'եղնայ երկար :

Խաչ աղբրկայ ջուրն անուշ է,  
Հաս մի արախ սիրեսու կ'ուզէ :

Ուխտաւորներ, ուխտաւորներ,  
Եկե՛ք տեսե՛ք սուրբ խաչ-հարեր .  
Թուխ-մանուկ խաչ հոն է կայներ,  
Սուրբ ծառին սակ լուսն է ցեթեր :

Սուրբ Թուխ-մանուկ Խաչն է օրհներ .  
Խաչ աղբրկայ ջուրն ու քարեր .  
Լուսն է ցեթեր մեջ աղբրին,  
Կամար կեպտեր վերել գլխին :

Մեռնիմ բրգի Թուխ-մանուկ Խաչ,  
Ղուրպան եղնիմ դրանդ առաջ :

(1) Զրի ակներ, որք ի ձախմէ եւ յաջմէ կը հոսին կը միանան իր  
գրու թաչ աղբիւրի կամ Լուս-աղբիւրի,

Քրիստոս Ասուած, դու ողորմէ,  
Իմ ցաւերը դու բժշկէ .  
Սուրբ Թաղեսոս, դու հիմ դրբիւր (1),  
Թուխ մանուկ ժամ դու եիս շիներ » :

\* \* \*

Վերացման խաչի այս օրը Սուրբ Բարթոլոմէոս  
վանքի մէջ, որ ի Պաշ-քայէ, ի հանդէս կը հանուէր  
Գոմէշը, որպէս Վարդաւառին՝ Փութկի Աքլորը (2) : Այս  
գոմէշն էր ճերմակ, գոմէշապան չունէր, արծակ հա-  
մարծակ ֆէյժին ազատ էր ամէն ցանք ուտելու եւ  
մտնելու գիւղէ գիւղ : Միայն թէ երբ վերադարձուէր  
վանք, թմբուկներով եւ սրինգներով կ'ընդունուէր,  
վրան շուրջառ ձգուած, կոտոշները վառ մեղրամոմե-  
րով զարդարուած, եւ երգելով «Որ վերօրհնիս» Մաղ-  
կաղարդի շարականը : Եթէ մեռնէր, թաղումը հանդի-  
սաւոր կ'ըլլար : Յաջորդը այն գոմէշը կ'ըլլար, որ կը  
յայտնուէր երազի մէջ ծերունի վանականներէն մէկուն,  
եւ վանք կը բերուէր մեծահանգէս, եւ մատաղով կը  
փառաւորուէր, միայն թէ մատաղցուն՝ գոմէշ ըլլալու  
չէր, անոր աղագէն ըլլալու չէր : Այժմ վանականութիւնը  
թող թէ նուիրականը :


\* \* \*

Նաեւ զարմանալին այն է որ մինչ հին սուրբերու՝  
այսինքն մարդարէներու անունով վանք եւ վանակա-

(1) Այն սուրբը՝ որուն անունով մօտակայ Մայր-Վանքը շինուած էր  
յիշատակելն է սովորական : Տեղ տեղ փոփոխ են ըստ բառի եւ տողի այս  
երգերի :

(2) ԼՈՅՍ 1904, Թիւ 30—31

նութիւն կամ ուխտատեղի չկայ, սուրբ Եղիայի անունով բարձր տեղեր ուխտաւորութիւններ կ'ըլլան Խաչի օրերուն, որպիսի է Մշոյ Հիւղի գիւղին մօտ վանք մը, այժմ հանգած, ունի դեռ մատուռ, որոյ տանիքը եօթը տարին անգամ մը տերեւներով կը ծածկուի ինքնին Խաչվերացի օրը, որուն տարեկան ուխտի օրն է: Այս մատուռին մէջ մտնել՝ կիներու արգելուած է, վասն զի այս Սուրբն ալ սուրբ կարապետի պէս՝ ատած է կիները: Որպէս կը պատմուի Ժողովածոյի մէջ, Եղիա արհեստով կօշկակար էր. օր մը կին մը կը փորձէ Եղիայի պարկեշտութիւնը իւր ոտնները մընչեւ ցորունք մօրէմերկ երկարելով. որ կօշիկի չափն առնել տայ Եղիայի եւ պղտորէ անոր ողջախոհութիւնը: Եղիա գուշակելով այս կնիկին խէնէջ նպատակը, իսկոյն կօշիկի գործիքներէն հերիւնը՝ պիղը իւր աչերուն մէջ կը խոթէ եւ կը կուրցնէ զինքը: Կը սարսափին ականատեսք եւ կինը կը խելագարի:



# ԱՌԱՔԵԱԼԻ ՀԱՅՈՅ

## ՔԱԴԵՈՍ

Յիսնակի յաջորդ օրն է « Սըբոց Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԵՈՍԻ և ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ »:

Ծաղկազարդի օրը, ո՞վ չէ լսեր մեր պապերէն ու մամերէն այս սիրուն վէպիկը: Երբ Յիսուս առօք-փառօք Երուսաղէմ կը մտնէր, կին մը արտում-տխուր կը հեկեկար եւ կ'արտասուէր: Հակապատկեր տեսարան, զի այն օր բովանդակ ժողովուրդը ցնծութեան մէջ էր շնորհաւորելով Յիսուսի այս փառայեղ ու շնորհաբեր դարուսան ու մուտքը յերուսաղէմ:

Ինչո՞ւ կուլար այս կինը. — վասն զի ամուլ էր, եւ օրէնքը արգելած էր ամուլներու մասնակցութիւնը այսօրինակ հանդէսներու: «Ա՛հ, կը հեծեծէր այս կինը, ինչո՞ւ ես ալ Իսրայէլի սա կիներուն պէս մանկիկ մը բուռն աստուածային օրհնութեան արժանի չըլլայի »: Կ'երեւի թէ այս կինը կը հաւատար թէ Մեսիան է Յիսուսը, խոստացուած Փրկիչը:

Տէր Յիսուս « Որ նստեալ յէջ եւ յաւանակի իւր մտանէր ի Քաղաքն սուրբ », տեսաւ այս կինը եւ արգահատելով ակնարկեց թաղէի, մեր առաքեալին, որ իսկոյն այդ կնոջ քով վազելով՝ զարկացայտ դիմօք հարցուց թէ ինչո՞ւ կուլայ եւ օրուան ուրախութեան մէջ արամութիւն կը խառնէ:



թէ դրախտի այն հաւելին է որ Նոյի տապանին մէջ առաջին անգամ հաւելիթ մը ածեր է, զոր Նոյ գգուեր, պագեր ու փայփայեր, ծոցիկն է դրեր, եւ անա այս հաւելիթէն ծներ է ժփի մը, խատուտիկ, սիրունիկ, պըտըտիկ, որ լեզու է ելեր, աւետեր է Նոյի. «Քրիստոս յարեալ» : Նոյ ցնծացեր եւ խելայեղ եղեր եւ անուն է դրեր այդ ժփին — ԶԱՏԻԿ, իբր Աստուծոյ մէկ գաւտուրքը, շնորհքը, իրեն եւ իրեններուն համար գաւտուրք մէկ աւանդ ու յիշատակ :

Բայց Բարթոլոմէի ի՞նչ որ այդ ժփին առեր բերեր է : Աղուեսագիրք կը պնդէ թէ այդ ժփին էր անձոռնի մէկ ճանճիկ, անողորմ եւ անգութ, որ բարկացած ըլլալով Աստուծոյ թէ ինչո՞ւ այսքան տգեղ ու զազիր ստեղծեր է զինքը, խայթոցը սրեր շտկեր ու աւեր կը գործէ եղեր, կը խայթէ մարդ ու անասուն, այնպէս որ ա՛լ մարդիկ ճարահատած՝ այդ ճանճիկը գո՞ ընելու համար, անոր արձանը կը շինեն, կը տնկեն ու կը պաշտեն : Չէ՞ք հաւատար, կարդացէք Սուրբ Գիւրքը, ուր գրուած է. «Եւ անկաւ Ոքողիա ի վանդակապատէ վերնատանն իւրոյ ի Սամարիա եւ խօթացաւ : Եւ առաքեաց հրեշտակս եւ ասէ ցնոսա. «Երթայք հարցէք ի Բահաղ զճանճիկ Աստուածն Ակկարոնի, թէ ապրիցե՞մ ես յախտէ աստի յայսմանէ» (Թագ. Ա. 2—4) :

Այլ յի՞տոյ. — Ճանճիկը, մարդերու անշնորհք պատիւներէն սոնքացած, ա՛լ աւելի կը չարանայ եւ անա որ մը կը տեսնէ որ արեւը կէս օրին կը խաւարի եւ լուսինը արտում տխուր կ'երեւի, խոր եւ անաւոր լուսութիւն մը տիրեր է ամէն ուրեք. կը տեսնէ որ մարդ մը, ողորմուկ, խեղճուկ, խաչուած ու անարգուած կը կողկողի կը մարմրի, այլ լուսերով չըջապատուած, կը կռա-

նէ թէ մի՛ գուցէ ան ըլլայ, Մեսիան, կուռքերու կործանիչը : Ճանճիկը կը կատղի, կը զայրանայ, կը սրէ կնճիթը, թեւտարած կը սուրայ, վեր կը բարձրանայ, կը թուչտի խաչին շուրջ, որ միտէ խօթէ կնճիթը, թունոտ կնճիթը Անոր ձակախն՝ որ դեռ կ'ապրէր, այլ ի զուր : Կուռնելիէ հարիւրապետ չթողուր, տիգով իջն իջն ընելով կը վռնտէ զինքը, որ կը կատղի կը խօթէ կնճիթը միւս աչքը Կուռնելիոսի որ արդէն միականի էր, կը խլէ անոր այդ միակ բաց աչքը : Այլ դարմանք, հարիւրապետը կատղած՝ կոյրկոյրայն երբ կը տատանէր տէգը, որ այդ ճանճէն լուծէ վրէժը, րասք կուգայ տէգը Յիսուսի կողին եւ անա արիւն կը ցայտէ ճիշդ հարիւրապետի այն աչերուն, որք կուրցած էին եւ կը բացուին իսկոյն հրաշափառապէս : Ժփին դողանար կ'երերտկայ, կը սթափի այս հրաշքէն, սիրտ կ'ընէ, թեւերը կը բանայ, կը սուրայ եւ Յիսուսի կողի արիւնէն պտիկ մը սիրտ կ'ընէ խմել, եւ անա կը կերպարանափոխի եւ ձէնիկ մը խաչէն կը լսէ, անուշիկ սա ձէնիկը. «Զարգն ըլլաս գերեզմանիս. գունովդ ու լուսովդ ԶԱՏԻԿ, մէկ հատիկ գաւտիկ զարդ» :

Այն օրէն ի վեր այդ ճանճիկն ամէն Զատիկ մութն ի լուսուն կ'երեւի եւ կը թուչտի թուփէ թուփ, խոտէ խոտ, տերեւէ տերեւ, լոյսիկ արեւելով շուրջն ու մօտը, եւ մերկններէ կը բռնուի, կը պագնուի եւ ազատ կ'արձակուի, որ աւետիս տանի սիրականներու որք սրտի մօտ այլ աչքէ հեռի կ'ապրին, թէ «Քրիստոս յարեալ» . եւ երբ այդ սիրականները տեսնեն զինքը, յիշեն զիրենք եւ իրեն ձայնակցին թէ «Յարեալ Քրիստոս» :

Այս է մեր Զատիկ-ճանճիկը, սիրունիկը, խատուտիկը, պըտըտիկը, Բարթոլոմէի հեճիցիկը, մեր մանրիկներուն ու մամիկներուն աչքի-լուսիկը, Զատիկուան աչքի-լուսիկը :

### ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐ

Գեկանմբերի մէջ կը տօնուի այս Սուրբը, որ թէեւ Մծբին Ասորի քաղաքի մը եպիսկոպոս եղած է, այլ Լուսաւորչի ազգական ըլլալով՝ հայ ծնած եւ հայ ապրած եւ աւելի ես հայերուս մէջ կը եւմուտք ունենալուն համար մնբխներէն եղած ու մերիննեուն պէս մեր մէջ միշտ մեծահամբաւ հրաշագործ հայ սուրբ եղած է:

Թաղէոս-Բարթողիմէոս առաքեալներէն յետոյ ձմբան սուրբերուն մէջ ամենէն նշանաւորն է սա, մանաւանդ որ իւր անունով պահք ալ ունի, որ Աստուածայայտնութեան քառասնորեայ պահքին մէկ մասն է: Վանսղի Հայ եկեղեցին միւս քրիստոնեայ եկեղեցիներուն պէս թէեւ տարեկան երկու քառասնորեայ պահք ունի, մին յանուն սուրբ Զատիի եւ միւսն Աստուածայայտնութեան, այլ ի դիւրութիւն պահեցողութեան՝ մեր եկեղեցին Աստուածայայտնութեան պահքը եօթնեակներու բաժնած է, որոց մին է այս սուրբ Յակորինը<sup>(1)</sup>:

Թէ այսօր եւ թէ Յիսնակի օրը սովորական են մեր մէջ մատաղներ, որոց հետ եւ հերիսան՝ փշկիկը. պարաւորներ եւ նուագաւորներ կը վիտան մանաւանդ սոված փորեր, որոց համար կ'երգուի.

«Եկան նսան կոնակիին պասին,  
Որ կերան, որ դրին ի գօշին»:

(1) Ուն են այս եօթնեակ. Եղիական, Լուսաւորչի, Վարդավառի, Վերափոխման, Խաչվերացի, Վարդայ խաչի, Յիսնակի եւ սուրբ Յակորի պահք եւ հինգական օրէն բառասուն օր, որոց աւաչին չորսին կ'ըսուի Ամբան պահք եւ միւս չորսին Ձմբան պահք:

Վանսղի սովորութիւն է որ շատեր իրենց մէջքը փայտէ դգալ դբած եւ ափսէ-սանսն ի ձեռին թէ դբգալով մատաղէն կ'ուտեն եւ թէ ափսէով մատաղէն կը կը հափափեն, կ'առնեն կը քալեն:

Բայց սուրբ Յակոր նշանաւոր է իւր մօրուքովը: Կը պատմուի թէ օր մը սուրբ Յակոր կը ծաղրուի քանի մը աղջիկներէ, որք լախ կը լուային աղբիւրի մը քով: Կը բարկանայ Սուրբը ու կ'անիծէ որ անոնց մաղերը ձերմկին: Աղջիկները սարսափահար եղած տեսներով որ իրենց մաղերը ձերմկած են, ամօթահար, լալազին կ'աղաղակեն. «Հայր սուրբ, հայր, ի՞նչ պիտի ըլլայ մեր հալը»: Մեծապէս կը խղճահարի Սուրբը եւ առ սաստիկ արտմութեան լեռն ի վեր կը քայլէ, կը քայլէ ու կը քայլէ, այլ միշտ լսելով սա ողորմուկ հեկեկը, սա սրտածմիրկ հեծեծը. «Հայր սուրբ, հայր, ի՞նչ պիտի ըլլայ մեր հալը»:

Ուր ուրեմն Սուրբը ձարահատած արտասուալի աչօք ծունր կը դնէ, բաղկատարած վեր կը նայի. «Տէր իմ, Տէ՛ր, ես մեղայ, ծանր պատիժ տալով անոնց. դիժա՛ Տէ՛ր, այս աղջիկներուն, ե որպէս զի ծածկուի անոնց մաղերնուն ձերմկութիւնը. շնորհք մը Տէ՛ր իմ: Տէ՛ր, շնորհք մը կը խնդրեմ. ամէն անգամ որ մօրուքս թոթուեմ, թո՛ղ բովանդակ աշխարհս ձերմկի, ձիւնով ձերմկի»:

Եւ ձայն մը երկնքէն. «Եղիցի»:

Այն օրէն մինչեւ ցայսօր երկինք կը ձիւնէ, երբ սուրբ Յակոր իւր մօրուքը կը թոթուէ ձիւնդ այն օրը որ այդ աղջիկներուն համար, աղօթած էր, զորս ցայսօր կը յիշէ ժողովուրդը շնորհապարտութեամբ, հաւատալով թէ անոնց շնորհիւ բարերար ձիւնով կ'օրհնուի դեռ տակաւին իրենց հողն ու արար:

## Մ Ա Տ Ա Ղ

Շատ հին, հեթանոսական օրերէ ի վեր մեր մէջ մատաղը հաստատուած և շարունակուած է: Մատաղն աւելի յաճախ ձմրան մէջ կը կատարուի և շատ անգամ իրմէն անբաժան է հերիսան (հեշկիֆ): Լուսաւորիչ վարդավառի հետ նուիրագործեց մատաղը, մանաւանդ երբ լսեց ի մասին ապրուստի անոնց տրտունջն՝ որք հեթանոսութենէ և քրմութենէ քրիստոնէացած և քահանայացած էին: Որպէս կը գրէ Ներսէս Շնորհալի. «Գըրեալ է ի կանոնական գիրք սրբոյն Սահակայ հայրապետին, եթէ յետ դառնալոյ Հայոց ի կռոց մոլորութենէ յԱստուածածանութիւն ի ձեռն սրբոյն Գրիգորի, եկեալ առաջի նորա քուրմին հաւատացեալ և ասեն, եթէ «ի հեթանոսութեանն ի պիղծ դոհից անտի ունէաք զկերակրելն մեզ և որդւոց մերոց. արդ՝ յայսմ՝ հետէ հրամայեացէ տէրութիւն ձեր զպատճառ կենաց մերոց թէ որ՞ով ապրեսցուք»: Եւ նա սահմանեաց, նոցա տալ տասանորդ յամենայնէ, որպէս Ղեւտացոց քահանայոցն ի հուռն: Եւ հրահայեաց ժողովրդեանն զի փոխանակ մեռելոտի կռոցն նուիրաց, զոր մատուցանէին յառաջագոյն, նուիրեսցին միոյն Աստուծոյ նուէրս յանբանից կենդանեաց զենեամբ, օրհնութեամբ աղիւ, խառնելով ի Զատիկի յարութեան Տեառն և յիւրաքանչիւր տօնս տէրունականս և յերեւելի սրբոցն, ի յիշատակ ննջեցելոցն ի Գրիստոս, իրրեւ զտուրս ողորմութեան ի կերակուր աղքատաց քաղցելոց՝ յանուն նոցա: Եւ ի զենկեաց

անտի օրինադրեաց տալ հաւատացելոց քրմացն մատուռն, ոչ միայն զոր այժմս տան մորթի և երի, նա եւ այլ եւս յոլովագոյնս, որ խափանեալ է յայժմուս ի աղքատութենէ և ի ժլատութենէ տուողացն: Եւ զորդիս նոցա ետ յուսումն քրիստոնէութեան լինել քահանայս և ժառանգս եկեղեցւոյ և կեալ ընծայիւք ժողովրդեան: Արդ պատճառ մերոյ մատաղ առնելոյ և թէ երբ և յ՞ուրմէ օրինադրեցաւ, այս է ստուգութեամբ, զոր գրեցաք» (1):

Բայց մատաղ ընելու համար որոշ ժամանակներ կային: Միայն տէրունական և նշանաւոր սուրբերու տօնական օրերու մէջ չէին կատարուեր մատաղներ: Հայերն մատաղ կ'ընէին, եթէ զաւակ ունենային և երախտային մկրտութեան օրը ձուագեղին հետ մատաղ կ'ուտէին: Հայք մատաղ կ'ընէին, եթէ տուն չ'ընէին և նորակերտ տան դռան առջեւ մատաղը կը մորթէին, թող որ տան մը հիմնարկէքը մատաղով կը կատարէին: Հայերն մատաղ կ'ընէին եթէ հարսնիք ունենային, և միշտ հաւիկ մը և կամ առաւել եւս աքլորիկ մը ոչ լսարին հետ կը մորթէին և հարսն ու փեսայ իրարու ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ կը փոփոային, զի խիպն ու ամօթ թոյլ չէր տար անոնց պսակէ առաջ իրարու հետ խօսիլ:

«Շնորհաւոր, զնորհաւոր,  
վկայ մեր ախոր.  
Աստուծոյ զուրպան,  
Շնորհաւոր մեր սան»:

(1) Ներսէս Շնորհալիի Թուղթ ի Միջագետս:

Մատաղն երբեմն Հայոց մէջ ուրիշ բան չէր, եթէ ոչ հոգեւորին հետ խառնուած մարմնաւոր խրախճանութիւն կամ կերուխում, Մատաղն իրարու քով կը բերէր Հայ եկեղեցականն ու պաշտօնեայն, այն է վարդապետ ու քահանայ եւ դպիր, հարուստն ու աղքատ, խըմբովին խառն մեծ ու պզտիկ, մանչ ու աղջիկ անխտիր կը նստէին, օրհնութիւններ եւ բարեմաղթութիւններ նախ կ'սկսէին օղիի գաւաթներով, առ տանուտէրն, որոյ մատաղին կը մասնակցէին գողգողալով:

«Շէն կեցիր ժէն, սնովդ սեղով,  
Ապրիս դու միտս նետով պետով.  
Ուխտդ ընդունական,  
Լոյսդ անմահական»:

Իսկ տանուտէրն ու բախտութեանէն զգլխած՝ կը պատասխանէր.

«Բարով վայիւհ, հազար բարով,  
Շէն կեանք դուք նետով պետով.  
Լոյս Լուսաւորչին,  
Հաւատք Բրիտանիան»:

Կը ձայնեն դպիրք.

«Ամեն. եղիցի, եղիցի» (1):

Այլ աննկարագրելի է այն անսահման ուրախութիւնն, երբ ի սեղան կը դրուի մատաղը: Յայնժամ կ'սկսի գինին կատարել իւր պաշտօն. բաժակներ կը

(1) Տեղ տեղ տարբեր են այս ասացումներ, եւ երբեք միօրինակ չեն:

պրպջան, աչեր կը սեւեւին դէպ ի տխրացուներն, վասըն զի նոցա բաժինն է երգել այն սուրբի շարական, որոյ տօնի օրն է մորթուած մատաղը. եթէ այսպէս չէ, այլ օրն է կիրակի, դպիրներ կ'եղանակեն այն շարականն, որոյ մէջ յիշուած սուրբի անունը կը կրէ տանուտէրը կամ նորա սիրականներէն մին. բայց ընդհանրապէս սուրբ կարապետի կամ Լուսաւորչի շարականներն առաւել յաճախ կ'երգուին, եթէ օրն է տէրունի:

Բայց մատաղին միայն կենդանի Հայերն չեն մասնակցիր, հոգիներ՝ որք աշխարհէս մեկնած են, հեղհեղատէ մի առ մի կը յիշուին՝ պապա, տատեր եւ մամեր բարեմաղթու բերաններէ անդադար կը յեղյեղուին, կը յիշատակուին նոցա գործերն ու խօսքեր:

Նախնիք մատաղ կը մորթէին, սակայն միտը հում հում աղքատներու չէին բաժներ, այլ մատաղը խալկինի մէջ եփելով քրիստոնէական խոնարհութեամբ աղքատ ու հարուստ, պաշտօնեաներն եկեղեցոյ հաւասարապէս կը բաղմէին իրարու քով եւ կը փառաբանէին:

Սեղանէն յետոյ կոնք բերուելով իւրաքանչիւր բազմական կը լուայ իր ձեռներ, որուն տանուտէրը կը մաղթէր «Մարտական», իսկ լուացուողն կը պատասխանէր. «Հաւասարական»: Ահա այսքան պարկեշտ ու բարոյալի էին մատաղներու հանդէսք. ոչ մի լպիրշ խօսք կամ լիտի գործ լսուիլ կամ տեղի ունենալ կարելի չէր, զի պատկասանքն ու սպիտակափառ սիրք կը նախագահէին միշտ այս հանդէսներուն:

Մատաղի սկզբնաւորութիւններն փառաւոր էին: Մատաղցու եղնուկն ու ոչխարիկ եւ կամ ուլիկ գոյն-զգոյն կը ներկուէին, որոյ պարանոցէն բոժոժներ կը կախնն, եւ եղջիւրները գոյնզգոյն երիզներով կը զար-

գարեն և անոնց ծայրերուն վրայ կը տնկէին վառ մեղ-  
րամոմեր. թող որ շատ անգամ շուրջառ եւս կը ձգէին  
մատաղցու անասունին վրայ (1), երգելով ու պարելով  
եւ մանաւանդ Մաղկազարդի շարականն «Որ վերօրն-  
նիս» եղանակելով. յետոյ թափոր կաղմելով առաջնոր-  
դութեամբ քահանայի և տիրացուներու, կ'երթան ի  
վանք եւ հոն կիրակամտի երեկոյն, ոչ ի ցերեկի, զի  
պիղծ է այն, ըստ Մաշտոցի, աղն ու մատաղ օրհնել  
տալով կը մօրթեն, կ'եփեն եւ խաղկինին շուրջ պարե-  
լով կ'երգեն անոնց հաստ (2):

«Սուրբ Կարապետ կարմիր խաչեր,  
Մասաղ կ'ընեն կտրին մանչեր.  
Այգն արեւուն սա՛հ բարեւ,  
Լուսաւորչի սանճ բարեւ.  
Արեւ սուրբ Լուսաւորչին,  
Մասաղ սուրբ Կարապետին»:

Բայց մատաղին ուրիշ օր մը եւս կայ, չա՛ր օր,  
վա՛յ այն մամին կամ պապին, եթէ գէշ երազ մը տես-  
նէ: Դուռ ու դրկից ի խորհուրդ կը կոչուին, եւ հուսկ  
ուրեմն երազատեսն բազկատարած կը բարբառի.

«Անձիւնն ծնանի,  
Անլին լնանի,  
Չարն խափանի.  
Հաւիկն եղնի  
Մասաղ Անմահի»:

Անմիջապէս հաւ մը կամ աքաղաղ մը երազատեսն

(1) Մատաղցու անասունն էր շատ անգամ կանուխէն ուխտուած եւ  
պարօրտուածանը հոգ տարուած ու պահուած:

(2) Անգիր Դպրութիւն եւ Առակք. յԵրես Թ-Ժ:

առնելով կը տանի քահանային. որ յետ օրհնութեան  
կը մօրթէ, այլ սակայն այս մատաղն այնքան հանդի-  
սաւոր չկատարուիր, այլ պարզօրէն, եւ լուր օրերու  
մէջ, որպէս զի Կաղ-գըողը չկատարի:

Մատաղներն յաճախակի էին մանաւանդ տէրունի  
ակում օրերու մէջ, մինչ զի թաղի մը կամ գիւղի մը  
մէջ շատ անգամ եօթնէն տասը մատաղներ կը պատա-  
հին եւ քահանաներն պարտական են այդ մատաղնե-  
րուն կարգաւ մասնակցիլ եւ ամենուն սեղանակից ըլ-  
լալ, եւ ժամուց առնուլ «Հոգւոց» ըսելով: Կերեւի  
թէ մատաղի այս օրինակ մասնակցութենէն ծնունդ ա-  
ռած ու ամէն ուրեք տարածուած է սա զրոյց թէ  
«Տէրտէրներն եօթը փոր ունին»:

Բայց որովհետեւ մատաղներուն ամենէն բարելին  
ու բերկրալին է հարսանեկանը. ուստի երբ աշուղք  
իրենց սրտի խորերուն խորախոր խորշիկները կը քըր-  
քըրեն ու կը քերեն, եւ իրենց հանձարին հզօրագոյն  
թափն ի հանդէս հանելով՝ ի դիմաց հարսին ու փեսին,  
քաւորին եւ հարսնետոմարու իւրաքանչիւրին զատ զատ  
յականէ յանուանէ խօսք եւ գովք կը փոխանակեն, եւ  
իրենք եւս ծափով եւ ծիծաղով կ'ողջունուին, յայն-  
ժամ հարսնարան ու սրսկապան թող արձագանգեն սա  
խմ հազներդ հոգագիս, ձէնիկիս.

### ՓԵՍԱՅՆ ՅՋԱԲՈՆ (1)

«Թէ դու նեկսար ես անուակ,  
Սրսիկս քոզ եղնի ֆեզ բաժակ,  
Ո՛վ սրսիս սիրական,  
Հոգուս սիրական»:

(1) Մասիս 1904 4, Թիւ 40:

## ՀԱՐՈՆ ՅՓԵՍՏԵՆ

Թե արհիկդ եղնի ինն բաժակ,  
 Սիրածուան ո՞վ եղնի ծորակ,  
 Ո՞վ արհս սիրական,  
 Հոգուս սիրական » :

## ՀԱՐՍՆԵՒՈՐՔ

Սիրածուան բաժակի նեկսարին,  
 Սիրածուան նեկսարի բաժակին,  
 Ծորակ քոյ եղնին օրքներն ամոլին,  
 Թագուր - Թագուկին » :

*Ահա այս թող ըլլայ իմ հեկսիյիկս սիրակցորդ ամու-  
 լին, արուս պարող ու սաղող ազապսերուն եւ դրա-  
 սանգս առագաստարանին սրբութեան :*

Վ Ե Ր Զ




4

«Ազգային գրադարան»



NL0372168

58492



891.99

S-46